


891.99

9-51



6 NOV 2011

ՄԱՊԱՌ ՌԵՏՐՈՍՅԱԼ

# ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ



19 ՄԱՌԵԼԱԿՍԻ  
ԲԻՆԵԼԻՍ 35 Բ.

891.99  
7-51

891.99  
7-50

✓  
ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

4804  
1010  
98514  
0101

135



Ս Ա Թ Ե Լ Գ Ա Մ Ի

Թ Ի Ք Ի Խ

1985



18 JUL 2015

50782

# ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

I

## ԻՄ ՍԻՐՏԸ

Մի առավոտ, յերբ մեր սարերում արդեն նարգիզն ու մեխակը բացվել էյին, ընկել էյի ծաղիկների մեջ ու թիթեռնիկի պես ուրախուրախ թռչկոտում էյի: Մեկ էլ հանկարծ զգացի ինչ-վոր բարախումներ կրծքիս տակ. ձեռքս ամուր սեղմած սրտիս, վազեցի մորս մաս:

— Ես ի՞նչ ա թրպրտում, նանի ջան, — ասի յես ու վախեցած նայեցի մորս:

— Մի սերճն ծիտիկ ա մտել քո կուրծքը, բալաս, — ասաց իմ նանը ու ամուր-ամուր համբուրեց աչքերս:

Յես ձեռքս կարոտով սեղմեցի կրծքիս, վոր ավելի ու ավելի զգամ եղ բարախումները ու կարոտս առնեմ իմ փոքրիկ թռչնակից:

— Նանի, բա վոր նա բերանիցս դուրս դա ու թռչի, — մանկական անմեղությամբ գիմեցի մորս:

— Հա, վոր թռչի, դու էլ կթռչես, — ասաց իմ նանը ու կարծես տխրեց:

Նրա տխրությունն ազդեց ինձ վրա էլ. ընկա նրա վզովը:

— Նանի ջան, յես չեմ թողնի, վոր նա թռչի, բողազս ենպես հուպ կտամ... ենպես դայիմ, — ասացի յես ու աչքերս լցվեցին արցունքներով:

Մայրս սեղմեց ինձ իր կրծքին ու ինչ-վոր անհասկանալի բառեր եր մրմնջում. որհնում եր ինձ, թե՞ աղոթում, — չիմացա:

Պատ. խմբագիր՝ Վ. ԱՏՐՅԱՆ  
Տեխ. խմբագիր } Գ. Բարուրյան  
Սրբադրիչ

Типогр. изд. газ. „Коммунисти“, Ул. Камо, 68.  
Главлит А-2665      Заказ № 2831      Тираж 2000

Յեա իմ թույլ բազուկներովս զարվել եյի նրա վզովն ու մի սկոթիկէ շերմությունս եյի զգում նրա գրկում: Թվում եր, վոր նանը ամեն ինչ գիտե, վոր եղ թուչունն ել նա յե պահել իմ կրծքում ու մեզ յերկուսիս ել խնամողը նանն ե. վոր նանը չլինի, մենք յերկուսս ել կմեռնենք. դրա համար ամենից շատ նանին եյի սիրում իմ մանուկ որերում:

Յեղբայրս՝ Արտեմը, վոր մի 4—5 տարով մեծ եր ինձանից, անտառից մի կողով մոռ բերից: Մենք մրգով յեղանք. բուռ-բուռ լցնում եյինք բերաններս. ենքան համեղ եր, ենքան համեղ, վոր մոռացել եյի իմ թուչնակին. յերբ վերջին բուռն ել բերանս առա, նոր հիշեցի... Ձեռքս զրի կրծքիս, ու ինձ թվաց, վոր նա թուել ե... Աչքերս մթնեցին, ծնկներս գողում եյինս...

— Վնյ, նանի ջան, — ասի յես ու լեղապատառ վրա ընկա մորս և գողողալով, հազիվ լսելի մրմնջացի. — ծիտը թուել ան...

Նանը լի կրծքով ծիծաղեց ու ասաց.

— Ծիտը քնել ա, բալաս, մի քիչ վազվզի, տես վոնց ա ծուլ-ծուլ ըլում...

Իսկույն թոռ դուրս, ձեռքս սեղմեցի կրծքիս ու սկսեցի վազվզել...

— Չան, ինչ լավն ես, — ասացի յես ու ավելի ու ավելի սկսեցի թուչկոտալ...

Նանը հեռվից նայում եր ու հրճվում իմ մանկական անմեղության վրա:

— Տեսմը, — ասաց նա ժպտերես:

— Տեսա, տեսա, նանի ջան, — ասացի յես ու վաղեցի ընկա նրա գիրկը:

Եղ ծախ պատմությունը մտքիցս չեք հեռանում, առավոտները հենց արթնանում եյի թե չե, վազում եյի մեր «ուրթի» յետևի կանաչ մարգագետինները, վազվզում, սեղմում եյի կուրծքս ու աղբում իմ ամենայերջանիկ վայրկյանները... Մի որ նորից ընկա մորս ջանին.

— Նանի, ես ծիտը վճրակեցի ես բռնիք:

— Ծիտը... ծիտը, — կմկմաց ու մոլորվեց նանը. — եղ ծախ նաղը շատ ա դժար...

— Ինչի՞ ա դժար, նանի ջան, — աղերսանքով նայեցի յես մորս...

— Հն... միտս ընկալ, — ասաց նանը ու սկսեց մի յերկար հեքյաթ, վորից իմ մեջ տալովորով ե կաքանք.

— Կարմիր կտուցով, դեղին վոտիկներով, չալթիկ թեվերով մի նախշուն, կնգոշտուրիկ ծխիկ... աչքերը քու աչքերի պես հղբիկ... վիզը եղպես բարակ, թուալ, յեկալ կանգնեց եղ քո ուսին:

Նանը ծիծաղում եր, խկ յես մանկական հետաքրքրությամբ լսում եյի:

— Ըժժում, — անհամբեր հարցրի յես:

— Հա, թեքը թափահարեց, կտուցը բաց ու խուփաբալ, յերգեց, յերգեց, ծվլաց, ծվլաց, լաց յեղալ ու ասաց.

— Յեա Մազնի սիրտը պիտի մանեմ... վոր չմանեմ, կմեռնեմ...

— Կարալ չեմ, — ասի յես վախեցած, — թողուլ չեմ, վոր դու իմ Մազնի սիրտը դառնաս...

— Ծիտը եղ իմ խոսքերի վրա տխրեց—տխրեց, լաց ելալ ու ուզում եր թուչել... Մին ել են տեսնամ, դու բերանդ բաց արիք ու բեղավիլի կուլ տվիր, — ասաց նանն ու քնքշությամբ համբուրեց ինձ:

Յես ձեռքս կամաց տարա դրի սրախ վրա... Չան, ասացի յես իմ մտքում ու եղ որվանից շատ չեյի վազվզում, վոր ծիտիկս չհոգնի:

Մի որ նանին մոտեցա ու վախվխելով հարցրի.

— Նանի ջան, ասի, ինչ կլի մի անգամ նայեմ, տեսնեմ իմ ծիտիկին, կտուցը համբուրեմ, համբուրեմ, ենքան վոր սիրտս հովանա... Յարար ի՞նչ կլինի, վոր ծիտը բերանիցս դուրս գա, տեսնեմ ի՞նչ թավուր ա, մտիկ տամ ու ելի կուլ տամ...

— Շաշ տղա, — ասաց նանը, — եղ ծիտը, վոր մին դուրս թուալ, ել ալամ աշխարհը վրա գա, կարալ չի բռնիլ... Եղ որվանից յես ել ծախ մասին նանի հետ չեյի խոսում:

Յերբ ուշքի յեկա, յոթ տարեկան եյի, են ժամանակ

նոր իմացա, վոր են ծխաը կրծքիս տակ պահած իմ սիրտն  
և, վոր հուզվում, հրճվում, ուրախանում ե իմ ապրումներով:

Սյլ ևս ամեն անգամ աջ ձեռքս չեյի տանում դնու  
կրծքիս վրա, զգում եյի նրա բարախումներն ամեն մի դար-  
կը և դա բավական եր ինձ. յես ինձ վերին աստիճանի ու-  
րախ եյի զգում...

Հիշում եմ, մի անգամ, մեր ձին նստած, սարն եյի զը-  
նում. ինձ հետ եյին մեր գյուղացիներից շատերը, վորը վո-  
տով, վորը ձիով: Վոտով զնացող գյուղացիներն էլ մեկը ջեր-  
մում եր, մնացել եր յետ ու հազիվ եր շարժում վոտքերը:

Յերը նայեցի նրա տանջված դեմքին, սիրտս ճմլվեց-  
խակույն ձիուցս վեր թոս, սանձը մեկնեցի նրան, ամոթխած  
հայացքով նայեցի ու հազիվ լսելի ասացի.

— Առ, Ուհաննես քեռի, դու վեր ի՛լ իմ ձիուն, յես վո-  
տով կգնամ:

Հիվանդը զարմացած նայեց ինձ, կարծես չէր հավա-  
տում իմ ասածներին. յես նորից կրկնեցի.

— Առաջներս մենձ գիր ա, ճամբեն ել ցելի, դու վո-  
տով կարալ չես գնալ, բալա ջան, — ասաց ու շարունակեց  
իր ճամբան:

— Կարամ, կարամ, — ասացի յես և ձիու սանձը նրան  
տալով, թեթև քայլերով անցա առաջ:

— Հրա տեհեք, հրա տեհեք եդ գյադին, — խոսեցին ևս  
ու են կողմից ձիաների վրա նստած գյուղացիներն ու խեթ-  
խեթ նայեցին ինձ:

Յես ուղարկություն չգարձնելով նրանց, ուժերս հավա-  
քեցի. քայլում եյի ամենից առաջ ու զգում եյի, թե ինչպես  
ե սիրտս յերջանիկ բարախում...

Յերը ստրը հասանք, հիվանդը ձիուց իջավ, մոտեցավ  
ինձ, ճակատս համբուրեց ու ասաց.

— Ձիդ առ, բալա ջան, քո արած լավությունն ամ-  
բողջ կյանքումս չեմ մոռանալ: Քու նախին շատ բարով արա:

Նա թամբը ամբացրեց ու ոգնեց ինձ, վոր յես նստեմ  
ձիուն. յերկար ու սիրալիբ նայում եր ինձ, կարծես չէր ու-

զում բաժանվել. ապա սանձը ձիու գլխովը քաշեց, տվեց  
ինձ ու ամուր սեղմեց ձեռքս:

— Գնաս բարով, Մադի ջան, — ասաց նա ու մեր ճա-  
նապարհները ջոկվեցին:

Յերը հասա մեր ուրթը, նանս ընդառաջ յեկավ:

— Եդ ի՞նչ ա քու ուսնդը, — վայելեցած հարցրեց նա:

Յերևի գույնս թուել ե, մտածեցի յես ու աշխատեցի  
հանդստացնել մորս:

— Բան չկա, նանի ջան, տիւղբիցը չկել մեր սարը վո-  
տով եմ յեկել. բեղարել եմ:

Նանը լըլըոցն ընկավ. թասը մածնով լցրեց, վրան ա-  
բաժան անեց, դրեց առաջս ու ձեռքը ճակատիս դնելով  
հարցրեց.

— Ո՛վ գիդա, եդ անտեր ձին վեր ա գցել քի...

— Ձե, նանի, ձին յես Ադնոնց Ուհանսին տվի. նա  
հիվանդ եր, կարում չէր դալ... Դե եդ անտեր դեբը, հչկել  
սարի գլուխը ցելի ու բատտախ եր, մեջը մեռա...

Նանը ախո՛ւր-ախո՛ւր նայեց ինձ ու ասաց.

— Խեղձ բալաս, երնեկ եդպես ջիգարով սիրա չունե-  
նայիր...

— Ի՞նչի, նանի, — առանց հասկանալու նրա միտքը,  
հարցրի յես:

— Կեր, կեր մածունը, — բարկացավ նա ինձ վրա. ա-  
պա թասը մոտեցրեց, գդալը տվեց ձեռքս, ախո՛ւր-ախո՛ւր  
նայեց ինձ ու դուրս գնաց...

## II

### ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

Իմ մանկության ամենասիրած վայրերը մեր սարերն  
եյին. Պապի ուրթը, Մրմաձորը, Կոնսվորը, Գողգաղները,  
Չորանբողանը...

Մրանք եյին իմ մանկության վորրանը:

Ամենից շատ սիրում եյի «Կոնսվորը»: Խոր ձորի մեջ

հոսում եր հատակ գետը. նրա ջրերն ենքան պարզ ելին, ենքան վճիտ, վոր յերես, ինչպես հայելում, տեսնում ելի նրա մեջ. հատակի քարերն ենքան պարզ յերևում ելին, վոր կարելի յեր հատ-հատ համարել:

Գետը հսկա ծառերի արմատները քերծելով, անմտաչելի ապառաժներ քարուքանդ անելով, ահագին անդունդներով հոսում եր առաջ. տեղ-տեղ փրփուր կտրած՝ կատաղի վորոտում, ճախը յերկինք եր հասնում, տեղ-տեղ ել հանդարտ, մեղմ վշտով որորվում եր ավերի մեջ, կարծես հանգրստանում, նոր ույժ եր հավաքում, նորից կովելու, նորից մաքառելու անդունդների, ժայռերի ծոցում...

Մեն-մենակ ջրերի ավերին նստած՝ ժամերով նայում ու չելի հագնում. կարծես սիրտս խոսում եր ալիքների հետ ու իմ մանուկ հոգին թռչում եր հեռուն, ինչ վոր մի գյուլթական աշխարհ, անհասկանալի, անըմբռնելի ինձ համար...

Ամենից շատ գրավում եր ինձ եղ գետի ջրվեժը:

Նորը ձորում, բարձր ժայռի գլխից, թափվում եր փլուփլուրդ ջուրը, իսկ ցածը գոյացել եր մի խոր լիճ. դա — մեր, յերեխաներիս համար զվարճության ամենագեղեցիկ վայրն եր: Տավարած, հորթարած, բոլորս տկլորվում, ընկնում ելինք ջրերի մեջ, ապա զխաղաղությամբ սուզվում, լող տալի, թռչում ժայռերից, պահվում ջրերի տակ, դուրս ցատկում, կանգնում, գրկում արևի ջերմ ճառագայթները... Ա՛հ, ի՛նչ սերելի յեր դա, ի՛նչ հրճվանքով ելինք խաղում են հակինթ ջրերում...

Պակաս զվարճություն չեր պատճառում վայրի պտուղներ հավաքելը. ընկնում ելինք ծմակները, մոռ, դարաղաթ, մորի ելինք հավաքում, լցնում ելինք մեր իսկ տեղն ու տեղը հյուսած կողմերը ու հազարերանգ ծաղիկների և կանաչների միջով շտապում ելինք տուն:

Ի՛նչ ուրախություն եր դա, յերբ քույրերս ու յեղբայրներս հավաքվում, ախորժակով ուտում ելին իմ բերած պտուղները:

— Սոված եմ, — ասում ելի յես:

Նանը մածնի սերը քաշում, մի աման լցնում և տալիս եր ինձ...

— Վերտեղից ես քաղել, — հարցնում ելին այս ու այն կողմից:

— Արջու թալալից, — ասում ելի յես հպարտությամբ:

— Բա արջերից վախեցար վնչ:

— Արջն ի՛նչ ա, վոր նրանից վախենամ. շատ-շատ «ստատանամենուկ» կտամ, — ասում ելի յես ինքնավստահ:

Իսկապես շատ անահ յերեխա ելի: Մերում ելի մեն-մենակ բարձրանալ սարերի դաճաթները, աչքերս պղծում ելի հեռու հորիզոնին ու ժամերով մնում ելի կանդնած: Ի՛նչ կլինի ծիտ դառնամ, թռչեմ, — մտածոք ելի յես ու նախանձում զլիսս վերը պատվող թռչուններին...

Շատ անգամ ընկնում ելի ցած, աչքերս պինդ փակում ու զլորվում ելի ծաղիկների մեջ. յերբ աչքերս բաց ելի անում, սարերը, ձորերը պտտվում ելին զլիսս, ինձ թվում եր, վոր յես թռչում եմ հեռու... հեռու...

Ապա հանգստացած, սկսում ելի ծաղիկներ քաղել. ընտրում ելի ամենասիրուն, ամենահոտավետ ծաղիկները:

Ենքան քնքուր, ենքան վառ գույներով ծաղիկներ կային մեր սարերում: Իմ նանն ել եր սիրում ծաղիկներ. իմ փնջերը նա խնամքով պահում եր, իսկ անթառամ ծաղիկները չտրացնում ու հետը բերում եր գյուղ:

Հենց վոր յերկինքը մթնում, ամպերը գոռում ելին, յես վազում ելի մեր ուրթը, թիակն առնում, մաքրում ելի մեր «դաճալի» շուրջը քաշած դաջը, վոր անձրևի ջուրն իր ճամբան առնի ու գնա. ապա չվաններն ու պճիրներն ելի ամրացնում, վոր քամին թաղիք-չաթանը չթուցնի. չի՞ վոր տան յերեխաներից ամենամեծը յես ելի: Մի առանձին վոտան յերեխաներից ամենամեծը յես ելի: Մի առանձին անձրևից ազատություն եր կուռ, են կուռն ելի անում, անձրևից առաջացած ջրերի մեջ բորելի վոտով շրջի-շրջիալի ման ելի դալիս ու կատարում նանիս բոլոր ասածները:

Ամպերի գոռգոռոցը, վորոտն ու փայլակը վոգևորում ելին ինձ ու յես կարծես կովում ելի եղ վիթխարի ույժի:

դեմ, հաղթահարելու մի ներքին ուժ էյի զգում իմ մեջ:

Իսկ նաև եղ ժամանակ լքւթոցն եր ընկնում:

— Վախիլ մի, նանի ջան, —ասում էյի յես մեծ մարդու պես. հորթերը քաշում-տանում կապում էյի, կաթն առնում-տանում դատարկում էյի մեր մեծ չարխի պղնձում, կրակին փայտեր էյի ավելացնում ու նորից նանին ոգնության էյի հասնում:

Ամպերը կատաղի դողողում էյին, ծովյանը խաղում, մի ակնթարթ լուսավորում եր մեր ուրթը, մեր դագան, անձրերը շոշոտին թափվում եր գլխիս:

Մենակ դագայի կրակներն էյին խավարի մեջ սլապը դում, հանդարտ վառվում ու աղոտ լույսը փոռում շուրջը: Յերեխաները վազուց քնել էյին, իսկ յես ու նանը գեռաշխապում էյին:

### III

## Ձ Ր Ա Ղ Ա Ց Ը

Սարից իջանք դաշտ: Կալի աշխատանքներն սկսվել էյին:

Մի առավոտ իմ ապին աղուն սլապաստեց, խուրջինը գցեց ձիու վրա, փորկապն ամրացրեց, վոտիցս բռնեց, բարձրացրեց ձիուն ու ասաց.

— Աղունը տար են մեր սարի ճամբի՝ «Վոսիկ-պառա» ջրի դրաղի ջրագացք, աղա ու բի:

Ամառվա վերջին ամիսն եր, որը շող. ճանձերը խեղդում էյին, ձին վոտին-պոչին եր անում:

Նանը տխրւթախոր նայեց ինձ, ձիուն, աղա դառնալով հորս, կես յերկուղով, կես համարձակ ասաց.

— Ա՛յ մարդ, ես մի մասն ըրելան աղուն աղացող առգում ես ջներոց, գիլերոց ըլի՞...

— Բա ես կալին, կուտին կարամ յես գնալ. աչքաբաց ըրելսա յա, հարցնելով-հարցնելով կգնա, կգանի:

«Աչքաբաց ըրելսա» վոր ասաց, յես թե ու թիկունք

առած՝ հոլարտ-հպարտ նայեցի փոքրիկ յիզբայրներիս, քույրերիս ու ձին քշեցի:

Հենց հասա գյուղի ծայրը, ձին ել ինձ չլսեց, ճամբան ծոց, փոխանակ ջաղաց գնալու, գնաց աղբյուր: Վոչինչ, ասացի յես իմ մոքում, հալբաթ ծարավ ա, դե որը շող ա, աղբյուրի ջուրն ել սառը: Ձին ջուրը խմեց, կանդնեց, մըտածեց, մի անգամ ել ծծեց ու ճամբա ընկավ յես դեպի տուն: Սանձը քաշում էյի, ձեռքիս ճիպոտով խփում վզին, գլխին, չեք լում. գնում եր նորից գյուղ. ճարս կարած, սկսեցի լաց լինել:

Մի գյուղացի յեր անցնում:

— Եղ ի՞նչի յես լաց լինում, այ աղա, — հարցրեց ինձ:

— Աղուն եմ տանում ջաղացը, ձին գնում չի...

Գյուղացին գլխի ընկավ, մոտեցավ սանձը բռնեց, քաշեց ջաղացի ճամբան, մի յերկու անգամ ել հասցրեց ձիուն ու ասաց.

— Դե քլի, բալա ջան, ել յեղ չի դատնալ: Մի լավ ել հայհոյեց իմ հորը, գլուխը շարժեց ու գնաց:

Յես նրա վոչ հորս հայհոյելուցն էյի գոհ, վոչ ձիուս մտրակելուց, բայց արցունքներս սլակելով ասացի.

— Շնորհակալ եմ, բիձա, — ու շարունակեցի ճամբա:

Մինչ մեր գյուղի սահմաններումն էյի, վոչինչ. ձիս հանգիստ գնում եր, յես ել չորս կողմս նայում, հրձվում էյի մեր հանդի տեսարաններով: Մտանք խիտ անտառ, ետեղ արգեն թե ծառերը, թե քար ու քուրջն ենքան ել ինձ հաբազատ չեյին. դիտեյի, վոր մեր սարի ճամբան ե կ դա ինձ հանդատացնում եր:

Անտառից դուրս յիկա. իմ դիմացը բացվեց ընդարձակ մի տարածություն. սա մեր հարևան Այրում գյուղի հանդն եր: Ամենից շատ վախենում էյի եղ գյուղի աղաներից: Մի տեղ ճամբու ափին մի քանի հողի խուրձ էյին կրում:

— Ա՛յ գյաղա, հըր ես գնում եղ թառլան ձիու վրա նոտած, — հարցրին նրանք:

Յես ձիուս ամուր խփեցի ու առանց պատասխանի անցա: Ինչ եր նրանց նպատակը, չհասկացա: Դիչ հետո ձիուս

առաջը կարեցին իմ հասակակից, ջահել տղաներ: Տավա-  
րածներ են, մտածեցի յես, ձեռքս տարա զրպանս, հանեցի  
փայտե կոթով իմ մեծ դանակն ու ամուր բռնեցի:

— Իջիր ձիուցդ, — ասացին նրանք ու սկսեցին շըր-  
ջադատել ինձ:

— Շամբից դուրս, լակոտներ, — գոռացի յես նրանց  
վրա. դանակս բարձրացրի ողում և ձիուս ենպես մարակե-  
ցի, վոր նա թռավ առաջ ու սկսեց վազել: Տղաները հետա-  
պնդեցին ինձ, բայց քիչ հետո հողմերով կանգ առան ու  
սկսեցին հեռվից հայհոյել: Յես ուշադրութեամբ չզարձրի  
նրանց հայհոյանքին, հանդիստ սրտով անցա առաջ...

Շուտով դուրս յեկա Այրումի գյուղահանդից ու հան-  
գատացա:

— Ձան ձի, եղ լակոտներից վոնց աղատեցիր ինձ.  
գու վոր կաս, խսկական թառլան ես... — ու գոլում, գուր-  
գուրում եյի ձիուս, խի նա շտապ-շտապ գնում եր, յերեկ  
գլխեր, վոր վրան նստողը յերեկա յի:

Մտանք Բրդանիսի ձորը, հեռվից լսվում եր ջրերի  
քչքչոցը, քիչ հետո մեր առաջը բացվեց գետի հովիտը: Փոք-  
րիկ ջրվեժներով ազմկում, հոսում եր մեր առաջ գետակը:

Ձիս մի քանի քայլ արավ, կանգնեց գետի մեջտեղը,  
վիզը ծռեց, բերանը կոխեց ջրի մեջ ու սկսեց ծծել: Յես ել  
եյի ծարավ, լեզուս չորացել եր, պոռնոսս այրվել, ջուրն ել  
ձիուս վտոցերի տակ, ենքան պարզ, հատակ ու յես վերեկից  
նայում, նայում, նախանձում եյի ձիուս, վար նա ենքան  
կուշտ խմում ե:

Գետակը մեծ չեր. մի քանի քայլ և ձին անցավ մյուս  
ափը: Աչքերս ջրերից չեյի կարողանում հեռացնել. սանձն  
ամուր քաշեցի, ձիս կանգնեց:

«Ինչ ուզում ա լինի, պիտի վեր դամ ու ես ջրից մի  
կուշտ խմեմ, — ասացի ինքս ինձ ու առանց յերկար մտա-  
ծելու՝ վեր թռա ձիուցս. կոացա, վրա ընկա ջրին ու ձիւս  
իմ ձիու պես սկսեցի ծծել ու հանգստանալ: Ձին կանգնած  
նայում եր ինձ ու համբերութեամբ սպասում: Յերեսս ել մի  
լավ լվացի, թարմացած վոտի կանգնեցի ու ձին քաշեցի յի-

տեկցա: Մի վոքը անցել եյի, մեկ ել տեսա ճամբի զրադին  
մի մեծ քար. քաշեցի եղ քարի տակ ու կանգ առա, ձիս  
կարծես եղ բոլորն զգում եր, մեջքը մոտեցրեց քարին ու  
յես շտա հեշտութեամբ մի վոստյունով քարի վրայից թռա,  
ընկա մեջքին:

Ձին սկսեց արագ գնալ: Արևն արդեն թեքվել եր, յերբ  
հասանք ջրաղացի դուռը:

Ուրախ-ուրախ իջա ձիուց, սանձը կապեցի դռան սյանն  
ու ներս մտա: Յերկու աչքանի ջրաղաց եր, յերկու քարն  
ել միարար վոնդյունով պտտվում եյին: Ներսից ալյուրակո-  
լոր ջաղացպանը ձեռքը դրեց ճակատին ու խիստ-խիստ  
նայեց ինձ:

— Աղուն եմ բերել, բիձա, արի խուրջինը վեր բե-  
րենք:

Ջաղացպանը ծուլորեն տեղից շարժվեց, յես ձին բըռ-  
նեցի, նա խուրջինը վեր բերեց, անքանքալով ներս տարավ  
ու վոտիցս մինչև զլուխս նայելով, հարցրեց.

— Վո՞ր գեղըցի յես, այ բալա:

— Կոթի գեղից եմ, բիձա:

— Ու՞մանցի յես:

— Խեչմանց Ուհանեսի տղա Մադին եմ:

— Հա՛, — արավ նա ու զլուխը շարժեց, — գիղեմ,  
մենակ մարդ ա, դրա հմար ա քի զրգել:

— Հա՛, ասացի յես, — ապին ասավ, վոր շուտով ա-  
ղաս ու ճամբու դնես ինձ:

— Ես գիշեր կաղամ, առավոտը վաղ, ես բաշտի ճամ-  
բա կընկնես:

Պառավ մարդ եր եղ ջաղացպանը. գլխի մազերը, քի-  
թը, բերանը, միջուքն ալրում կորած: Նստեց պատի տակ  
ու ինչ-վոր բան եր լմմում:

Յես ել իմ պաշարի «հարկեն» բաց արի, մի նագուք,  
մի կոոր պանիր, մի քիչ տանձ ու խնձոր փեշս լցրի տա-  
րա ջաղացպանին:

— Ա՛ո, բիձա, ես քու փայն ա, — ասացի յես ու  
զարտեցի նրա առաջ:

— Զաղացպանին հաց չեն տալ, քե մատաղ. դե վոր բերել ես, յերկան արև ըլիս, իմ տարսը դառնաս: Ին բերանումս ատամ չի մնացել, են ա իմ թոռնիկներին կտամ, — ասաց նա, խնամքով աղլուխում կապեց ու դրեց պատի թարեքին:

— Դու թոռներ ունես, բիճա:

— Հա, քի պես, մի յերեք-չորս պուճրիկ ըրելներք են:

— Դե, առ ես կամփետներն ել նրանց տուր, — մեկնեցի մորս աված ծիմծիմավոր կամփետները:

— Բն... ես ըրելին տեսնում ես, — ասաց նա, կամփետներն առալ ու հետաքրքրությամբ սկսեց շուռ ու մուռ տալ ձեռքերի մեջ:

Ձին տարա ջրի դրողին մի կանաչ տեղ որդեցի: Նա սկսեց յեռանդով արածել. յես ել մի մեծ քարի թիկն տըված անուշ եյի անում իմ նանի յեփած նաղուքը ու հըրճվում քջքչալի հոսող ջրերի ցալքուններից...

Որվա տալալորությունները, նանը, ապին, քույրերս, Այրումի տղաները, ջաղացպանը շարան-շարան գալիս, կանդնում եյին առաջս, դրա հետ ել ջրերի գլգլոցը, ձիու արածելու ձայնը, այդ բոլորը միախառնվել եյին իրար և մի ներդաշնակ քաղցր թմրություն յեկել-պատել եր ինձ: Աչքերս փակվում եյին, բայց յես վորոշել եյի չքնեի Ձին կարող են գողանար մտածում եյի ու աչքերս լայն բացած, նայում եյի ձիուս, լսում եյի նրա փուռոցը, նայում ջրերին. ենքան գուրգուրանք կար նրանց ցուքերի մեջ...

Վորքան եյի մնացել եղպես՝ չգիտեմ, կարծես յերանգումս մեկը հրում-հրում եր ինձ, բայց յես չեյի կարողանում վեր կենալ: Մեկ ել աչքերս բաց արի. ինձ թվաց, վոր մեր կալումս եմ, առավոտ ե, ապին արթնացնում ե ինձ...

«Թող մի քիչ ել քնեմ, ապի ջան», — ասի յես ու նորից փակեցի աչքերս:

— Կմտես, տղա, վեր կաց...

Ականջիս հասալ մի խոստա ձայն. աչքերս սկսեցի տվորել... կողքս մեկը թափահարում եր. նայեցի, ջաղացպանն եր. խսկույն հիշեցի իմ ուր լինելու: Առաջի մտած-

մունքս ձին եր, լեղապատառ նայեցի շուրջս ու տեղիցս վեր թռա:

— Ո՛ւր ա իմ ձին, — լացակումած գոչեցի յես:

Զաղացպանը մի կուշտ ծիծաղեց:

— Իգիթ, եղպես դարաուլ կանե՞ն, դոռով զարթեցրի քի:

— Բա իմ ձին... — ել չկարողացա պահել սկսեցի հեծկլտալ: Զաղացպանը սիրալիբ նայեց ինձ:

— Ձին տարել կապել եմ, առաջն ել խոտ եմ ածել, նա իրան համար արխեյին ուտում ա, դու լաց ես լինում:

— Վերտեղ ես կապել, — արցունքներս կուլ տալով հարցրի յես:

— Գնանք, — ասաց նա ու առաջ անցավ:

Մենք մտանք կողքի մեծ գոմը, վորտեղ իմ ձիու մոտ մի քանի ուրիշ ձիաներ ել կային կապված:

Յես խսկույն վազեցի, թառախիս զլուխը սեղմեցի կրծքիս ու կարոտով նայում եյի նրա խելացի աչքերին...

— Հը, սիրադ տեղն ընկա՞լ, — մեղմ ժպտով խոսեց ջաղացպանը:

Յես յերախտագիտությամբ լցված նայեցի ձերունուն ու յեթե չամաչեյի, կհամբուրեյի նրա են կոշտացած ձեռքերը:

Նա ձիու առաջի խոտը թարմացրեց ու յերկուսով միասին դուրս յեկանք, մտանք ջաղացը:

— Ըհը, ես ել քու քնելու տեղը, — նա ցույց տվեց պատի տակին փռած մի քանի փալաս, մի հին ձուկն ու մի ալրախոլով մութաքա:

— Եդ ձուկնձումը կփաթաթվես, մութաքան կգնես գլխիդ տակ ու արխային կքնես: Իսկ հիմի արի նստի, մի թիքա հաց ուտենք, — ասաց նա, մոխրի տակից հանեց մի կրկենի, բերեց մի քանի կանաչ խիար, առանց մաքրելու կտրատեց, աղ ցանեց, կրակի մեջից ել հանեց մի բոլ խորոված կարտոֆիլ: Կրկենին կես արավ, քաշեց իմ առաջը,

— Կի, բալա ջան, ջղացի կրկենին համով ա ըլում, — ասաց ու տաք կարտոֆիլը կես արավ, վրան աղ ցանեց ու սկսեց երվելով-խորվելով լմլմախ:

Յես մի տեսակ ամաչկոտ ու քաշված, չգիտեմ ինչու, սիրա չեյի անում վոչ մի բանի ձեռք տալ. իմ գլխին պը-

արժուում եր իմ ճամբի պաշարը. տեղիցս վեր կացա, ուզում եյի գնալ «հարկան» բերել, նա փեշիցս քաշեց, նստացրեց:

— Են մնա. եզուց սաղ որը ճամբա յես գնալու:

Յես մնացել եյի շվար:

— Տո, կի ե... — գոռաց վրաս ու խիարը քաշեց առաջ:

Ճիշտ վոր աչքս խիարի վրա յեր. վերցրի դեռ մի փոքր կտոր, հետո մեծը, եղպես մի վարունգ վերջացրի. սկսեցի կարտոֆիլը, կրկինին ենքան համեղ եր, ենքան համեղ, վոր եղքան համեղ ընթրիք չեմ ունեցել և գուցե չեմ ել ունենալու:

— Այ, եղպես:

Ուրախ-ուրախ նայում եր իմ սեղանակիցն ու ինքն ել անուշ-անուշ ըլամում տաք-տաք կրկինին ու երված-խորոված կարտոֆիլները:

Չենց վոր մեր ընթրիքը վերջացավ, նա ասաց.

— Դե գնա քու տեղը մտի ու քնի. յես ես ա աղունդ վրեն եմ ածում:

Յես ձնձուձը կոլովեցի, գլուխս դրի մութաքին ու յերկար չեյի կարողանում քնել:

Ջաղացի չախ-չախի միալար չիչխկոցը, ջրերի գլղոցը, քարերի միորինակ վոնգյունը կարծես հեքյաթ եյին պատմում, կարծես խոսում, զրուցում եյին ինչ-վոր մի անհայտ աշխարհից ու իմ մանկական ուղեղը հափշտակում վառ յերագներով: Ինձ թվում եր, վոր ես կարկաչող ջրերի, պտտվող կոլով քարերի, դաշտերի ու չախչախների մի մասնիկն ել յես եմ... Ապա խալարի ու մթության մեջ փակվեցին աչքերս:

Զգիտեմ վորքան եյի մնացել եզ դրության մեջ, հանկարծ տեղիցս վեր թռա. կողքիս կանգնած եր Ջաղացպանը, նրա ձեռքի փոքրիկ ճրագի լույսն ընկավ աչքերիս:

— Կուսանում ա, բաւա ջան, վեր կաց, — ասաց նա ու գնաց քարերի մոտ, պողունցով սկսեց շոշափել ալյուրը:

Յես իմ սովորության համաձայն ուղեցի նորից կծկվել, գլուխս դնել մութաքին, մի քիչ ել քնել, բայց քարե-

րի ու չախչախների աղմուկը սթափեցրին ինձ. իսկույն ըզգացի, վոր ջրադացուսն եմ, աղուն եմ բերել աղալու. սկսեցի աչքերս տրորել ու տրեխներիս կապերն ամրացնել:

Ջաղացպանը թիկն տվեց ոջախի կողքին, չիբուխին մի պեծ դրեց ու սկսեց փստացնել:

Դիշերվա մթության մեջ, ամայի Ջաղացում նստած լուսն եյի աքաղաղների քաղցր ու հարազատ ձայնը. նրանց կանչի մեջ յես տեսնում եյի մեր դյուղը, մեր կալն ու մարազը և աղբի ծայրին քուջուջ անող մեր մեծ աքլորին:

Ջրաղացի միակ փեղկը կամաց-կամաց լուսավորվեց, իմ բիձան հանգիստ ծխում եր: Նայեց ինձ, նայեց լուսանցքին, չիբուխը թափ տվեց, տեղիցը ծանրությամբ վեր կացավ, դուռը ճոճուալի բաց արավ ու դիմելով ինձ ասաց.

— «Յեչի յուրա գյարաք» (ճամբորդը ճամբին պիտի լինի), լուսանում ա, գնամ ձիդ բերեմ:

Նա գնաց գոմ. յես վազեցի նրա յետևից: Չին հանգիստ կանգնած նայում եր մեզ. մոտեցա, ձախտը շփեցի, աչքերը տրորեցի: Ջաղացպանը սկսեց թամբել, փորքաշը կապեց, սանձը տվեց ինձ ու ասավ.

— Դե տար ջուր տու ձիուն ու բի խուրջինը վրեն պցենք:


Ջուրալ ու սառն եր ջուրը. ձին ծծում եր, խսկ յես լըվացվում, յերկու ձեռքով չոփ-չոփ եյի անում:

Բիձան ալյուրով լիքը խուրջինը դրել եր դուրսը մի բարձր քարի վրա ու սպասում եր ինձ. ձին քշեցի ծառի տակ. նա խուրջինը գցեց վրան, վոտիցս բռնեց, բարձրացրեց, ձիպտան ու սանձը տվեց ինձ ու ասաց.

— Դչե քանի ջանմդ ջան կա. քանի հող ա ճամբադ կարի. եզ Այրուսների արտից շուտ գուրս արի, մղոյթ կաց, գյաղաները վոր վրա տան, վախիս վոչ. ձիդ լափե ա, քշե, ճղե անց կաց: Դե գնաս բարով, բաւա ջան, քու ապին շատ բարով արա, ապրիս, շատ ապրիս, նրա նեղ որերին եղպես հասնիս:

Նայեցի բարի ծերունուն ու սիրաս լցվեց:

Handwritten notes in the left margin: 10101, 98514, 10801



— Մնաս բարով, բիձա. շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, քու արած լավութիւնը յես...

Ուզում եյի շատ բան ստել, լեզուս կապ ընկալի, աչքերս լցվեցին... Մի անգամ ել նայեցի իմ լավ բիձուն ու ձիս քշեցի առաջ:

Նա դուրսը կանգնած տխուր նայում եր ինձ. յես ել շուտ-շուտ գլուխս թեքում եյի յետ. մի անգամ ել նայեցի՝ մենակ ջաղացի պատերը յերեացին:

Ձին գնում եր շատ արագ, նա ել եր իմ պես շտապում:

Բզանիսի ձորում նա ջուր չխմեց, վոչ նա եր ծարավ, վոչ յես. անցանք Այրուսնի բնակը. աչքերս չորս կողմը չառձ, նայում եյի շուրջս. թվում եր, անա-անա պիտի վրա տան, հարձակվեն, բայց առանց պատահարի անցա: Այժմ արդեն մեր գյուղի հողամասումս եյի. ձիս նույն արագութեամբ գնում եր, յես հանգստացած հանեցի իմ պաշարը. հացը պանիրի հետ դրված եր իմ հարկում, մի կրկինի և մի թարմ վարունգ:

«Ապրիս, բիձա», — մտքումս ասի յես ու սկսեցի իմ նախաճաշը:

Կեսորից անց եր, վոր մոտեցա մեր գյուղին. հեռվից յերեացին մեր դռան մեծ թիթենի ծառը, խրձի դիզերը, խոտի չարդախը: Ապին կալը թեղում եր, նանը շուրջն ավելում եր, փոքր յեղբայրս ու քույրս կամ եյին քշում: Ամենից առաջ իմ գալը նկատեց մեր Հերոնշ շունը, նա մի բերան հաշեց ու ընկալի ձիուս վտանները:

— Նանի, քու Մադին:

Նա ու են կողմից ճչացին յերեխաները:

— Քե մատաղ, Մադի, — գոչեց նանը, ավելը ձեռքից վեր գցեց, վաղեց ձիուս վրայից վեր թնցրեց ինձ, սեղմեց կրծքին, կարծես իր կորած տղային նոր եր գտնում, նայում եր ինձ ու նորից, նորից համբուրում:

Յերեխաները շրջապատել եյին ինձ: Ապին ալյուրի խուրջինը վեր եր բերում ձիուց ու մեղավորի պես աչքի տակով նայում ինձ:

— Հն, ի՞նչ ելալ. սող-սալամաթ եկալ վճչ, — դառալ նա մորս, աշխատելով արդարացնել իրեն:

— Բա վոր մի բան պատահե՞ր, հեռի իրանից, արյունոտ շորերը բերեցին, — արցունքները հազիվ դապելով կըշտարում եր նանը:

— Նանը եւքան լաց ելալ վճր... հե գիդեր, գելերը կերել են քի, — վախվխելով խոսեց իմ փոքր քույր Կատին:

— Գայեղը չե՛, հմա Այրումի լակոտներից լավ պըծա, — ասացի յես ու չափազանցացնելով սկսեցի պատմել, վոր դադանակներով վրա ավին, դանակս հանեցի, վրա պըծա, գոռացի վրանները...

Յես պատմում եյի, նանը լեղապատառ լսում եր ու աչքերից արցունք թափում:

— Վնյ, քոռանամ յես, ինչքան ես տանջվել, — ասաց նա ու շտապեց տուն:

Յերեխաները վաղեցին նրա յետևից: Ապին ձին տարալ գոմ. մնացինք կալում յես և Կատին: Մի կամի վրա յես եյի կանգնել, մյուսին նա ու իրար հետ խոսելով սկսեցինք կալի վրա պտույտներ անել:

— Բա գելերից վախեցար վճչ, — խոսեց Կատին:

— Ընչի՞ պիտի վախենայի, ըրե՞խա յեմ ինչ ե, յես մենակ մեր սարն ել կգնամ, — հպարտ-հպարտ պատասխանեցի յես ու տեսա, վոր քույրս հրձվանքով նայում ե ինձ. տպա ավելացրի. — Թա ապինի դարբինան ձեռիս կլինե՞ր...

Նանը ձվածեղով թավան բերեց դրեց գեղի ջվաքում, յեկալ ձիպտոր ձեռքիցս առալ ու ասալ.

— Գնա, են ձվածեղը քի հմար եմ եփել, սոլամ կլինես:

Յերեխաների հետ միասին ուտում եյինք ու յես պատմում եյի իմ քաջագործութիւններից:

Ապին աչքի տակով նայում, ժպտում եր. նա ներքուստ գոհ եր, վոր ամեն ինչ լավ վերջացալ, իսկ նանի ուրախութեամբ չափ չկար, միայն Կատին եր կամի վրայից տխուր նայում:

— Առ, Կատի ջան, ես մի պատառն ել դու կի, — հացի վրա դրած ձվածեղը մեկնեցի նրան:

Ճիպոտը ձեռքիցն առա ու սկսեցի յեզները քշել: Բոլորը նայում, հրճվում էյին ինձանով. եղ որվա հերոսն էյի յես: Բայց եղ աղուն աղալն ինձ հժան չնստեց. եղ որվանից ինձ համարում էյին տան աշխատավորներից մեկը: Հորըս հետ կալը թեղում ու սկսում էյինք քամել: Հորալին ձեռքիս, թեղը քամուն էյի տալիս ու հրճվանքով նայում, թե ինչպես ցորենը բաժանվում եր դարմանից ու շրփ-շրփ թափվում ցած:

Կալը քամելուց հետո, յեզներն առաջս էյի առնում, քշում էյի հանդ արածացնելու: Յերեխաներս հավաքվում էյինք անտառի փեշում, մի մեծ կրակ էյինք անում ու մի մի քար գլխներիս տակ դնելով, ձուկնք վրաներս էյինք առնում, քնում էյինք մինչև լուսաբաց: Յերը վերջին կալն էլ կալում պրծնում էյինք, սկսվում եր աշնանացանք:

Հայրս մաճկալ եր, իսկ յես հոտաղ:

Յես հորիքի յեզների լծին նստած, ճիպոտը ձեռիս, քշում էյի: Նանը բերկրանքով նայեց ինձ, մոտեցավ, մի ձուխից յեղան ձակատին ու ասաց.

— Թող դու շմանի աչքը դուրս դա եսպես, քշե, բալա ջան:

Յես ճիպոտեցի յեզներին. լավում եր անխելների ճոճոցը, թվում եր, վոր ամբողջ գութանի ղեկն իմ ձեռքին ե, ամենամեծ գործը յես եմ կատարում:

— Ադն, Մադի, գեղամիջի ճամբան բռնե, — ասում էյին մեր ընկերակից գութանավորները:

— Գիղեմ, գիղեմ, — ասում էյի յես վստահ ու քշում յեզները:

Գութանի վարը յես շատ էյի սիրում, նայում էյի ձեռիչին. ինչպես գետինը ճղում եր, նայում էյի պսպղան խոփին, գետնի սիրաբ մտած, շերտ-շերտ շուռ եր տալիս թարմ հողն ու ուղիղ ընդգծում ակոսը...

Սկսվում եր ցանքսը. դա իմ ամենասիրած աշխատանքն էր: Հայրս սերմնացան եր, իսկ յես նրա առաջնորդը:

վոր կողմը յես գնում ցուցադրում էյի, են կողմն ել նա շաղ եր տալիս ցորենը. հատիկները շրփ-շրփ ընկնում էյին վտաքերիս ու ցրվում հողի յերեսին:

Տափանելն ել վերջացնելուց հետո, գոհ սրտով վերադառնում էյինք տուն: Ձմեռն այլ ես մեծ աշխատանք չըկար. տավարը տանում էյինք ջրի, գոմերը քերում, ալափ տալի, իսկ մնացած ժամանակ գյուղի տղաների հետ հավաքվում էյինք ու սկսվում մեր հեքյաթների շարքը:

Ահ, ի՜նչ լավ որեր էյին դրանք իմ մանկության հիշողության մեջ...

## IV

## ԻՄ ՓԱԽՈՒՍԸ

Յես արդեն տասերկու տարեկան էյի:

Մի որ մոտեցա մորս ու շատ լուրջ սկսեցի խնդրել.

— Նանի, յերը պետք ե ինձ ել քաղաք ուղարկեք. յես ել եմ ուզում իմ յեղբայրների՝ Պետրոսի, Արտեմի պես սովորել, ուսում առնել: Իմ թախանձանքին նա վոչ մի ուշադրություն չդարձրեց:

— Եղ մտքիցդ հանի. դու պիտի մնաս մեր տանը, մեր սար ու դաշտին, քու հորը քոմագ: Մեր տունն ու տեղը, մեր բաղն ու հողերը, մեր հորթ ու տավարը բոլորը քոննա, մեր տեր ու տիրակաանն ել դու յես: Բա մեր ենքան մուլքըն հում ես թողնում. եսա մենք պառավել ենք. ետը կանք, եղուց՝ վոչ... Բա մեր սջախն սվ պիտի վառ պահի:

Ու եղպես, հենց վոր բերանս բաց էյի անում, քաղաքի անունն էյի տալիս, թե նանը, թե ապին լսել անգամ չեյին ուղում: Նրանք ինձ լավ աշխատավոր էյին համարում իրենց համար ու վոչ մի կերպ չեյին ուզում բաժանվել ինձանից:

Բայց վորքան նրանք աշխատում էյին ինձ համոզել, ենքան իմ մեջ ավելի ու ավելի յեր արթնանում քաղաք գնալու ձգտումը: Մանավանդ, յերը յեղբայրներս գալիս

էյին քաղաքից ու պատմում հազար ու մի հետաքրքիր բաներ:

— Ախ, յերբ կլինի մի որ ել յես քաղաք ընկնեմ, — ասում ու տխուր-տխուր նայում էյի նրանց... Իսկ նրանք կարծես դիմամբ նորանոր հրաշքներ էյին պատմում:

Մի որ Արտեմն ասաց, վոր յերկաթուղի ա նստել ու թռած գնացել ա Հովճալա:

— Եդ ի՞նչ ա, — հարցրի յես:

— Են ա, վոր ինքն իրան թռած գնում ա, առանց ձիու, առանց յեղ ու գոմեշի...

— Վհնց թե, ծախ պես ա թռչում, — հարցրի յես դարմացած:

— Չե, — ծիծաղեց նա: — Ուշաբի պես յերկու աչք ունի... բերանը կրակ... պոչից ծուխ ա դուրս գալի... փուռ-փուռ անելով շունչ ա քաշում ու թռչում...

Եդ բոլորից, իհարկե, բան չհասկացա, մենակ հեքյաթներում լսած հրեղեն աչքերով մի մեծ ուշաբ պատկերացրի:

— Ի՞նչ կլինի ինձ ել տանեք քաղաք, — խեղճ-խեղճ ասացի յես:

— Բա մեր աղունն հիվ աղա, մեր կալն հիվ կալի, մեր տավարը, մեր փայտը, մեր գոմերը...

Նա աղավարի դեռ շատ պիտի շարունակեր, յես վերջ դովճած հեռացա, վազեցի նանի մոտ: Նանս միակ մարդն էր, վորին և սիրում էյի, և հավատում:

— Նանի, մեր Արտեմի հետ յես ել պիտի քաղաք գընաս:

— Ի՞նչ հիվ ասեց:

— Ո՞վ պիտի ասի, յես եղպես եմ ուզում:

Տեսնելով իմ վրդովմունքը, նա իր սովորության համաձայն գուրգուրանքով սկսեց.

— Դու վոր գնաս, բա առանց քի յես վհնց դիմանամ. մինչև յերեկո լաց կլինեմ. կասեմ, հըր ա իմ Մադին... Բա մեղքը չի՞ քու նանը...

Նա, յերեկ, գիտեր իմ փափուկ սիրտը, կարոտ հայացքով նայեց ինձ ու առավ իր գիրկը...

Յես ել չկարողացա ընդդիմանալ. գլուխս թաղեցի նրա կրծքում ու սկսեցի անզուսպ հեկեկալ:

— Վհր մեռնեմ, պիտի գնամ, վոր ի՞նչ կուղի ըլի, պիտի գնամ, — մրմնջում էյի յես... կարծես մայրական կրծքից ողնություն էյի հայցում,

— Լավ, լավ, հանդատացիր. ապնին կասեմ, լաց մի ըլի, — ասաց նանը, իր ունզլուկի փեշով աչքերս սրբեց, ճակատս համբուրեց ու տխուր-տխուր նայեց ինձ...

Յեղբայրներս շուտով գնացին քաղաք, շարունակելու իրենց ուսումը. յես նրանց ճանապարհ գցեցի, մտա մեր մարագն ու սկսեցի թաքուն լաց լինել:

Յերբ աչքերս կարմրած, հեկեկանքս զսպած՝ դուրս էյի դալիս մարագից, պատահեց մեր հարևանուհին: Մա մորս հասակին, շատ ճարպիկ, աղամարդկային հակումներով, սև, կրակոտ աչքերով, մի աշխույժ կին էր: Նրան կանչում էյին «Ամնի աղջիկ» (իր վորսորդ հոր նման քաջ լինելու պատճառով):

— Եդ ինչի՞ յես լաց յեղի, Մադի, — բարկացած հարցրեց նա. — ով դիտե, հերդ ծեծել ա:

— Չե, — ասացի յես ու հեկեկանքս նորից խեղդեց ինձ:

— Բա ինչի՞ յես լաց լինում, — ավելի կարեկցաբար նայեց ինձ:

— Ապին Պետրոսին, Արտեմին տարավ քաղաք, ինձ թողեց ըստեղ:

Նա դառը ախ քաշեց ու կունիցս բռնած՝ տարավ մորս մոտ:

— Այ թաթուն-քերա, ինչի՞ ես ըրեխին ել քաղաք չեք զրգում. ուզում եք իմ մարդու՝ «Փանահ-աղի»\*) պես իր ուսում առած ախպորտանցը նոքար դառնա... Նրանք

\*) Փանահ աղա — իր ամուսնու ծաղրական անունն էր:

ծիմ-ծիմ ապելատներով քաղաքից գան, դռանդ վեր գան, իսկ սա գյաղայի պես եդ «բեղերի» ձիաները մանածի՞...

— Դե, ի՞նչ անեմ, հերը մենակ մարդ ա, քոմագ չունի, չի թողնում, — ասաց նանը ու խեղճ-խեղճ նայեց մեդ:

Ամնի աղջիկը կրակ էր կտրվել. շան լափը թափե՛լ մորս գլխին, ապա դռնալով ինձ, ասաց.

— Վախիլ մի, Մաղի ջան, քանի Ամնի աղջկա գլուխը սաղ ա, քանի լաչակը գլխին ա, մի ճար կգտնի, մի ճամբա բաց կանի քի հմար:

Եդ որվանից նրա և իմ մեջ առաջացավ խորին մտերմություն: Յես շուտ-շուտ լինում եյի նրա մոտ. նա ինձ միշտ հանգստացնում էր: Մի քանի անգամ հորս հետ խոսել եր. թեև հայրս կտրականապես մերժել էր, բայց նա չեր հուսահատվում:

Մենք կալ ու կուտը հավաքել, վար ու ցանքն ավարտել եյինք:

«Ե՛հ, ես ձմեռ ել մնացի գյուղում»... Կարծես հաշտվել եյի վիճակիս... «Պիտի մնամ գյուղում, դռնամ հորս պես հողագործ, ունչպար», — մտածում եյի յես ու այլ ևս հույս չունեյի Ամնի աղջկա վրա:

Սայլը լծեցինք ու հորս հետ գնացի անտառ փայտ բերելու: Յերը տուն յեկանք, իմ քույր կատին մոտեցավ ու ականջիս կամաց ասաց.

— Ամնի-աղջիկը կանչում ա քի:

Յես իսկույն վազեցի նրա մոտ:

— Մաղի, ես գիշեր, լուսաբացին Գնջալվանց սելերը դարի-ցորեն են տանում քաղաք ծախելու: Վորձկանչին վեր կլինաս, թաքուն դուրս կգաս տանից, կգնաս կընկնես եդ սելերի հետ ու թո՛ւշ, դբա քաղաք: Գանջալվանց տունը հո գիտես, Դոբնի ծերին ա: Աշխատիք քնով չընկնես ու մնաս. տանցոնց բան չասես: Դու փախի գնա, տեսնեմ քու նանն ու ապին ինչ կանեն:

Եդ որը յես շատ եյի տխուր, ամբողջ ժամանակ իմ փախուստի մասին եյի մտածում:

— Եդ ինչի՞ յես եդքան մտամուր, Մաղի ջան, հո հիվանդ չե՞ս:

Նանը խիստ-խիստ նայեց աչքերիս: Յերևի նա գիտե, զգում է, վոր իմ մեջ մի վատ բան է կատարվում. չլինի նրա սիրտն իմացել և, վոր յես փախչում եմ... — մտածեցի ու առանց նրան նայելու ասացի.

— Ձե, նանի ջան, վոչ մի տեղս չի ցավում:

Կացինն առա՛ ու գնացի թռնրի համար փայտ կտրատելու:

Նանն ամբողջ որը հետևում էր ինձ. ուր գնում եյի, մի բան, մի պատրվակ էր գտնում, գալիս էր յետևիցս ու աչքի տակով նայում էր ինձ: Եդ որը յես ել եյի տխուր, նա յեր.

Յերը իրիկնահացը կերանք, յերեխաները սովորականի պես մտան իրենց տեղերը քնելու, յես մնացի ոջախի կողքին նստած ու սկսեցի կրակը խառնել:

— Բա դու ինչի՞ չես քնում, — անհանդիստ նայեց նանը:

— Կքնեմ, — ասացի յես ու սկսեցի տրեխներս հանել. կամաց-կամաց շորերս ել հանեցի ու մտա տեղս:

Նանը հանգստացած՝ ձեթի ճրագը հանգցրեց ու ինքն ել քնեց:

Տեղիս մեջ աչքերս տրորում եյի, վոր չքնեմ. քիչ հետո, յերը տեսա, վոր բոլորը քնած են, վեր կացա, շորերս հագա, տրեխներս կապեցի, ոջախի վրա մի քանի փայտ ավելացրի:

Փայտերը ճրթ-ճրթալի վառվում եյին, յես նայում եյի կրակի բոցերին ու մտածում իմ փախուստի մասին. այդ քուպեյին մի միտք էր միայն ինձ տանջում, վոր քնով չընկնեմ ու աքաղաղների կանչը լսեմ...

Հայրս խոսվում էր, նանը հանդիստ շնչում էր. քույրերս ու յեղբայրներս փարվել եյին իրար, աչքերը փակել... Կրակի աղոտ լույսի տակ ենքան գեղեցիկ եյին նրանք:

Մենակ իմ փոքրիկ շնիկ Հերոնշն էր արթուն. խելոք

նայում, կարծես հասկանում եր իմ միաքն ու քաջալերում ինձ...

— Դե, շորերդ հագել, պրծել ես, ել հւմ ես սպասում, գնանք:

Բայց նա յիշ շուտով կծկվեց, դուռնչը պահեց պոչի մեջ ու խելույն քնեց:

Մնացի մենակ: Տեղիցս վեր կացա, դուռը կամանց բաց արի, դուրս գնացի ու ակամայեց նայեցի յերկնքին: Աստղերը վառվում-հուրհրատին ելին տալիս: Գունս կարծես մի փոքր փախավ. աչքերս այլ ևս չեյին փակվում. նայում եյի աստղերին ու մտածում... յերանի վերն ե իմ աստղը... «Իարմանագողի» ճամբան շատ եյի սիրում. եստեղ մի փայլուն աստղ կար... Ո՞վ գիտե նա յե իմ աստղը... վոր յես մեռնեմ, նա յերկնքից ծոր տալով վեր կընկնի... Եդ մտածմունքների մեջ ինչ-վոր ցուրտ զգացի, վոտքերիս ծայրերով նորից տուն մտա, նստեցի ոջախի մոտ, մի քանի փայտ ավելացրի. կրակը բոցավառվեց:

Յնթե նանը հանկարծ աչքերը բաց անի ու տեսնի ինձ նստած, ինչ կանեմ... Կասեմ փորս ցալում ա, նանի ջան: Եդ մտածմունքների մեջ, հակառակ իմ կամքի, աչքերս փակվել եյին, նստած տեղս քնել եյի...

Մեկ ել հանկարծ լսեցի մեր մեծ աքլորի «ծուրու-դուն»... Միրտս թռավ, տեղիցս վեր կացա. մտա թոնրատուն. շտապ մի քանի հաց վերցրի ասալից. թերեքի կճուճից ել պանիր, փաթաթեցի աղլուխումս, կապեցի մեջքիս, ճիւղտն առա ու կանգնեցի:

Կրակն իր աղոտ լույսով մի առանձին գեղեցկութուն եր տվել մեր աղքատիկ խրճիթին: Նայեցի նանին. ես սիրուն աչքերը փակած, հանգիստ քնած եր. նայեցի ապնին — դեմքը խաղաղ, շնչառության հետ շրթունքները բաց ու խուփ եյին լինում. նայեցի քույրերիս, յեղբայրներիս... վորքան գեղեցիկ եյին նրանք այդ անմեղության մեջ... յերկայն թերթերունքները փակել եյին նրանց մանկական աչքերը. դեմքերն անգորը ու խաղաղ...

Անընդհատ նայում ու չեյի կարողանում հագնալ...

Չորեցի ու զգուշությամբ սկսեցի մեկ-մեկ համարել նրանց գլուխը, ձեռքերը, ճակատը...

— Մնաս բարով, Կատի ջան, Թոսի ջան, մնաք բարով յերեխաներ, — հազիվ լսելի մրմնջում եյի յես... Մոտեցա մորս. կարոտ նայում, քիչ եր մնում ընկնելի նրա ես հարգատ գերկը... — Մնաս բարով, նանի ջան, ինձ համար դարդ չանես... — մտքումս մրմնջում ու շրթունքներովս հալում եյի նրա պարզած ձեռքին:

Արցունքներս խեղդեցին... Հեկեկանքս հազիվ զրպած, վոտքերիս ծայրերով մոտեցա դռներին... կանգ առա... յես նայեցի, մի անգամ ել նայեցի ու դուռն իմ յետևից փակեցի... Գուրսն ել ինձ չկարողացա դապել... արցունքներս թափվում եյին ու յես լուռ հեկեկում եյի...

Հերոնջն ինձ հետ արթնացել, ձեռքերս լիզում եր ու ախուր-տխուր նայում: Ինձ թվաց, վոր նրա աչքերն ել եյին թաց... Գրկեցի նրա գլուխն ու ամուր-ամուր սեղմում եյի կրծքիս...

Աքաղաղների յեռանդադին կանչն ինձ սթափեցրեց: Մտա դոմ. մնաս բարով արի իմ թառան ձեռն. հորթուկիս դուռնչը համբուրեցի. դուրս յեկա գոմից. մի անգամ ել նայեցի մեր տանը, մեր տեղին, մեր մեծ թթենուն: Մնաք բարով ստացի ու քայլերս ուղղեցի դեպի Գանջալվանց տները:

Հերոնջն առաջիցս ուրախ-ուրախ թռչկոտում եր: Գյուղը դեռ խոր քնի մեջ եր. աքաղաղները մի բերան կանչել, դադարել եյին. լսվում եր շների հառ ու կհնո հաջոց ու նորից լուռ ամեն ինչ:

Մի քանի ծուռ ու մուռ փողոցներ անցնելուց հետո, հասանք գյուղի ծայրը, Գանջալվանց տներին:

Պահվեցի մի պատի տակ ու ամբողջապես լսելիք դարձած, նայում եյի նրանց կողմը, բայց այնտեղից ձեն ու ձուռ չկար: Տիրում եր խորին լություն: — Յերեի սայլերը լծել, գնացել ես, — մտածում եյի յես անհանգիստ. Հերոնջը պոչը շարժում ու կարծես հանգստացնում եր ինձ. Ե իրավ, քիչ հետո լսեցի Գալջալվանց Ակոր բիձու խոպոտ ձայնը:

«Հո Բանուշ, հո Բանուշ» ասելով յեղները դուրս եր անում գոմից: Զրագը ձեռքին, նրա յետևից դուրս յեկավ մի կին. նրանք միասին խոսում էյին. կինն ինչ-վոր պատ-վերներ եր տալիս: Լսվեցին ելի ուրիշ աղամարդկանց ու կանանց ձայներ:

Յես տեղս կուչ յեկած, շփում էյի Հերոնշի գլուխը, վոր չհաջի. նա պոչը շարժում ու հանգիստ նայում եր ինձ:

Լսվեց սայլերի ու անիմների ճոճոտցը. տեղիցս վեր կացա. գաղտազողի սկսեցի հետևել նրանց: Յերեք բռնա-վորված սայլ էյին: Առաջինին նստած եր ինքը Ակոր բի-ձան. նրանք յեղները քշում ու իրար հեա ինչ-վոր խոսում էյին: Սայլերը ճրոճըռուպեն գնում էյին. մենք լողեն դուրս էյինք յեկել գյուղամիջից. մեր առաջը ձգված է հարթ-հա-վասար ճանապարհ. յես շատ հեռվից, անսկասելի հետևում էյի նրանց:

Զգում էյի մի առանձին թարմություն. առավոտվա մեղմ գովը փչում եր յերեսիս... Ինձ թվում եր, վոչ թե քայ-լում էյի, այլ թռչում ողում... Այն գիտակցությունը, վոր քաղաք եմ գնում, վողևորել եր ինձ: Պատկերացնում էյի ինձ յեղբայրներին պատմած մեծ քաղաքը, բարձր-բարձր տները, մեծ Գուռ գետը, իր յերկաթե կամուրջներով. մա-քուր, լայն փողոցները... Հերոնշն ել եր ուրախ, շուրջս պը-տույտներ եր անում, թոչկոտում եր յետ ու առաջ, նրան թվում եր, վոր դաշտ էյինք գնում վար ու ցանքի:

Յերկինքը պարզվում եր. լուսաբացն այդ ժամին ան-նման եր. վառվառն աստղերը կամար էյին կապել. բաղում-քը, կշիւր, «քարվանդանը»\*) փայլ-փլեղով նայում էյին ինձ: Լուսաստղը հենց գլխիս վերեը շողշողում ու իր չքնաղ փայլով զարդարում եր յերկինքը: Այգպիսի աստղալից յեր-կինք, հրաշունչ լուսաբաց կյանքումս չէյի տեսել: Իմ մա-նուկ հոգին հրձվում եր. թվում եր՝ ինքս ել եզ աստղերից մեկն եմ ու են անհոն կապուտակում խաղում եմ յես ել նրանց հետ:

\*) Քարվանդանը Յուպիտերն ե

Լուսացավ. մենք գյուղի հանդից անցել մտել էյինք հարևան, թուրք Ինջալու գյուղի սահմանները, ուր սկսվում եր մի խորը ձոր: Գյուղացիք սայլերը կանգնեցրին, իջան, անիմները կապեցին:

— Ա՛-ա՛... են ով ա, են տղեն, — ձեռքը ձակատին դրած, նայեց դեպի ինձ Ակոր-բիձան:

— Յես եմ, Ակոր բիձա, Խեչմանց Ուհանեսի տղա՝ Մաղին:

— Ադա, Մաղի, եզ ուր ես գնում, — զարմացած հարց-րեց նա:

- Քաղաք:
- Բա քու հերը գիղե՞:
- Վոր նա գիղենար, ի՞նչ ունեյի ձեր սելերի հետ: Տանցոնց թաքուն փախել եմ... — ասացի յես համար-ձակ:

— Ադա, տեսնում ե՞ք ես «լակոտին», — դառավ նա համազյուղացիներին, ապա խիստ-խիստ նայելով ինձ, ա-սաց:

- Յեղ գնա, բալա ջան, քու հերը վոր իմանա, կերե-կխուսի մեզ. մենք քի քաղաք տանող չենք. իմացար:
- Իմացա, Ակոր բիձա, դե յես հո ձեր սելին չեմ նստում, ենա ճամփեն գիղեմ վոչ, թե չե մենակ ել կգնամ:
- Յեղ գնա, ասում եմ, թե չե ես ձեռիս ճիպտաը տես-նում ես:

Նա ճիպտան որորելով յետևիցս ընկավ, ուզում եր բռնել ինձ:

— Ի՞նչ ե, յես ձեզ ի՞նչ եմ անում, վոտով ինձ հմար գնում եմ, — նրա առաջից փախչելով ասացի յես: Հերոնշն ել իրան հերթին սկսեց հաջել:

Նրանք իրար հեա սկսեցին փսփսալ ու Ակոր բիձան մեղմացած դիմեց ինձ.

— Դե վոր յեկել ես, արի, բալա ջան, արի սելին նըս-տի տանենք քաղաք, արի, վախիլ մի:

Յես զգալով նրանց միտքը, յետ-յետ գնացի ու բար-կությամբ ասացի մեծերից լսածս դարձվածքը.

— «Ձեր եղ մաքրինը, իմ ես կրնիկ տակին ա»:

Վերազարթած իմ եղ խոսքերից, նրանցից մեկը գոռաց.

— Ձհաննամը դրա գլուխը, թող ուր ուզում ա կորչի, ասաց ու քշեց յեղները. մյուսներն ել հետեցին նրան:

«Լավ պրծա», — մտքումս ասացի ինքս ինձ. ես ա ել բան չեն ասիլ, հեռները կգնամ քաղաք: Ուրախ ու ազատ շունչ քաշեցի: Հերոսը տխուր-տխուր նայում եր ինձ:

— Դու գնա տուն, Հերոսը, նանին, ըրելսանցը շատ բարով արա. յես եսա գնում եմ քաղաք:

Շունս կարծես հասկացավ ինձ. վտոսերս ընկավ, մի քանի անգամ կլանչ-կլանչեց ու ճամբա ընկավ յետ դեպի գյուղը. գնում-գնում, կանգնում, յետ-յետ եր նայում, կարծես սպասում եր, վոր նորից կկանչեմ:

Իջնում եյինք ձորը. շունն աչքիցս հեռացավ, կարծես մի բան պոկիկեց սրտիցս: Մինչ այդ թվում եր, թե յես գնու չեմ կտրվել մեր տնից. Հերոսը ներկայությունը, կարծես, մի տեսակ կապում եր ինձ մեր տան հետ: Այժմ այդ միակ սիտիանքից ել զրկվեցի: Այլ ես վոչ մեր հանգն եր յերեվում, վոչ մեր գյուղը ե վոչ ել իմ ենքան սիրելի շնիկը...

Գնում եյի գլխակոր, սայլերի յետևից: Գյուղացիներն իմ գոյության մասին մոռացել, բարձրաձայն խոսում եյին իրանց անց ու դարձի մասին. նրանց հետաքրքրում եր, թե ինչ գնով կծախեն իրանց ցորեն-գարին:

Յես սայլերի յետևից խրոխտ քայլում եյի. հոգնածություն չեյի զգում, մենակ մի փոքր քաղցն եր նեղում: Հենց վոր իջանք ձոր, նրանք յեղներն արձակեցին, խոտ զցեցին առաջները, իրանք ել նստեցին ծառի շվաքում, սառն աղբյուրի կողքին ու սկսեցին նախաճաշի:

— Արի, ադա, Մաղի, դու յել նհար արա, — կխաբերան կանչեց ինձ Ակոր բիճան:

— Ուզում չեմ, — ասացի յես:

Նստեցի մի ծառի տակ, աղլուխս բաց արի ու խոսվ-կան յերելիս պես սկսեցի ծամել իմ հացն ու պանիրը: Ապա ընկա աղբյուրին, մի կուշտ ջուր խմեցի. աղլուխս նորից կապեցի մեջքիս ու թիկն ընկա մի կոճղի:

Մի լավ հանդատանալուց հետո, սայլերը ճամբա ընկան, յես ել հեռվից սկսեցի հեռեկ:

«Յարար նանը վինց ա. ապին ինչ ա անում», — մտածում եյի յես: Մեր տունը, մեր կալը կարծես աչքիս առաջը լինելու: Ո՞վ գիտե Ամնի աղջիկը յեկեը, ասել ե նրանց. Հերոսը հասել, խաբար ե ավել նանին... Մտքերս խառնվում եյին իրար... Յերբեմն մեր սարերն եյին առաջս, սարի ճամբան, ջրաղացը, ջաղացպանը... Նանն ու կատին աչքիցս չեյին հեռանում. նրանք տխուր-տխուր նայում եյին ինձ...

Յես մխիթարում եյի ինձ. — Ամնի աղջիկը կասի. — «Խաթուն քիրա, քու Մաղին թամվ... Գանձալվանց սելերի հետ գնաց քաղաք»...

Նանը լքլքոցը կրնիկի. կգնա ապին կասի.

— Մաղին փախել ա, ան մարդ, մի ճար արա...

— Հա, փախել ա, փախել ա... — կասի ու կգնա գեղամեջ:

Նանն ես կուռ, ես կուռ կանի. ապին ականջ չի դրնիլ: Նանն ել կամաց-կամաց կհանդատանա. նրա սիրտը թաքուն կուրախանա, վոր իր Մաղին քաղաք ա գնացել... Ու եղպես հաղար ու մի մտածմունք պաշարել եյին ինձ. յես անգիտակցաբար յեկել, սայլերին մոտեցել ու հասվե հաս քայլում եյի:

— Ա՛... ան... հրե մի ձիավոր ա գալի դրա մեզ. յարար եղ ո՞վ ա, — խոսեց Ակոր բնձեն ու նայեց ինձ:

Յես վախեցած յետ նայեցի. — հայրս եր: Թառլանին նստած, թուած գալիս եր. սիրտս ծուլ ելավ:

— Ադա, Մաղի, քու ապին ա, վայ քու մեղքը. կաշիդ պիտի պլոկե, — ասաց մի գյուղացի:

— Հա... նա ա վոր կա, — պնդեց Ակոր բիճան:

Յես իսկուշն ճամբից դուրս ընկա, անցա սայլերի առաջ, սկսեցի վազել քանի ջանումս ջան կար. վազում ու յետ-յետ եյի նայում: Արդեն ձիու վտարերի արտիյունը լքում եյի. ճամբաս ծոցի, անցա մացառկուտը... Վտարս թուլանում եյին, վեր եյի ընկնում. մեկել մի ձեռք կռնիցս ամուր բռնեց: Ապին եր. եսպիսի գայրույթ կար նրա գեմ-

քին, վոր յերբ նայեցի, քիչ եր մնում լեղիս պատուեր:

— Վայ, ապի ջան, — միայն կարողացա արտասանել ու ձեռքս բնազդաբար պահեցի գլխիս:

Նա առանց մի բառ արտասանելու, կռնիցս քաշեց, նստեցրեց դավակին:

Յես նրա մեջքին կաած, սարսափից դողում եյի... Ձին յետ տվեց. հենց վոր հասանք սայլերին, նայեց Ակոր բիձային ու դառնացած ասաց.

— Ասենք սա ըրեխա ան... բա դուք ի՞նչ մտածեցիք. ձեր գլուխը վհնց վեր կալավ, ես քորփա ըրեխին տանել են քանդվածը — շներոց, գելերոց անելով...  
— Դա ըրեխա հո չի, պե՞ծ ու կրակ ա, — ասաց Ակոր բիձան:

— Կակոտ ունես, դռանդ պինդ կապի ու խալխին բիարուռ \*) մի անիլ, — խոսեց մի ուրիշ գյուղացի:

Ապին ել չխոսեց. նա կարծես հանգստացած, թեկցս ամուր բռնեց ու մտրակեց ձիուն:

Ինչից վոր սարսափում եյի՝ հակառակը դուրս յեկավ. նա վոչ միայն չծեծեց, մի չոր անգամ չտսեց ինձ, այլ ձանապարհի ամբողջ ընթացքում սիրալիբ նայում եր ինձ. մի քանի անգամ ել քնքշությամբ ասաց.

— Բարա ջան, դայիմ բռնի մեջքիցս, վեր չընկնես...

Յես մի առանձին կարոտ դգալով դեպի նա, ձեռքերով ամուր գրկեցի նրա մեջքը ու սկսեցի ներքուստ ինձ կշտամբել:

— Ինչո՞ւ եյի փախչում. բա իմ ապին մեղք չի. գիշեր ցերեկ մենակ չարչարվում-տանջվում ե...

Եդ մտքերի մեջ եյի հասանք տուն:

Ամենից առաջ մեզ նկատեց չերբեշը. հաջելով վագեց մեզ ընդառաջ. ծուլ-ծուլ եր լինում, կախ եր ընկնում, քաշում եր վտաքերիցս, քիչ եր մնում ինձ վայր գցեր ձիուց:

Շան հաջոցի վրա դուրս թափվեցին յերեխաները...

— Նանի, Մաղին, — գոռացին նրանք ու քիչ եր մնում ձիու վտաքերի տակն եյին ընկնում:

\*) Բիարուռ անել—անպատվել

Նանը լեղապատառ դուրս ընկավ անից:

— Մաղի ջան...—դուրս թռավ նրա կրծքից եդ միակ բառը ու ձեռքերը մեկնած, վրա ընկավ մեր ձիուն:

Յես թռա, ընկա նրա գիրկը, գլուխս գրի նրա կրծքին ու սկսեցի հեկեկալ:

Մայրս սեղմել եր ինձ իր դոշին, համբուրում, զգվում ու արցունքը գունդ-գունդ աչքերից թափում եր...

— Իմ սիրուն բալաս, դու վոր կորչեյիր, քու նանը վհր ջուրն ընկներ... Իմ սար ու դաշտ տղա, մեր եյիր գընում, հում եյիր թողնում քո խեղճ նանին. բա նա մեղք չե՞ր...

Յես ամաչում եյի յերեխաներից, նրանք շրջապատել ու թախծալի նայում եյին ինձ:

Ապին ձին ման եր ածում կալում ու մերթ-մերթ նայում մեր կողմը: Նա յեկ եր տխուր. կարծես ինչ-վոր խորը մտածմունքների մեջ եր: Ձին կապեց ու յեկավ նստեց սրահի թախտին:

— Կատի, մի սառը ջուր տու,—գիմեց նա քրոջս:

Յերբ ջուրը խմեց, փարչը դրեց մի կողմ, նայեց մորս, ինձ ու ասաց.

— Խաթուն, ես ըրեխի վոտն ու ձեռը դրատի, եգուց տանեմ քաղաք, կռնից բռնեմ, Գուռը գցեմ ու գամ:

Յես զարմացած նայեցի հորս. խորը թախիժ կար նրա դեմքին: Մայրս տեղից վեր կացավ, մոտեցավ հորս ու վախ-վխելով հարցրեց.

— Ի՞նչ ես ասում, այ մարդ...

— Ասեցի եդ գյաղի վոտն ու ձեռը դրատի, եգուց տանում եմ քաղաք, — բարկությունը զսպած, խոսեց նա ու դուրս գնաց:

Քիչ հետո յեկավ Ամսի-աղջիկը:

— Լաց եյիր լինում, Խաթուն քերա... դե հիմի տար դռանդ նոքար արա... խեղճ ըրեխեն կնքան լաց ա ելել վոր աչքերը կարմրել են, բա մեղք չի՞ դա...

— Այ քերա, այ մերա, ի՞նչ ես ուզում մեղանից...

Ամնի-աղջիկը, տեսնելով մորս վրդովմունքը մեղմացած՝  
ասաց.

— Հանաք եմ անում, Խաթուն. ինչի յես նեղանում:

— Եզուց աղին տանում ա Մաղինին քաղաք, — ասաց  
Կատին ու իր քնքույշ հայացքը դարձրեց ինձ:

— Հա, Խաթուն:

— Հա, — սրտնեղած խոսեց նանը ու աչքերը նորից  
լցրեց:

— Շաշ... հրեղ հավի թխսի պես չորս կողմից լցրել ես,  
հերիք չի՞ քեզ... վեր կաց ճամբու համար բան ու ման ա-  
բա, հաց թխե. եսս որը ճաշ ա դառնում. ել յի՞րբ պիտի  
հասցնես:

Նրանք մեզ թողին սրահում ու իրանք մտան թոնրա-  
տուն:

— Կատի ջան, գիտեյի՞ք, վոր փախել եմ:

— Չե, ես ա ասեցինք Հեբոեշի հետ բաղերն ես ընկել  
զորադա \*) անելու. մեկ ել տեսանք Հեբոեշը յեկավ, կլանչեց-  
կլանչեց ու նանի վտաներն ընկավ:

— Բա ո՞ր ա Մաղին, — նանը վախվեցելով հարցրեց  
ապինին:

— Ուր պտի ըլի, հրես կգա, — ասաց ապին ու ձին  
տարավ ջուր տալու:

Մեկ ել տեսանք, Ամնի-աղջիկը ծիծաղելով գալիս ա:

— Վախիլ մեք. Մաղին Գնջարլանց սեւերի հետ փա-  
խավ քաղաք:

Նանը ծնկներին տվեց ու հե ծվաց, վոր ապին եդ ծը-  
վոցի վրա տուն ընկավ:

— Եդ ի՞նչ ա պատահել, Խաթուն:

— Մաղին, Մաղին... փախել ա, — ասաց ու նորից լը-  
ժեց ծնկներին:

Մենք ել սկսեցինք լաց լինել...

Ապին թռավ ձիուն ու ճամբա ընկավ:

— Շատ ուրախացանք, Կատի ջան, վոր ինձ տեսար:

— Շատ, — ասաց նա ու իր բարի աչքերը գցեց յե-  
րեսիս:

Յես գրկեցի նրան ու ամուր-ամուր համբուրեցի:

Նանը կանչեց մեզ, յես ու Կատին վազեցինք թոնրա-  
տուն:

Յես շորերս հանեցի, նստեցի տաշաի մեջ. Կատին ջուր  
եր ածում, նանը լողացնում եր ինձ:

Յերբ վերջացրեց, վտախցս մինչև գլուխ հազցրեց մա-  
քուր շորեր:

Եդ որն ամենքն աշխատում եյին ծառայել ինձ, տան  
ազիզն եյի: Ապին մի քանի հավ մորթեց, շտապ-շտապ ման  
եր գալիս ու ինչ-վոր պատրաստություններ եր տեսնում:

Նանն աչքերը ինձանից չեր հեռացնում. ախ ու վախ  
եր անում: Յես ել եյի տխուր. ինչ-վոր անհայտ յերկյուղ  
եյի զգում:

— Ինչո՞ւ ապին ասաց. — ինձ տանում ե Գուուը գը-  
ցելու...

Եդ յերեկո նանը շուտով տեղերը գցեց. պառկելս ու  
քնելս մեկ յեղավ:

## V

## ԲԱՂԱՔՈՒՍ

Չգիտեմ վորքան եյի քնել, յերբ աչքերս բաց արի,  
տեսա նանը համբուրում ե ինձ:

— Վեր կաց, Մաղի ջան, վեր կաց. աքաղաղները կան-  
չում են, հերբ ձին թամբում ա... Ճամբի պաշարդ կապել եմ,  
վեր կաց, բալա ջան, — ասում ու աչքերից արցունքներ եր  
թափում:

Կատնի կուռը վզովս եր գցած, յես զգուշությամբ բա-  
ժանովեցի նրանից. նստեցի, շորերս հագա. դա իմ տոն որե-  
րի հագուստն եր. կարմիր բրդի բաձկոն, նարնջի գուլյնի  
վերնաշապիկ, գուլյնզգուլյն թելերով գործած գուլպա, նոր  
տրեխներ... քամարս ել կապեցի ու մնացի կանգնած:

\*) Ղորադա անել—միրզ հավաքել:

Նանը կողքիցս չէր հեռանում. կոճակներս մեր եր գը-  
ցում, ոճիքս ուղղում, թափ եր տալի վրաս:

Ապա պահարանից հանեց մի բուռը կանֆետ, լցրեց  
գրպաններս:

Յերեխաները հանգիստ քնած էյին. յես կռացա, մեկ-  
մեկ համբուրեցի Կատնին, Կանուշին, Մարինին, Թորոսին,  
Մուխոյին ու նանի հետ դուրս յեկանք սրահ...

Յերկէնքը ամպամած եր, տեղ-տեղ յերևում էյին հատ  
ու կենտ աստղեր:

Ապին թամբը մի անգամ ել ամբացրեց, խուրջինը գը-  
ցեց ձիու վրա. ինքը նստեց ու ուղում եր առնել ինձ իր  
գավազը:

Նանն ինձ ամուր գրկած՝ բաց չէր թողնում:

— Խաթնու, — կես բարկացած, կես հանդիմանական  
ասաց ապին:

Նանը սթափովեց. ամուր համբուրեց աչքերս ու յես թուս  
հորս գավազը:

Նանը կիսախավարի մեջ նայում եր մեզ, իսկ Հերոնը  
ձիու առաջից թռչկոտում եր:

— Մնաս բարով, նանի ջան, — ասով իմ սիրտը...

— Գնաս բարով, Մարի ջան, — ասով իմ նանի սիրտը...

Մեր սրտերի ձայները ձուլվեցին ու տարածվեցին խա-  
վարի մեջ:

Ճիշտ վոր թառլան եր մեր ձին, մի շնչում հասավ «Կոտ-  
րած կամուրջը» \*). առաջին անգամս էյի տեսնում յես եդ-  
պես մեծ գետ:

— Ապի, սա ան Բուռը, — կարմնջից նայելով խոր ջրե-  
րին, հարցրի յես:

— Չե, բալա ջան, սա Խրամն ա: Բուռը սրանից շատ  
ա մեծ, — ասաց ապին:

Հենց եդ կամուրջի կողքին մի դուքան կար: Իջանք,  
խուրջինը վեր բերինք, ձին կապեցինք, գարի, դարման տը-  
վինք. մենք ել նստեցինք սեղանի առաջ յերկար նստարա-  
նին, մեր պաշարը հանեցինք. խանութպանն ել մի շիշ ողի

\*) Խրամ գետի կամուրջը

բերեց ու ինքն ել կողքներիս նստեց: Յես կրծում էյի հավի  
վոսկոբներն ու մաքումս ասում. «Իմ նանի կիսածն ա»:

Ապին դուքանչու հետ ասում, խոսում ու դատարկում  
էյին ողու բաժակները: Յերբ նախաճաշը վերջացավ, խուր-  
ջինը կապեցինք, ձին տարանք ջուր տվինք. ապին դուքան-  
չու փողը տվեց ու մենք ճամբա ընկանք:

Նույն որը, կես գիշերվա դեմ, հեռվից յերևացին շատ  
կրակներ:

— Եդ ան քաղաքը, ապի, — հարցրի յես:

— Հա, — ասով ու ձիուն կրնկեց:

Բիշ հետս մենք արդեն քաղաքի ծայրամասումս էյինք:

Ճանապարհի աջ ու ձախ կողմերը, փայտե սյուների  
վրա, վառվում էյին ճրագներ. քանի գնում էյինք, հնքան  
շատանում էյին եդ լույսերը: Մեկ-մեկ ել պատահում էյին  
կառքեր ու սայլեր:

Յես ամուր բռնել էյի հորս մեջքից ու զարմացած նա-  
յում էյի չորս կողմը, ինչ-վոր վախ էյի զգում: Լավում էյին  
սուղոցներ. մի տեղ ենպես ուժեղ շվվացրին, վոր մարդիկ  
հավաքվեցին, աղմուկ բարձրացավ:

— Զիրզիր բռնած կըլեն, — ասաց ապին ու ձին քչեց  
առաջ:

Յես չզիտեյի ուր ենք գնում, վորտեղ ենք. եդ միջո-  
ցին ապին ձին թեքեց, մտանք մի ընդարձակ դավիթ ու խ-  
ջանք ձիուց: Մեզ տվին մի առանձին սենյակ. պատի մոտ  
մի յերկար թախտ եր դրված, առաջը սեղան, շուրջը մի քա-  
նի աթոռ:

Ապին ձին տարավ տեղավորելու. յես խուրջինի կողքին  
թախտի վրա նստեցի ու հնքան հողնած էյի, վոր նստելս  
ու քնելս մեկ յեղավ:

Յերբ աչքերս բաց արի, լուսացել եր, ապին թեյ եր  
պատրաստում:

— Վեր կաց, բալա ջան, — ասաց նա. — խելազան տար,  
դուրսը լվացվիր ու արի թեյ խմենք:

Նստեցի նրա կողքին, իմ թեյը ածած՝ պատրաստ եր,  
յերբ վերջացրինք, ապին սենյակի դուռը փակեց, բանալին

փեշակ սովորեցնում. ճաշ էլ են տալի. իմ յերկու տղին էլ ենատեղ եմ տեղավորել. դրա պես լավ ուսումնարան չկա: Գընանք, կարելի յե ես ըրեխին էլ ընդունեն:

Նա վերաբերուն պեց ուսին, շտապելուց միայն մի թեւհազար ու ընկավ մեր առաջ:

Հորս աչքերն ուրախությունից փայլում էին. մեջքը ուղղվել էր, կարծես մի մեծ բեռ էր ընկել ուսերից:

Ծածկված փողոցից դուրս յեկանք, ծովեցինք դեպի աջ, մի յերկու փողոց էլ անցնելով, մտանք մի մեծ բակ:

Յերեխաները վազվզում, խաղում էին: Մի նիհար ու բարձրահասակ մարդ, վրակե ակնոցներով մոտեցավ մեզ: Խանութպանն առանձնացավ նրա հետ ու սկսեց մտերմաբար խոսել: Խոսելիս մատնանիշ էր անում ինձ:

Վերատեսուչը սիրալիբ նայեց ինձ ու գիմելով հորս հարցրեց.

— Գրեկ-կարդալ գիտե՞:

— Հա, շատ թե քիչ սովորեցրել եմ. դե մեր գեղում ուսումնարան չկա, վոր յերեխան կանոնավոր մի բան իմանար, բայց շատ աչքաբաց, ուղուվում ա:

— Իսկ թվաբանություն:

— Թվաբանությունից լավ ա. միտքը սուր ա, — ասաց աղին:

— Լավ, կընենք, յեթե շատ թույլ չլինի, կընդունենք:

Խանութպանը սեղմեց վերատեսչի ձեռքը, ապա դիմելով հորս, ասաց.

— Յեթե յերեխին չընդունեն, բերք ինձ մոտ:

Հենց եղ ժամանակ դանգը խփեցին, յերեխաները հա՛վաքվեցին դասարանները:

Վերատեսուչը մեզ տարավ մի ընդարձակ սենյակ. հորս խնդրեց, վոր նստի, ու սկսեց քննել ինձ: Նախ թվաբանությունից. յես բոլոր հարցերին պատասխանեցի, մի յերկու խնդիր էլ բերանացի լուծեցի: Ապա սկսեց հայոց լեզվից. յես կարմրել, ամբողջ մորմնով դողում էյի, թվում էր սըրտիցս քաշում, մի բան են պոկում, քրտինքը ճակտիցս կաթկաթ ընկնում էր...

Ապին խեղճ-խեղճ նայում էր ինձ, յերեկ գգում էր, վոր չպիտի կարողանամ քննություն տալ:

Լավ էր յերկար չտեց:

— Լեզվի կողմից մի փոքր թույլ ե, բայց ինչպես տեսնում եմ, ընդունակ յերեխա յե. վոչինչ, շուտով կհասնի ընկերներին, — ասաց վերատեսուչն ու ցուցակագրեց ազգանունս, տարիքս, վոր գյուղից լինելս ու դառնալով հորս ասաց.

— Ծննդյան վկայականն անհրաժեշտ ե, վորքան կարելի յե շուտով հասցրեք:

Հայրս շնորհակալություն հայտնեց ու գնաց դուրս:

Վերատեսուչն ինձ տարավ կողքի դասարանը, ուր պաշտպանում էին թվաբանություն. ինձ տեղավորեց ու դուրս գնաց:

Յերբ դասը վերջացավ, դուրս յեկա գալիթ, տեսա հորքս պատի տակին մի քարի վրա նստած:

— Ապի, — ասացի յես և ուրախ-ուրախ վազեցի ընկա նրա գլխի:

— Ա՛յ, ես պատկերներով գիրքն ուսուցիչը տվեց, դաս նշանակեց «Հին տունը». վաղը պիտի անգիր անեմ...

Հորս դեմքին թեթե ժպիտ խաղաց:

— Հապա գիշերը քնելու տեղ... — ու դեմքը նորեց մոռցվեց: Նրա տխրությունն անդրադարձավ և ինձ վրա: Յես էլ տխրեցի, ճիշտ, վորտեղ պետք է քնեյի գիշերը...

Յերեխաները վազվզում, ուրախ-ուրախ խաղում էին, յես հորս կողքին քարի վրա նստած, նայում էյի նրա աչքերին, նրա վշտահար դեմքին ու մտածում...

— Ապի, յետ գնանք գեղը, յես էլ չեմ փախչիլ, — հաստատ, կարուկ ասացի յես:

— Չե, բալա ջան, քեզ յետ չեմ տանիլ մեր են քանդավածը:

Նա տեղիցը վեր կացավ, մի անգամ էլ գննողաբար նայեց ինձ ու ասաց.

— Եստեղ մնա մինչև իմ գալը:

Այս ասելով նա շտապ դուրս գնաց:

Չանգը խփեցին, մտանք դասարան, նորից դուրս յեկանք, վերջն աշակերտները բոլորը գնացին իրենց աները: Յես մնացի մենակ:

Արևը թեքվել էր, ծառերի շվաքները յերկարացել, որը մթնում էր, ապին չկար. շուտ-շուտ մոտենում էյի դարպասի մեծ դռներին, նայում էյի դուրսը. ապին չկար ու չկարքիչ էր մնում սիրտս ճաքեր. ուր կգնամ, ի՞նչ կանեմ յես...

Մեկ էլ տեսա ապին ուրախ-ուրախ ներս յեկավ, կըռնիցս բռնեց ու աղավ:

— Գնանք, գիշերը քնելու տեղ արի քեզ համար:

— Ապի, ով գիտե թառլանը ծախեցիր, — վախված լով հարցրի յես ճանապարհին:

— Չե, բալա ջան, գոմումը կապած, իրա համար զարի ա ուտում:

Յես հանգստացա:

Յեկանք մեր սենյակը, ապին խուրջինը բաց արավ, պաշարը դարսեց սեղանին... Թեև սովից սիրտս գնում էր, բայց յես վազեցի գոմ, Թառլանի գլուխը սեղմեցի կրծքիս, ճակատը համբուրեցի ու յեկա հորս մոտ:

Եզ որը հալալ հաց կերանք, հորս լեզուն բացվել էր, կես շիշ ողին առաջը դրած խմում ու խոսում էր հետս:

— Դու լավ աստղի տակ ես ծնված, վորդի, բախտ ունես. ուր գնացինք, աջողվեց. տեսնո՞ւ ես ոտար խանութպանը, վո՞նց առաջ ընկավ... Բա մեր Շահնանց լեռնո՞ւ, ես, վոր վազալ բանում ա: Չին դուրս քաշեցի մեյդան, ծախում էյի. վո՞րտեղից վորտեղ դուրս յեկավ նա. ձին ձեռքիցս խըլեց. «Մի ըրելա չի, աչքիս լսի պես կապեմ, իրար հետ կապենք», — ասաց ու ձին տարավ, կապեց գոմումը:

— Դե, յես էլ պարտքի տակ մնացող մարդ չեմ, սելը կլծեմ, մի ջլավ գարգա ցորնի ալիր, յեղ, պանիր կբերեմ... Են դուքանչու համար էլ մի խուրջին կշինեմ: Նրա արած լավությունն ամենից շատ էր... Դու մենակ լավ սովորի մեծ մարդ դառ...

Եզպես խոսում ու բաժակ-բաժակի յետևից դատարկում էր, յես նրան եզպես ուրախ աեսած չեյի:

Են տունը, վորտեղ յես պիտի մնայի, գտնվում էր քաղաքի մի յես ընկած թաղամասում, վազալի մոտերքը:

Ապին առավոտներն ինձ տանում էր ուսումնարան, յերկուները գալիս՝ տուն էր բերում:

Մի յերկու որից, յես արդեն սովորել էյի ճանապարհը, մենակ գնում գալիս էյի:

Ապին Թառլանին նստած յեկավ, ձիուց իջավ, գրկեց ինձ, ամուր-ամուր համբուրեց:

— Մնաս բարով, Մադի ջան, խելք կաց, քի մասաղ — ասաց նա, թաղիկնակը հանեց, յերեսը շուռ ավեց, աչքերը սրեց. նորից նստեց Թառլանին ու ճանապարհ ընկավ...

Իր կյանքում առաջին անգամս էր նա ինձ համբուրում. յես ենքան էյի հուզվել, վոր վոչ մի խոսք չկարողացա արտասանել. ուզում էյի ասել՝ նանին շատ բարով արա, Կատին, Մարինին... յերեխանցը...

— Ապի, ապի, — շնջացի յես նրա յետևից...

Նա յետ նայեց, ձեռքը բարձրացրեց, մեր հայացքները հանդիպեցին իրար. յերևի նա յել էր հուզված ինձ պես, ձին բռնեց, ընկավ կողքի վորդոցն ու անհայտացավ աչքերիցս:

## VI

### ԱՐՇԵՍԱՎՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Յես վերադարձա տուն, գլուխս թաղեցի բարձի մեջ ու սկսեցի հեկեկալ: Տանը մարդ չկար. եզ մեծ քաղաքում յես ինձ զգացի մենակ, վորը ու անխնամ...

Դուռը բացվեց. լեռնո՞ւ էր:

— Ագա, Մադի:

— Հը՞, — ասացի ու տեղիցս վեր թռա:

— Ագա, եզ ինչի՞ յես լաց յեղել:

— Ապին գնաց գեղ, — ասի յես ու նորից սկսեցի հեկեկալ:

Լեռնո՞ւ մոտեցավ, ձեռքը դրեց ուսիս ու ասաց.

— Վա՛յ, Մադի... բա յես հենց գիղեյի իգիթ ես, բա

աղամարդը լաց կ'ընէր... Վոր կեսդ ել կտրած ըլեն, աչքդ չըպիտի թաց անես: Փեշաքարի շկոլն ես ընկել, գիտես թ'նչ ուսումնարան ա. դա վոր պրծնես, ինձ մոտ վաղդալ պիտի տանեմ քեզ: Գնա յերեսդ լվա, սրանից հետո վոր աչքերդ թրջել ես, վայ քու մեղքը... Ինձ խնջո կասեն, յես քու նանն ու ապին չեմ, վոր «քե մատաղ», «քե դուրբան» անեմ...

Յես վախեցած նայեցի նրան. աչքերից կարծես կրակ եր թափվում, մոտ յերեսուն տարեկան առույգ յերիտասարդ եր. դեմքը վերին աստիճանի արտահայտիչ, նա տեղովը մեկ յեռանդ եր... Նրա խոսքերն ազդու էյին, թափանցում էյին սրտիս խորքերը:

Յնրբ լվացվեցի, ներս յեկա. նա բոլորովին փոխված եր. մոտեցալ, ուղիղ աչքերիս նայելով ասաց.

— Իեշ սիրա ունես, Մաղի ջան, յես վոր եղպես սիրտ ունենայի, կրժքիցս կհանեյի, դեն կզցեյի...

Խեղճ-խեղճ նայեցի ու լռեցի... Շատ ուշ, յերբ կյանքի չարն ու բարին իմացա, միայն այն ժամանակ հասկացա նրա եզ խոսքերի իմաստը...

Յերեկոները նա ժամերով խոսում, խրատում եր, յես ակնածությամբ լսում էյի: Նրա յուրաքանչյուր խոսքը տըպավորվում եր իմ սրտում ու եզ մանուկ որերիս բաղձանքն եր, վոր մի խնջո յել յես դառնամ...

Ուսումնարանի ճանապարհն արդեն սովորել էյի, մեհակ գնում-դալիս էյի: Ինձ դժվարացնում եր տեղական լեզուներ չիմանալը: Խոսում էյին վրացերեն, առաբերեն, իսկ յես գիտեյի հայերեն, թուրքերեն: Բայց շուտով ընտելացել, նույնիսկ անհրաժեշտ բառեր յուրացրել էյի:

Մեր արհեստանոցը դեռ կարգի չէյին բերել. ուսումնարանը նոր եր բացվել. մի շաբաթ ավել գնում-դալիս էյինք, մենակ ուսումնական մասն եր կանոնավոր: Մենք ազատ ժամանակ խաղում, վաղվում էյինք. պետք է ասած, շատ շուտ ընտելացա ու սիրեցի քաղաքի յերեխաներին:

Մի օր վերատեսուչը յեկալ դասարան, դիմելով մեզ հարցրեց.

— Ո՞վ ինչ արհեստ է ուզում սովորել:

Նա մի առ մի թվեց բոլոր արհեստների անունները — «վահանագործի», «ատաղձագործի», «դարբնի» և «ձուլարանի»: Ինձ խնջոն ասել եր, ձեռքս բարձրացրի ու ասացի.

— Յես ընտրում եմ փահանագործի արհեստը:

Վերատեսուչը քննող հայացքով նայեց ինձ. յերեկ իմ ֆիզիքական կազմվածքն եր դիտում:

— Լավ, — ասաց նա ու ազգանունս գրեց մատյանում:

Յերբ ամբողջ դասարանը ցուցակագրած եր, մի մեծ ձառ ասաց: Այսքանն եր տպավորվել իմ մեջ, վոր ամեն մի մարդ արհեստ պիտի գիտենա. ով փեշակ չունի, նա կորած է. «Արհեստ իմացողի մատները վոսկի յեն»... Այդ խոսքերի վրա յես ակամայից նայեցի իմ ձեռքերին, փոքրիկ մատներըս շարժում էյի, կարծես ինչ-վոր վորոտումների մեջ էյի...

Նա դարձյալ շատ բան ասաց, վերջը ջերմ խոսքերով շնորհավորեց մեզ:

— Վաղն առավոտ, — ասաց նա, — կդաք արհեստանոց, կստանաք գործիքներ ու կսկսեք աշխատել:

Մենք ուրախությունից թռչկոտում էյինք. յերբ յեկա տուն, բոլորը պատմեցի խնջոյին ու ավելացրի.

— Սլեսարությունն ինչ ա վոր, մի շնչում կսովորեմ: Ինձ թվում եր, վոր դա յել «այբբեն»-ի պես հեշտ է: Խնջոն մի կուշտ ծիծաղեց:

— Իո՞ւ մի տարում վոր կարողանաս կանոնավոր մուրճ բռնելը սովորես, լավ ա. հապա ուղիղ խարտոցե՛լը, գործիքներ մխե՛լը, նորոգե՛լը... Ենքան բան կան, բալա ջան, դու առ ուղուփ ունենաս:

— Ուղուփն ինչ ա, քեռի:

— Ուղուփը, ուղուփը... վոնց ասեմ, յանի թե, շնորհք «զեհմ», դայրաթ...

Իհարկե, եզ խոսքերից բան չհասկացա, ու ամբողջ ժամանակ գլխումս պտտվում էյին խնջոյի ասած խոսքերը: «Ուղուփ», «դայրաթ»... Ինձ պատկերացնում էյի մեր գյուղի դարբնին, յերկաթները ձեծելիս, մեր Բաննահ Աթոյին,

քառ ու կրող դուզ-դուզ պատեր շարելիս... Եղ մտածմունք-  
ների մեջ ամբողջ գիշերը չափ ու ձև եյի անուամ...

Առավոտը շատ վաղ զարթնեցի, տեղեցս վեր թռա, շո-  
րերս շտապ հագա, վագգալի «գուղոկը» հնչեց: Խեչոն վեր  
կացավ, զարմացած նայեց ինձ ու ասաց.

— Ա՛յ, դայրաթն ետա, հա՛, տես վոնց ես վեր թռել...

Մենք միասին դուրս յեկանք. նա գնաց իր արհեստա-  
նոցը, յես՝ իմը:

Վերատեսուէն ու վարպետն յեկան արհեստանոց ու  
մեկ-մեկ ազգանունով կանչում էին մեզ:

Յերբ իմ ազգը լսեցի, կեծ-կարմիր կտրած՝ ներս մտա  
ու կանգնեցի վարպետի առաջ:

Նա գննողաբար նայեց ինձ. մի վայրկյան տիրեց լը-  
սություն:

Վարպետը, վոր մի շեկ մագերով, համակրելի դեմքով  
յերթտասարդ եր, մկաններս շոշափեց, կոններս սեղմեց, ապա  
ժպտալով հարցրեց.

— Կարող ես փականագործ լինել:

— Կարող եմ, — ասացի ու վստահ նայեցի նրան:

— Ա՛յ, տես, պետք ե լավ աշխատես, — ասաց նա ու  
ինձ տարավ դասգյահի վրա ամրացրած, մի ցածլիկ ման-  
գանայի առաջ կանգնեցրեց:

— Սա կլինի քո մանգանան, ես ել քո գործիքները:

Վարպետը դուրս քաշեց կողքի արկղը, վորտեղ դասա-  
վորված էյին մի գեղեցիկ մուրձ, մի տափակ խարտոց, մի  
պողպատի կտրիչ, մի անկյունաչափ: Արկղիկը նորից փա-  
կեց, բանալին ավեց ինձ ու ասաց.

— Սպասիր Եյստեղ, վոչ մի տեղ չգնաս:

Յերբ այդպես մոտ քսան հողի շարվեցին իրանց հատ-  
կացրած մանգանայի շուրջը, բերեցին իբրև առաջին փորձ աշ-  
խատանքի համար թուջից ձուլած, մոտ տաս բթաչափ մեծու-  
թյամբ հարթ «քառակուսի»: Դա կոչվում եր առաջին «պրի-  
յոմը», մեկ-մեկ բաժանեցին մեզ: Վարպետը հերթով մտե-  
նում, պրիյոմն ամրացնում եր մանգանայի բերանին. ցույց

եր տալի, թե ինչպես պետք ե տաշել — կուռը շարժել, վոր  
հարվածներն ուժեղ լինեն:

Յես հեռվից նայում էյի, թե ինչպես են պրիյոմն ամ-  
րացնում մանգանայի վրա, ինչպես են թուջի յերեսը տա-  
շում... Մինչև վարպետի ինձ հասնելը, յես պրիյոմն ամրաց-  
րել, մի ավին ել տաշել էյի...

Յերբ վարպետը մոտեցավ ինձ, յես կանգ առա:

— Շարունակիր, շարունակիր, — ասաց նա ու սկսեց  
նայել, թե ինչպես եմ կուռս շարժում:

— Մուրձն ամուր սեղմիր, կուռգ ազատ, ավելի լայն  
շարժել, կտրիչն ավելի թեք բռնիր. եղպես, եղպես, — ա-  
սաց նա:

Յես վողկորվեցի, ավելի շուտ շփոթված՝ վարպետի  
ցուցմունքի համաձայն մուրձը տարա-բերի ու փոխանակ  
կտրիչին՝ խփեցի ձեռքիս յերեսին. ձեռքս իսկույն արյուն-  
վիկ յեղավ:

— Վոչինչ, ետ ել ե հարկավոր, դու ինձ մոտ լավ  
վարպետ կգառնաս, — ասաց նա ու գնաց կողքիս աշակեր-  
տի մոտ:

Բոլորս իրար նայելով, թըր՛խկ-հա-թըր՛նիկ տաշում  
էյինք: Արհեստանոցում տիրում եր մի առանձին կենդանու-  
թյուն. բոլորս յեռանդով աշխատում էյինք:

Վարպետն ամբողջապես եներգիա դարձած, մոտենում  
էր այս ու այն աշակերտին, առնում եր մուրձն ու ինքն եր  
տաշում, ուղղելով նրանց սխալները:

Յես աչքիս տակով նայում էյի ընկերներիս, նրանք  
դեռ մի կողմն ել չէյին տաշել, իսկ յես համարյա ավար-  
տում էյի: Նրանք նախանձով էյին նայում ինձ, իսկ յես  
ավելի ու ավելի յեռանդով էյի աշխատում:

Հենց առաջին օրից զգացի, վո՞ք մեր մեջ կա մանկա-  
կան մի անմեղ նախանձ, մի ինչ-վոր ձգտում բոլորից ա-  
ռաջ անցնել, բոլորին հաղթահարել և կարծես եղ ներքին  
մրցումն եր, վոր մղում եր ինձ առաջ...

Յերբ տաշելը վերջացրի, պրիյոմն առա, վագեցի վար-  
պետի մոտ և վստահ, վոր նա պիտի հավանի, ասացի.

— Լաղ եմ տաշել, չե՛ս:

— Չե՛ս, — ասաց նա կարուկի, — տեսնո՞ւմ ես, ետանդ փոս Ե ընկած, խսկ մյուս կողմը դուրս ե պրծած. նայի՛ր, անկյունաչափը հարթութեան վրա խաղում ե. նա ի՛ր բոլոր կետերով պիտի միանա հարթութեանը.

Յես կարմրել եյի. յերբ նա տեսավ իմ դեմքը, մի անանձին բարի ժպիտ խաղաց նրա շրթունքներին:

Պրիյոմս առա, վաղեցի իմ տեղն ու սկսեցի ուղղումներ անել:

Չանգը սովին, հարվածները ըոպեապես դադարեցին, դրան փոխանակեց մանկական կենդանի ազմուկ...

Գործիքները հալաքեցինք, բանալիները կախեցինք լրենց համարներին ու շտապեցինք տուն:

Չնայելով մի քանի ժամ եյի աշխատել, ինձ թվում եր, վոր յես արդեն «սլեսար եմ» դարձել. քայլերս մի տեսակ խրոխտացել եյին:

Իմ արկղիկը, մանգանան, մուրճը, խարտոցն աչքիցս չեյին հեռանում... «Յերբ պիտի մթնի, նորից լուսանա, վոր գնամ աշխատեմ», — մտածում եյի յես:

Նեչոն յեկավ:

Յես ուրախ-ուրախ պատմում եյի նրան: Մեծ նորություն եր ինձ համար, յես մի առ մի նկարագրում եյի իմ գործիքները. հիացած եյի մանգանայով:

— «Գիտես, պրիյոմս ի՛ր բերանի մեջ ենպես ամուր սեղմում ե նա... — վոգեւորված խոսում եյի յես, խսկ նա ծիծաղում եր իմ անմեղ յերեխայութեան վրա:

— Բա ձեռքիդ վոնց խփեցիր, — հարցրեց նա:

— Վոչինչ, վաւրպեան ասաց՝ եղ ել ե հարկավոր, — ասացի յես:

Ամոթխած նայեցի ու չգիտեյի ձեռքս վորտեղ պահեմ:

Եդ գիշեր համարյա չկարողացա քնել. ամբողջապես իմ գործիքների հետ եյի. մերթ մանգանան եր աչքիս առաջ, մերթ անկյունաչափը, մերթ կարիչն ու մուրճը...

Իեռ լուսը չբացված, Նեչոյին թողի քնած ու շտապեցի ուսումնարան: Ծառան զարմացած նայեց ինձ:

— Ա՛յ տղա, գիշերը քունդ չտարմի՛, — ասաց նա:

— Չե՛ս, բիձա, — ասի յես ու նստեցի յերկար նստարանին, մեր բակի մի մեծ ծառի տակ:

Մառախլապատ առավոտ եր. յերեսիս փչում եր սառը քամի. ծառերի ճյուղերը ոբորվում եյին գլխիս վերե, տերևները խշշում ու անձրևի կաթիլների հետ մեկ մեկ ընկնում եյին ցած: Ինձ թվաց, վոր մեր սարերում, մեր ձորերումն եմ... Ջրերը վշշում են, կոլ ու հորթ բառաչում, յես անձրևի տակ վազվզում եմ այս ու այն կողմը, ոգնում եմ նանին:

— Նեչումյան Մաղի... — սկանջիս հասավ մեր աշակերանների ձայնը:

Յերբ աչքերս բաց արի, սիրտս ուժգին բաբախում եր. նայեցի շուրջս. աշակերաներ—հաս ու կենտ յեկել հալաքվել եյին արհեստանոցի ծածկի տակ... Նայեցի ու նորից աչքերս փակեցի. չեյի կարողանում անջառվել իմ մտապատկերներից, ենքան հարազատ, սրտագին եյին նրանք իմ մանուկ հոգու համար... Լավեց դանգը, տեղիցս վեր կացա և շտապեցի արհեստանոց:

## VII

### ՅԵՐԿՐՈՐԴ «ՊՐԻՈՍԸ» \*)

Վաղ առավոտվանից սկսվեց մեր աշխատանքները: «Պրիոմս» ամրացրի մանդանին, մուրճն ու կարիչն առաձեռքս ու հիշեցի Նեչոյի խոսքերը.— «Մի տարում հաղիլ թե դու կարողանաս սովորել մուրճն ուղիղ բռնել»: Իսկ ինձ թվում եր, վոր յես արդեն տիրապետում եմ այդ գործիքին:

Մուրճն ամուր սեղմեցի ու յեռանդով սկսեցի տաշել: Մի կարճ ժամանակում աշխատանքս ավարտեցի ու իսկույն վաղեցի վարպետի մոտ:

Նա մանրամասն դիտում, անկյունաչափով ստուգում եր, խսկ յես կողքին կանգնած, աչքերս լայն բացած, նստում եյի նրա բոլոր շարժվածքներին և մտածում.

\*) Թուշից հատուկ պատրաստած քառակուսի

«Յերևի շատ պակասություններ պիտի գտնի, «պրիոմը» յետ պիտի տա ու ասի. «Ինչ անուղուփ ազա յետ, տար մի լավ ուղղումներ արա ու բեր»:

Հակառակ իմ մտածմունքներին, նա առանց խոսք ասելու, մոտեցավ իմ մանգանին, պրիոմը ամբացրեց, սկսեց խարտոցել ու ցուցմունքներ տալ:

Նրա կռները կարծես ձուլված լինելին խարտոցի հետ. թեթև սահում էլին պրիոմի վրա, տարածելով փափուկ ու մեղմ խզող... Դա այլևս մուրճերի այն խրատուցիչ հարվածները չէին, վոր արհեստանոցը լցնում էլին իրենց դժբաղդունով:

— Ահա, այսպես. աջ ձեռքով խարտոցի կոթը սեղմիր, ձախով հենվիր մյուս ծայրին ու թեթև սեղմելով՝ խարտոցիր, աշխատելով պահել հավասարակշռություն: Կռներդ շարժիր ազատ, կուրծքդ դուրս դրած պահիր:

Յես վարպետի պողան ընդունած, թեևրս շարժում, խարտոցում էլի ու աչքի տակով նայում նրան:

— Այ, այդպես, — ասաց նա, մի փոքր ել կանգնեց, մի քանի ցուցմունքներ ել արավ ու դո՛ս սրտով հեռացավ:

Յես ազատ շունչ քաշեցի. ճակատիս քրտինքը սրբեցի ու յեռանդով սկսեցի խարտոցել: Բայց չգիտեմ ինչու խարտոցի աշխատանքն ինձ չէր գրավում. ամբոս չէր մուրճի աղմկալի հարվածները, թեև ձեռքիս յերեսը արյունալի էլ էլ անում, բայց մի ներքին կենդանություն, աշխույժ էլի զգում մուրճի հետ:

Վարպետը գալիս, մեկ-մեկ ուղղումներ եր տնում, բացատրում, բայց յետ բան չէլի հասկանում. ույժ էլի աալիս կռներիս, ամուր սեղմում էլի խարտոցի կոթը, թվում եր, դրա մեջն է հունարը:

— Թեթև շարժիր խարտոցը, հավասար պահիր, — պընդում եր նա:

Բայց իմ կռները դավաճանում էլին ինձ. չէլի կարողանում հավասարակշռությունը պահել՝ ուղիղ խարտոցել:

Այդպես մեծ դժվարությամբ, հինգ վեց ուղիղ ընթացքում, հազիվ վերջացրի առաջին պրիոմը: Են կոշտ ու կո-

պիտ թուշի կտորից ստացվել եր հարթ ու հավասար, մի կանոնալոր խորանարդ: Յես նայում ու հրճվում էլի առաջին ձեռակերտովս. նրա ամեն մի անկյունը, ամեն մի կողմը, հարթությունը հարազատ եր ինձ:

Յերեկոյան, յերը Խեչոն յեկավ տուն, յետ լեզու էլի յեղել ու անկապ բռներով՝ պատմում, նկարագրում էլի իմ բոլոր տպրումները:

Խեչոն բարի ժպիտը դեմքին, լուռ լուռ, գլխով դրական շարժումներ եր անում, յերևի հրճվում եր իմ մանկական վողկորությամբ:

— Դեռ շատ բան կսովորես, բալա ջան. փեշակն աղ-նվացնում է մարդուն. նրա մկանները յերկաթ է դարձնում՝ մատներից վոսիկ թափում... Եղպես դայրաթով աշխատիր, զու լավ վարպետ կբառնաս, ուր վոր գնաս, ուր վոր լինես — մի կտոր հաց կուեննաս:

«Ինչու մի կտոր...» — մտածեցի յետ, բայց իրան վոչինչ չասացի... Հետո, շատ հետո միայն հասկացա եզ խոսքի դառը ճշմարտությունը:

Հետևյալ առավոտ վարպետը յեկավ, տվեց ինձ յերկրորդ պրիոմը: Այժմ յետ գործ պիտի ուեննայի վոչ թե թուշի, այլ յերկաթի հետ: Մի քառակուսի յերկաթի կտոր եր. հինգ սանտիմ յերկարությամբ, յերկու սանտիմ կողմերով: Դրա հետ ել մի ուրիշ տափակ յերկաթ, տասը սանտիմ կողմերով և յերեք միլիմետր հաստությամբ:

Վարպետը մի սու մի բացատրում եր.

— Քառակուսի յերկաթի բոլոր կողմերը կանոնավոր խարտոցելուց հետո, պետք է տափակ յերկաթի մեջ պատրաստել մի այնպիսի համապատասխան բացվածք, վոր քառակուսին իր բոլոր կողմերով հավասարապես պահվի այդ բացվածքում:

Դրա հետ նա հանձնեց յերկու նոր գործիք, մի հատ մանրատամ, յեռանկյունի խարտոց և մի հատ «գրեղ», (յերկաթ ծակելու գործիք): Խարտոցը ծանոթ եր ինձ, բայց «գրեղը» նորություն եր ինձ համար. նա վոչ խարտոցին եր նման, վոչ մուրճին: Բարակ ու յերկար պտուտակի նման մի

կոկիկ գործիք եր, վորի լծակը յերբ շարժում եյինք, սոնակը արագութեամբ դառնում եր ու իր սրածայր լեզվակով ծակոտում յերկաթը:

Իմ կողքի յերկու ընկերներն հետ միաժամանակ անցանք գործի: Մի ներքին նախանձ կար մեր մեջ՝ ո՞վ շուտ կավարտի, ո՞վ լավ կկատարի իր աշխատանքը:

Իմ մի կողմը բանում եր շուրավերցի Հակոբ Տեր-Պողոսյանը, մյուս կողմը՝ զանձացի Ստեփան Նալբանդյանը:

Մենք առանց վայրկյան կորցնելու, գլուխներս կախած, խարտոցում եյինք: Այժմ բավականին վարժվել եյինք, առաջվա նման չեյինք դողում:

Եղ որը արհեստանոցում դադարել եյին մուրճերի հարվածները, բոլորը խարտոցում եյին:

Յես քառակուսի յերկաթի յերկու կողմը ավարտել՝ յերբորդ կողմն եյի սկսել:

Եղ ժամանակ արհեստանոց մտավ են վոսիկ ակնոցավոր մարդը, վոր ընդունել եր ինձ ուսումնարան:

— Տեսուչը, տեսուչը, — այս ու այն կողմից քշքշացին տղաներն ու ավելի աշխույժով սկսեցին աշխատել:

Նորեկը մտնեցավ, խիստ-խիստ նայեց մեր մրտած ու քրտինքի մեջ կորած դեմքերին: Յես մինչև ականջներս կարմրել, աչքերս գցել պրիտմիս, արագ-արագ աշխատում եյի:

— Հանդարտ, հանդարտ, առանց շտապելու. մի կզանալ այդպես, կուրծքդ գուրս գցած դահիք, — նկատեց նա, յերկու ձեռքով ուղղեց իմ պոզան, մի քննական հայացք, ու անցավ Նալբանդյանի կողմը: Նույն դիտողութուններն արավ նրան, ու երպես հերթով անցնում, ցուցմունքներ եր տալիս եղ շարքի ընկերներին:

— Շատ լավ մարդ ե տեսուչը, ինժեներ-տեխնոլոգ ե, — ասաց Նալբանդյանը:

Յես իբրև նոր աշակերտ, բացի վարպետից ե մեր յերկու ուսուցչից, դեռ վո՞չ վոքի չեյի ձանաչում, բայց այդ մարդը խորը կերպով տպավորվել եր իմ մեջ: Յես ուրախ եյի, վոր յեկավ ինձ մոտ, խոսեց ինձ հետ: Նրա հայացքի մեջ յես նկատեցի նույն հարազատութունը, ինչպես առա-

ջին որը: «Յեթե այդ մարդը չպատահեր, ո՞վ դիտել վորտեղ կլինեյի, գուցե մի խանութի աշակերտ, կամ մեր գյուղում՝ մեր գոմը քերելիս, ուրախին արախ տալիս», — մտածեցի յես, բայց այդ բոլորը մի ակնթարթ եր միայն, վոր յեկավ պաշարեց իմ ուղեղն ու անցավ:

— Ստեփան, տեսուչն ո՞վ ե:

— Տեսուչը, — ծիծաղեց նա ու իրեն պիտնականի ձև տալով ասաց, — նա մեր ուսումնարանի տերն ա, մեր մեծը:

— Հա, — ասացի յես ու ինձ պատկերացրի մեր գյուղի քյոխվային:

— Բա ո՞ւր եր, վոր ետքան վախտ չեր յերևում:

— Գնացել եր Բագու մեզ համար «ստանոկներ», «զարհոններ», «վագրանկա» բերելու:

Ուղում եյի հարցնել ի՞նչ ե «գարնոն», «ստանոկը», բայց ինձ զսպեցի, զգալով, վոր ընկերս մի կուշտ կծիծաղի իմ անհասկացող «գյուղացի» լինելուս վրա: Նորից «հա՛ն» արի ու լսեցի, իբր եղ բոլորը հասկանում եմ, ու յեռանդով սկսեցի խարտոցել:

Երպես բարվաճ գրութեան մեջ աշխատում եյինք:

Զգեսեմ շատ եր անցել թե քիչ, հանկարծ յերեսս տաքացավ, գլուխս սկսեց պտտվել, ձեռքերս դողացին, քթիցս սկսեց արյուն հոսել:

— Վոյ, ես ինչ պատահեց, Ստեփան, — ասացի յես ու ձեռքերս բնազդաբար տարա դեպի քիթս:

Ստեփանը խիստ-խիստ նայեց յերեսիս, յերևի գուցես թեկ եր. նա մտնեցավ, ձեռքս բռնեց ու ասաց.

— Արի գնանք, սառը ջրով լվացվիր, արյունը կկտրվի:

Յես գլուխս կախ, հետևեցի նրան: Արյունը կաթ-կաթ ընկնում եր հատակին: Բոլոր տղաները հարցական նայում եյին մեզ, բայց մենք առանց ուշադրութուն դարձնելու անցանք գավիթ: Մտնեցանք ջրի տակառին. Ստեփանը ջուր եր լցնում, յես լվացվում եյի, բայց արյունը չեր կտրվում:

— Ծակատիկ, ծոճրակիկ, — ցուցմունքներ եր տալիս նա ու ինձամբով ածում ցուրտ ջուրը գլխիս:

Յերբ դա ել չոգնեց, նա իր թաշկինակից պոկեց մի

փոքր կտոր ու դրանով կապեց արյունհոսութիւնը: Յերկուսս ել ազատ շունչ քաշեցինք, նայեցինք իրար ու ժլպտացինք:

— Դե, դու գնա, Ստեփան, վարպետը կը արկանա, — յերախտապարտ հայացք դցելով նրա դեմքին, ասացի յես:

— Վոչինչ, մի փոքր ել հանգստացիր ու միասին գընանք, — ասաց նա ու նստեց կողքիս, յերկար նստարանին:

— Գուցնա շատ ե թո՞ւք, — հարցրի յես:

— Չե, հիմի լավ ե: Ելի պատահել ե, վոր քիթիցդ արյուն գա:

— Մեր գյուղում մեկ-մեկ լինում եր, յերբ վրդովվում, բարկանում եյի վորեւե բանի համար, բայց եսպես խիստ չեք պատահեր:

— Ինձ հետ ել ե յեղել, վոր քիթս արնել ե, դատարկ բան ե, — հանգստացնելու համար ասաց նա:

— Խեչումյան, Նալբանդյան, վարպետը կանչում ե ձեզ, ինչ եք շինում, — լսկեց Տեր-Պողոսյանի ձայնը:

Տեղներիցս վեր թռանք ու շտապեցինք արհեստանոց: Վարպետը կանգնած եր մեր մանգանաների առաջ ու դժգոհ նայում եր մեզ:

— Եդ սըր եյիք, — բարկացած հարցրեց նա:

— Խեչումյանի քիթը արյունեց, տարա լվացելու:

— Նրա քիթն արյունեց, քեզ ի՞նչ պատահեց, վոր ժամերով մնացիր դուրսը:

Նալբանդյանը գլուխը կախել մեղավորի պես նայում եր ցած:

Յես ել չկարողացա համբերել. դժգոհ ու հուզված ասացի.

— Գլուխս պտտվում, քիչ էր մնում վայր ընկնելի, նա վոր չլիներ, յես... յես... չգիտեմ ինչ կպատահեր ինձ հետ:

Վարպետը խիստ-խիստ նայեց Տեր-Պողոսյանին, գլուխը շարժեց ու դառնալով ինձ ասաց.

— Խեչումյան, թե վատ ես գգում, թող Նալբանդյանը ուղեկցի քեզ ձեր տունը:

— Չե, այժմ լավ եմ, կաշխատեմ, — ասացի յես ու սկսեցի շարունակել իմ ընդհատած գործը:

— Լավ չե, Տեր-Պողոսյան, փոխանակ ընկերովդ ոգնելու, գալիս մատնութիւն ես անում, — ասաց վարպետն ու հեռացավ:

Եդ որը իմ աշխատանքը համարյա ջուրն ընկավ: Կըռներս թուլացել եյին, ականջներս խշշում եյին, գլուխս ծանրացել եր, չեյի կարողանում աչքերս բանալ:

Չանգը ավին, գործիքները հավաքեցինք, գնացինք մի լավ լվացվեցինք: Նալբանդյանը կողքիցս չեք հեռանում:

— Մադի, արի գնանք մեր տուն. ետեղից շատ մտա ե, մի լավ կհանգստանաս ու կգնաս:

— Չե, Ստեփան, յես ինձ միանգամայն լավ եմ գգում, — ասացի, ու ուրախ ձեռնալով, սկսեցի քայլերս արագացնել:

— Ուզում ես ճանապարհ գցեմ:

— Հանաք-հանաք դու ինձ հիվանդի տեղ ես դրեր, — սրտանց քրքջացի յես: Նա ել ժպտաց: Մենք մի յերկու փողոց միասին անցանք ու ճանապարհներս բաժանվեցին. նա գնաց իր տունը, յես իմը:

Տանը անհամբեր սպասում եյի Խեչոյին, վոր ամեն ինչ պատմեմ շշան. բայց նա ուշանում եր: Իուրս ու ներս եյի անում, նայում էի փողոցից, նորից վերադառնում տուն:

Մեկել հանկարծ աչքիս ընկավ սեղանի վրա մի թղթի կտոր:

«Մադի, մի քանի որս է յես Բագու յեմ գնում: Սեղանի արկղում քո ծախսերի համար փող եմ թողել: Վոչ մի բանում չխնայես քեզ: Դոշաղ կաց, առանց ինձ մեռնակ չտխրես»: Բո Խեչո:

Եդ որը թեե ուսումնարանիս հացն ու պանիրն եր իմ կերածը (նախաճաշը), բայց մի առանձին քաղց չեյի զգում:

Մովորաբար միշտ սպասում եյի Խեչոյին, նա գալիս եր ու մենք միասին ճաշում եյինք: Իսկ այժմ յես ինչ անեմ մենակ:

Մոտեցա պահարանին՝ հաց, պանիր հանելու. դռները

բաց արի ու մնացի զարմացած: Խեչոն ամեն ինչ տառաջուց հողացել եր ինձ համար, — մի յեկիսձ հավ, սպիտակ հաց ու մի քիչ տանձ ու խնձոր:

«Յարար յերբ պետք է նրա արած լավության տակից դուրս գամ» — անցավ մաքուս ու ինձ պատկերացավ Խեչոյի բարի, ազնիվ դեմքը:

Պահարանից հավը հանեցի, թեն ու բուլը կտրեցի ու հիշեցի Մտեփանին. «ես կաօրները կպահեմ, կամենեմ նրա համար»:

Եւ միտքն ուրախություն պատճառեց ինձ. սկսեցի ինքս ել ակորժակով կրծոտել հավի վոսկորները ու մտքով անցա մեր գյուղը, մեր տունն ու տեղը: Հիշեցի նանին, յերբ նա ճաշի ժամանակ, մի հավ բաժանում էր մեզ բոլորիս:

Հավաքվում էյինք նանի գլխին ու մեծ-մեծ պահանջներ դնում: Խեղճ նանը վոնց բաժաներ մի հավը մեզ՝ յոթը յերեխաների մեջ: Մորեխների նման, չորս կողմից վրա էյինք ընկնում մորս: Նանը ամենից առաջ բավարարում էր փոքրերին, ինձ գլուխն ու վիզն եր ընկնում, խկ ինքը մատներն եր լիզում:

Սյուրբ ամբողջ հաջե եր իմ արամադրության տակ, բայց ինչու ես ակորժակը չկար: Ինչո՞ւ ես ազահությամբ վրա չեյի ընկնում, ինչպես մեր գյուղում, մեր տանը...

## VIII

### ԻՍ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Ամեն ինչ փոխվել եր, ամեն ինչ հեղաշրջվել իմ մեջ: Կարծես յես ել ես մեր գյուղի Խեչոյանց Մաղին չեյի. մի մի նոր մաշի օր առաջացել իմ մեջ:

Եսքան կարճ ժամանակամիջոցում ինչը փոխեց ինձ. արհի՛սար, միւրճն ու խարտիցը, Խեչոն, Մտեփանը, ես վոսկե ակնոցավոր մանրը, շկ մագերով վարպեաը, մեծ հսկայական քաղմքը, թե՛ մի ուրիշ հանգամանք, վոր յես չեյի կարողանում ըմբռնել, հասկանալ: Մի բան միայն ինձ հա-

մար պարզ եր, վոր յես ել ես առաջվանը չեյի: Իմ մեջ կատարվել եր մի մեծ փոփոխություն՝ թե՛ մշուշապատ, անկաղմակերպ, բայց կատարվել եր:

Ո՛ւր պիտի տանի դա ինձ, ինչ ուզի պիտի բացվի իմ առաջ, ինչ է սպասում ինձ... Իմ մանուկ հոգին եր վորոնումների, ձգտումների մեջ խարխափում եր... Պիտի կարողանամ արդյոք ինձ պատած սարգի վոստայաների թելերը կտրատել, ազատ դուրս սողալ, թե՛ պիտի ավելի ու ավելի խճճվեմ ու կուլ գնամ քաղաքի ծխոցի մեջ...

Թեքես մի ներքին հույս, թանձր քոյի տակ թաքնված, մի ջերմ զրպանունք, սպազայի վառ հույսերով, վոզեորում, քաջալերում եր ինձ...

Որը մթնեց, լամպը վառեցի ու սկսեցի դասերս պատրաստել: Յերկու ուսուցիչ ունեյինք. մեկը հայոց լիզվի ու կրոնի, մյուսը՝ թվարանության ու բնագիտության: Յերկուսն ել հենց առաջին օրերից լավ էյին վերաբերվում գեպի ինձ: Յես ել իմ հերթին, աշխատում էյի ճշտությամբ կատարել նրանց պատվերները: Դասերս պատրաստում, խընդիրները լուծում էյի, բոլոր հարցերին պատասխանում ու դրանով ավելի ու ավելի էյի կապվում իմ ուսուցիչների հետ:

Հայոց լիզվի ուսուցիչը — սև աչք ու ունքով, սև մեծ մորուքով քահանա յեր. (տղաներն ասում էյին «Դորպատյան համալսարան») է ավարտել, մեծ գիտնական է): Նա իրեն պահում եր շատ լուրջ ու խիստ և շատ կրոնամուլ եր: Դասերից առաջ, դասերից հետո, մենք վոտի կանգնած, ազոթում էյինք: Վայ նրան, ով իրեն անկարգ եր պահում... Յես ել դրանց թվին էյի պատկանում... Չգիտեմ ինչո՞ւ, այդ ազոթքների ժամանակ հանգիստ չեյի կարողանում մնալ... Մի անգամ նա ինձ խիստ նկատողություն արավ այդ առթիվ...

Մեր թվարանության ուսուցիչը նույնպես մազով, միջուքով մարդ եր, բայց սա ավելի շեկ եր ու յերիտասարդ: Հայտնի մատիմատիկոս-բնագետ էյին համարում նրան ընկերներս:

Նա դասարան եր մտնում լուրջ ու մտադրադ. մեղանից մեկն ու մեկին կանչում եր գրատախտակի մոտ, ինքն ել կանգնում եր նրա կողքին, թելադրում խնդիրը: Աշակերտը գրում եր գրատախտակի վրա ու ամբողջ դասարանը միասին լուծում եյինք: Եղ առարկայի մեջ յես առաջինն եյի. միտքս սուր եր. իսկույն ըմբռնում եյի նրա ասածները: Չեռքս բարձրացնում ու, թեև անկապ բառերով, բայց խնդիրը լուծում եյի ուղիղ: Կարճ ժամանակում այնքան եյի ընտելացել, վոր վոչ մի դժվարության առաջ կանգ չեյի առնում:

Վարդա համար յերեք խնդիր եր տված. յերկուսը հեշտ եր, մեկը՝ դժվար: Մի փոքր չարչարվելուց հետո խնդիրները լուծեցի ու մաքուր արտագրեցի: Հայոց լեզվից ունեյինք կարգալու ու պատմելու մի արձակ, և մի վտանավոր՝ անգլիեր անելու: Մի շնչում սոյորեցի, անգլիեր արի ու պրծա:

Քանի դեռ դասերով գրադված եյի, ժամանակը սահում եր աննկատելի: Յերբ գրքերս հավաքեցի, պայուսակս կապեցի, մի ծանր թախիժ յեկավ, պաշարեց ինձ: Սենյակի չորս պատերը, առաստաղը կարծես ճնշում-խեղում եյին ինձ... Այս մեծ քաղաքում առաջին անգամն եյի մնում մենակ: Գիշերվա խավարը, զբոսը յտրը լուսթյունը սարսափ եյին ազդում ինձ... Չեյի վախենում, դեռ շատ մանուկ հասակից չգիտեյի անն ինչ է. մեն-մենակ սար ու ձոր եյի ընկնում ու ժամերով թափառում: Իս չեր պատճառը. ինձ ճնշում եր մենակության տախտակը. նոր եյի զգում Խեղոյի հետ կապված լինելս...

Յերբ նա աշխատանքից վերադառնում եր, յես վազում եյի ընդառաջ. նրա հայացքը, դեմքը, բոլոր շարժվածքները, խաստալից խոսքերն ինձ թե ու թիկունք եյին սալիս: Նրա ներկայությամբ յես իմ մեջ մեծություն, հաղթական ուժ, կարողություն եյի զգում:

Նա պատմում եր իրենց գործարաններից, անց ու դարձից, ինձ համար հետաքրքիր, ուսանելի: Բայց այսոր, մենակության մեջ, սառսուռ եյի զգում, կարծես մի անհայտ ձեռք խեղդում եր ինձ...

IX

Մ Ր Յ Ո Ւ Մ

Շորերով ընկել, քնել եյի:

Յերբ աչքերս բաց արի՝ լուսացել եր: Գուզովի ձայնը տարածվում եր քաղաքի վրա: Տեղիցս վեր թռա, լվացվեցի, առա հաց, պանիր, Ստեփանի համար պատրաստած փաթեթը, գրքերիս պայուսակն ու քայլերս ուղղեցի դեպի ուսումնարան:

Ա՛հ, ինչ լավ ե վաղ առավոտը. արևի թարմ ճառագայթները գուրգուրում են քեզ, մեզմ զեփյուռը շոյում ե յերեսդ, հատակ, վաղորդյան ողը լայնացնում ե կուրծքը-թարմացնում ե քեզ...

Մոռացել եյի գիշերվա մտորումները: Բանվորների անց ու դարձը, դրա հետ գուզովի հարազատ կանչը միախառնվել, կենդանություն եյին տվել քաղաքին: Մարդիկ շտապում եյին. յես ել նրանց հետ՝ նրանց մի մասնիկը — կայստոս քայլերով կարում եյի փողոցները:

Ուսումնարանում դեռ մարդ չկար, նստեցի յերկար նստարանին, իմ սիրած ծառի տակ. գրքերս բաց արի, սկսեցի դասերս կրկնել: Գո՛հ եյի, վոր մենակ եմ. բարձր ձայնով կարգում եյի ու արտասանում իմ առգրք արած վտանավորը: Իմ ձայնը՝ ասեն մի հնչյունը, յուրաքանչյուր յերկնջը, քաղցր եր թվում ինձ... Տղաներն յեկան, խանդարեցին: Գրքերս ծալեցի, պահեցի պայուսակումս ու անհամբեր ուշաւում եյի Ստեփանին. առանձին կարոտ եյի զգում դեպի նա:

Ահա և Ստեփանը, ուրախ վազելով բնագոտայ յեկավ:  
 — Ի՞նչպես ես, Մադի, — յեղավ նրա առաջի հարցը:  
 — Շատ լավ եմ, — բացականչեցի ու սեղմեցի նրա ձեռքը:

Չանդը տվին. անցանք միասին արձեստանոց, ամեն մեկս կպանք մեր գործին:  
 Իմ աշխատանքն եզ սրը վնում եր սահուն: Քառակու-

սին վերջացնելու վրա էլի, մնացել էր յեռանկյունի խարտոցով հղկելը:

— Տեսնենք ո՞վ շուտ կավարտի, — ասացի յես Ստեփանին:

— Տես, քթիցդ արյուն չգա, — կես ծաղրական, կես հանաքին տարով ասաց նա:

Նրա եղ խոսքերն ան պցեցին իմ սիրտը, բայց շուտ անցավ: Աշխատանքը մոռացութեան տվեց գրան,

Վարպետը յեկավ, ստուգեց իմ ձեռակերտը. անկյունահաչափով նայեց: Ինձ թվում էր, վերջացնելու վրա յեմ, այն ինչ, նա դեռ շատ պակասութուններ գտավ:

Անցավ Ստեփանի մոտ. նրա պրիոմն անհամեմատ լավ էր: Նույնը և Տեր-Պողոսյանինը: Բայց դա ինձ չվհատեցրեց: Վարպետի ցուցմունքները ճշտութեամբ կատարում էի, հույս ունենալով, ընկերներիցս յես չմնալ... Քիչ հետո, պրիոմն առա, վագեցի վարպետի մոտ, բայց նա բավարար չհամարեց:

— Մի շտապիր, յեկել ես այստեղ սովորելու, — ինձ հանգստացնելու համար ասաց նա ու, նոր ցուցմունքներ տարով, ճանապարհ գցեց:

Ուզում էի, ինչպես ել վոր լինի, առաջինը յես ավարտեմ...

Եղ որը մեր աշխատանքը մինչև ճաշն էր: Զանգը խրփեցին: Մենք բնադրարար նայեցինք իրար. յես և Ստեփանը գո՛հ էլինք: Դո՛հ չէր միայն Տեր-Պողոսյանը. նրա դեմքին դեռ խաղում էր յերեկվա թուևտ նախանձը...

Մի ժամ հետո պիտի սկսվեր մեր դասարանային պարապմունքները: Տղաներից շատերը շտապեցին իրենց աները նախաճաշելու: Յես և Ստեփանը նստեցինք մեր սովորական տեղը, ծառի տակ, յերկար նստարանին ու ամեն մեկս հանեցինք մեր ունեցածը: Ստեփանն իր թել պանիրն ու տանու թխած հացը, յես էլ իմ բերած վոչխարի պանիրն ու հացը: Սովորաբար մենք մեր նախաճաշը միացնում էինք, և հասին մաքրազարդում, վրան էլ մի կուշտ սառը ջուլ: Խմում ու անցնում մեր պարապմունքներին: Բայց այ-

սոր ավելի ճոխ էր մեր նախաճաշը: յես բերել էի տանձ, խնձոր, Ստեփանը՝ յուղ ու շոր: Յերբ այդ բոլորը դարսել էլինք սեղանին, յես անհամարձակ մեկնեցի նախորոք պատրաստած փաթեթը:

— Ես քու բաժինն ե, Ստեփան:

Նա հեռաքրքրութեամբ բաց արավ, նայեց ինձ, սիրալիք ժպտաց, նորից խնամքով փաթաթեց, տեղավորեց պաշտակում ու ասավ.

— Սա յես կտանեմ մեր տունը, մայրիկիս համար:

Մի ներքին տխրութուն պատեց ինձ... Վոր ընկերս, այստեղ, իրա մոտ սրտակից, հարազատ մայր ունի, նա այսպիսի փոքր բաներով կարող է շահել մոր սիրտը, զբգվել, փայփայել... Իսկ յես...

— Ինչի՞ տխրեցիր, Մադի:

— Հիշեցի իմ նանին. յես էլ ճիշտ քեզ պես, յերբ վոր մի լավ բան էր ընկնում ձեռքս, պահում ու տանում—տալիս էի մորս... Նա համբուրում էր աչքերս ու ասում.— «Լավ չե, եղպես ջիգարով լինել, Մադի ջան»:

— Ինչի՞, նանի ջան, յես վոր մի լավ բան եմ անում, սիրտս ուրախանում ե, — ասում ու սեղմվում էի մորս կրծքին:

— Ա՛խ, Ստեփան, ենքան եմ կարոտել իմ նանին, մեր յերեխաներին, տանն ու տեղին, վոր չեմ կարող ասել...

— Ես ամառը յերկու ամիս արձակուրդ կունենանք, կգնաս, կտեսնես, կապրես գյուղում, — ասաց ու կարեկցարար նայեց ինձ:

Նրա այդ հայացքն ավելի տխրեցրեց ինձ:

«Մինչև ամառը կգա, իմն էլ ինձ կհասնի», — մտածեցի յես ու լռեցի:

Մեր նախաճաշը վերջացել էր: Յեկավ Տեր-Պողոսյանը, կերած, կշտացած կանգնեց մեր դիմաց ու աչք ծակելու համար՝ սկսեց կրծոտել մի հյութալի խնձոր: Մենք հասկանալով նրա միտքը, յերես դարձրինք ու հեռացանք:

Զանգը ավին. մտանք դասարան: Եղ որը հայոց լեզվից ունեյինք յերկու դաս, թվարանութունից՝ մեկ: Արթ-

քից հետո սկսվեց մեր սովորական պարապմունքները—միտ-  
րինակ ու տարտուռ: Վերջը յեկավ թվարանության ուսու-  
ցիչը. այդ դասն էլ անցավ ինձ համար անհետաքրքիր:

Ուշ յերեկո յեր, յերբ տուն հասա: Թեև պատերը նո-  
քից ճնշում էյին ինձ, բայց յերեկվա պես չեյի տանջվում,  
հաշտվել էյի վիճակիս հետ:

Չվածեղ արի, հաց, պանիր հանեցի, ընկա այժուսին ու  
տարվեցի իմ մտապատկերներով: Ամենից շատ ինձ դբադեց-  
նում եր յերկրորդ պրիտմը. քառակուսին, տափակ յերկաթը  
դառնում էյին աչքիս առաջ — դրս հետ էլ անբաժան, են  
շեկ վարպետը, իր լուրջ դեմքով:

«Վաղը պիտի ավարտեմ, վերջացնեմ պրիտմը», — վո-  
րոշում էյի ինքս իմ մեջ ու դանաղան չափ ու ձև էյի ա-  
նում: Միտքս մեկ էլ թռչում եր խեչոյին — Բագու, են մեծ  
քաղաքը. բայց ինձ չեյի կարողանում պատկերացնել այդ  
նավթաքաղաքը... Յերանի ինչ է անում խեչոն ենտեղ, նա  
յեկ հիշում է ինձ, թե՛ վոչ...

Մեկ էլ հանկարծ մտքով թռչում էյի մեր գյուղը, մեր  
տունն ու տեղը... Խոսում էյի նանի, ապնի հետ. և դա են-  
քան պարզ եր թվում, կարծես մոտները կանդնած, հետանե-  
րը գրուցում, պատմում էյի յերկաթե կամուրջների, Գուռ  
մեծ գետի, Թիֆլիսի յերկար-յերկար փողոցների, ենքան  
կառքերի ու մարդկանց մասին...

Դուռը բաղխեցին. իմ հասակակից, մեր հարևանի աղ-  
ջիկ Արփիկն եր, մի նամակ ձեռքին:

— Ես նամակը ձեր գյուղացի մի մեծ փափախով մարդ  
բերեց ու ասաց. «Ըրեխին տուր. ինքն էլ շուտով կգա»: —  
Խոսեց եղ փոքրիկ աղջիկը, նայեց ինձ, կարմրեց ու շտապ  
հեռացավ:

— Ծնորհակալ եմ, — հաղիվ կարողացա շնջալ նրա  
յետեկից:

Իմ յերեսն էլ այրվեց, թվաց ինձ, վոր յես էլ եմ ամ-  
բողջ դեմքով կարմրել:

Վաղեցի տուն ու անմիջապես բաց արի հորս գրած  
նամակը:

«Մադի ջան, մեր Ադամանց Չաքարի հետ ուղարկում  
եմ ձեզ համար մի քիչ բան ու ման, մի քիչ էլ քեզ են ու-  
սումնարան տանող մարդու համար: Ինքդ տար քու ձեռ-  
քովը տուր իրան:

Քու նանը, յերեխաները շատ են կարտուկ քեզ. նա-  
մակ գրի, ինչ էս անում, վճնց էս սպրում».

քու ապի:

«Իմ ապին է գրել էս ծուռն ու մուռ տողերը. — Թա-  
նաքամանը, փետուրի դալամը, թիրեքից ատել, նստել է սը-  
բահում, մեր թախտին, ունքերը կիտել, գլուխը կախել սպի-  
տակ թղթին ու դողդողալով շարժել է փետուրե գրիչը...  
Նանը նրա կողքին կուչ է յեկել, նայել է ապնի ձեռքերին  
ու խորը ան քաշել... Ինքը գրել չգիտե. — քանդվի էս սե  
ու մութաշխարհը. — սիլ է լսել, վոր աղջիկ-խիզանին գը-  
րել-կարդալ սովորեցնեն... Սազ գյուղումը, վողջ աշխարհում  
մի կնիկ չկա, վոր գիր-դալամ գիտենա... Իր սրտի ուղածը,  
իբ ցավը ու գարգն ասի իր յերեխին, են դարբը յերկրում  
սպրող աղային...

«Գրե, ասա, քու նանի աչքը ճամբի յե մնացել... լերդ  
ու թոքը թխվել, աչքերը չի ցամաքում... Գրե, ասա, արի-  
արի, Մադի ջան, արի իմ իզիթ բարս, — իմ սարերի մա-  
դան, դաշտերի քրքադան\*», Մադի ջան»... Ես այլ ես չի  
կարողացել խոսել... արցունքները խեղդել են նրա կոկորդը...

Կերակուրս ստուել, մնացել եր առաջս. հացը կուլ չեի  
գնում. սիրտս հուզվել եր: Նայեցի շուրջս, վոչ վոք չկար.  
նամակը մոտեցրի շրթունքներիս, արցունքներով թրջել էյի  
իմ ապնի գրած տողերը...

Դա իմ առաջին կարդան եր, վոր անում էյի այդ ան-  
շունչ թղթի կտորից... Առաջին նամակն եր կյանքիս մեջ,  
վոր իմ մանուկ հոգում ակոսում եր անջնջելի հետքեր...

Դեռ չեյի ուշքի յեկել, դեռ չեյի ամփոփվել ինքս իմ  
մեջ, դուռը բաղխեցին, տեղիցս վեր կացա, աչքերս սրբեցի

\* Մադան — հանք: Քրքադան — աշխատանք:

ու մտքով թո՞ւա Խեչոյին, բայց մեր գյուղացի՝ Աղամանց  
Զաքարն եր:

— Ազա, Մաղի, ես վերտեղ ես կենում, այ աղա, ազա,  
եղ խի՞ ա ունդդ թուր, եղ ուր ա կորել վարդի նման կար-  
միր թշերդ, — վրա ավեց նա, խուրջինն ուսեց վեր բերեց  
անքալով, փափախը հանեց, հենց իր փափախով ել ճակատի  
քրտինքը սրբեց ու նստեց թախտին:

— Դե, ասա ե՛, վճնց ես ապրում, ես պնդեր ծով քա-  
ղաքում վճնց ես գիմանում...

Նա, ել չսպասելով իմ պատասխանին, շարունակեց.

— Վճյ, Մաղի... այ զիզի հա... Վճնց փախար, դուշ-  
մանի աչքը հանեցիր... Իզիթ ես, իզիթ...

Նա գուցե գե՞ռ ելի յերկար շարունակեր, յես պահա-  
րանից հանեցի Խեչոյի թողած արագի շիշը, բաժակը լցրի-  
են սառած ձվածեղը, հաց ու պանիրն ել առաջ քաշեցի ու  
ասացի.

— Նհար արա, քեռի ջան, քի արժանի պատվելու բան  
չունիմ — (գործ անցի դյուղում լսածս դարձվածքը):

Նա արագը վոր տեսալ, աչքերը փայլեցին. մի մեծ  
կուռով կուլ ավեց, հազաց, դեմքը ծոմոնեց, թիթվացրեց, մի  
կտոր հաց, պանիր շտապ գցեց բերանն ու սկսեց լմլմել...

— Դե, ասամ չունե՞ս, քե մատաղ, — ասաց նա ու նո-  
րից ընկավ արագի ջանին:

Յես խուրջինը դատարկում եյի, նա աչքի տակով մերթ  
ինձ եր նայում, մերթ ողուն. բաժակ-բաժակի հետ կուլ եր  
տալիս ու ախորժակով լմլմում հաց ու պանիրը:

— Եղ բերածներիս կեսն են քու վարժապետի հմար  
ա. հերդ գրած կլի Դե, մնաս բարով, վրազում եմ. գնամ ու-  
լախին արշափ, ջուր տամ...

— Բա յե՞րբ ես գնում, քեռի:

— Եզուց վոչ երբ, են բաշտին. հա, թե բան ու ման  
ունես՝ բեր խանը, կտանեմ. դե, մնաս բարով, բալա ջան, —  
նորից կրկնեց նա, — երգան արև լինես, իմ տարը դառ-  
նաս...

Որհնեց քեռի Զաքարը, խուրջինը պցեց ուսը, ձեռնա-

փայտն առալ, մի անգամ ել նայեց տանտեղիս, քթի տակ  
ինչ-վոր փնթփնթաց... Յերևի ասաց. «Ի՞նչ լավ ոթախում ես  
կենում ես գյաղեն»... Դուլիը տմբամբացրեց ու դնաց:

## X

## Ա Ր Փ Ի Կ Ը

Նրա գնալուց հետո սկսեցի փաթեթները բանալ. մի  
փոքր կողով ձու եր, յերկու գլուխ պանիբ, յերկու կճուճ  
յուղ, մի հինգ-վեց գաթա, յերկու տապակած վառիկ, մի  
կճուճ ել դայմալ:

Առանց ժամանակ կորցնելու, առա մի գլուխ պանիր,  
մի կճուճ յուղ, յերեք գաթա, տեղավորեցի մեր մեծ պայու-  
սակում ու շտապեցի իմ ծանոթ խանութպանի մոտ:

Փողոցներում թաք ու թուք վառվում եյին լամպաներ,  
մութն ընկել եր, բայց յես ել առաջվա յերկշտոր չեյի. ըն-  
տելացել եյի քաղաքին, համարձակ քայլերով հասա ծած-  
կած փողոցին: Դեռ հեռվից նկատեցի իմ ծանոթ խանութ-  
պանին. նույն հագուստը, նույն գլխարկը, նույն արագ շաք-  
ժուռներով ապրանք եր տեղավորում դարակներում:

Յերբ ինձ տեսալ, մի վայրկյան կանգ առալ, խիստ-  
խիստ նայեց, յերևի չեր մտաբերում:

— Հայրս ե ուղարկել, — աչքերս խոնարհած՝ ցած,  
հազիվ լսելի մրմնջացի ու սկսեցի պայուսակը դատարկել:

Այդ մարդուն անչափ սիրում, հարգում եյի, բայց միև-  
նույն ժամանակ, քաշվում եյի նրանից, չեյի համարձակ-  
վում յերեսին ուղիղ նայել. թվում եր, վոր նա շատ մեծ  
մարդ ե:

— Ուղարկել ե, վոր ծախեմ, փողերը քեզ տամ, — հարց-  
րեց նա, նայելով պանրին, յուղի կճուճին:

Յես եղ մտքից ճնշվեցի, մինչև ականջներս կարծեցի:

— Չե, չե, — բողոքի մի հորձանք դուրս թռավ իմ  
կրծքից:

Նա նորից հարցական նայեց ինձ:

— Ձեզ համար ե... Հայրս ե գյուղից ուզարկել, դուք ենքան լավություն եք արել ինձ... եդ ինչ ե, վոր... Մնաք բարով, — ասացի յես. դատարկ սլաշուսակն առա, քայլերս ուղղեցի դեպի տուն:

Նա խանութի դռներում կանգնած, հեռվից դիտում եր ինձ... Յես բավականին անցել եյի, բայց նա դեռ նայում եր իմ յետևից:

Տուն հասնելուն պես, վրա ընկա նախի թխած գաթա-յին. մի շնչում կեսը վերջացրել եյի, վառիկի բուզն ու ճի-վը կրծոտում եյի, հանկարծ հիշեցի մեր հարեանի աղջկան:

«Լավ յերեխա յե. արի նրան ել բաժին հանեմ», — մտածեցի յես. վերցրի մի տասը ձու, դարսեցի ախետյում, վրան ել մի գաթա ու անհամարձակ բաղխեցի նրանց դու-որ: Ուզում եյի, վոր աղջիկը դուրս գա: Սրտովս յեղավ, նա յեր: Մեր ամոթխած հայացքներն առան իրար:

— Արփիկ, սա յել քու վախն ե, գյուղից են բերել...

— Շնորհակալ եմ, — ասաց նա. ափսեն ձեռքիցս առավ ու ներս տարավ:

Մնացել եյի յես դռների յետևում կանգնած. քիչ հետո նա ափսեն ձեռքին դուրս յեկավ:

— Մայրիկս շատ շնորհակալ ե, — ասաց. — ինչո՞ւ յեք անհանգստանում, նեղություն կրում...

Յես եդ բառերից բան չհասկացա. — «Ի՞նչ քաղաքա-վարի խոսքեր են, — մտածում եյի յես ու նայում աղջկան:

— Գու անուամը ի՞նչ ա, — դառավ նա ինձ:

— Մադի, — ասացի յես:

— Մադի, Մադի. սիրուն անուն չի, — շրթունքները ծոմակելով խոսեց ինքն իրեն:

— Բա վորն ա սիրունը:

— Ա՛յ, Սուրեն, Վաղգեն, Գուրգեն...

— Գու անունն ել սիրուն չե, — ժպտալով ասացի յես:

— Բա վորն ե սիրունը:

— Ա՛յ, Հերիքնազ, Գուլնազ, Սալիզադե, Շահազե, — ավեցի իմ գիտեցած, մեր գյուղի աղջկերանց անունները:

Նա ուրախ, քրքջալի ծիծաղեց իմ այդ անունների վրա: Յես ել իմ հերթին:

— Գու քույր ունի:

— Ունիմ, են ել չորսը. իսկ դո՞ւ:

— Յես վոչ քույր ունեմ, վոչ յեղբայր:

— Դրա համար ես եղպես յերես առամ:

Նա ժպտաց ու սիրալիբ նայեց ինձ:

— Վեր ուսումնարանումս ես սովորում, Արփիկ:

— Հովնանյան դպրոցում, Մադի, — ասաց, մինչև ա-վանջները կարմրեց ու փախավ...

Ենքան գեղեցիկ եր նա եդ վայրկյանին... Նրա պատ-կերն աչքիս առաջից չեր հեռանում: Իմ քույր Մարենին նման ե, մտածում եյի յես ու կարծես մեր յերեխաների կա-քոտը նրանից եյի ուզում առնել...

— Արփիկ, Արփիկ, — դոչեցի ու առանց յերկար մը-տածելու վազեցի, բաղխեցի նրանց դուռը:

— Հ՛ը, ի՞նչ ես ուզում, Մադի:

— Արի, մի բան պիտի ասեմ քեզ:

Նա, ավելի քան լուրջ դեմք ընդունելով, հետևեց ինձ:

— Նստի՛ր, — հրամայեցի յես:

Նա, ավելի շուտ հենվեց սեղանին, քան նստեց աթո-ռին. մտաներով սկսեց խաղալ թղթապանակի հետ ու աչքի տակով դիտել իմ բոլոր շարժվածքները:

Պահարանից հանեցի գայմադի կճուճը, ափսեն լցրի շեր-տավորած, դեղին կարագի նման սերուցքը:

— Սա իմ նախի պատրաստածն ե. մի կեր, տես ինչ համեղն ե, — ասացի ու ափսեն քաշեցի նրա առաջ:

Նա մի փոքր կանգ առավ, մտածմունքների մեջ ըն-կավ. ուտե՛, թե՛...

— Ուզում ե՞ս, տար մայրիկիդ, — ասացի յես, հաս-կանալով նրա միտքը:

— Կարելի յե՞:

Նորից ամբողջ գեմքով կարմրեց նա:

— Կարելի յե, իհարկե, կարելի յե, — թեև ներքուստ չեյի ուզում, վոր նա գնա իմ մոտից: Բայց, ասացի:

— Ա՛յ, են կարմիր խնձորն ել վերցրու, Արփիկ...

— Ինչ լավ տղա յես, — բացակահանչեց նա, ձեռքը մեկնեց ու կանգ առաւ, կարծես չէր համարձակուամ մի այդպիսի քայլ անել

— Վերցրու, Արփիկ ջան, վերցրու, եղ բոլորը քոնն ե, — սպացի ու քնքշաբար նայեցի, ինչպես իմ հարազատ քրոջը:

Նա մի ձեռքում խնձորը, մյուսում՝ սերուցքը բռնած, իր սիրուն հայացքը գցեց ինձ ու, առանց շտապելու, յետոյ յես նայելով գնաց...

Ընկա թախափն ու տարվեցի ինձ պաշարող խոհերով: Մեկ ել հանկարծ լսեցի յերկշտա քայլվածքի վոտնաձայն: Մինչ ուզում եյի յես վոտքի կանգնել, ընդառաջ գնալ, նըկատեցի, վոր Արփիկն ե... տեղիցս չշարժվեցի... Նա գաղտագողի, մի թեթև վոտայունով թռավ՝ ընկավ թիկունքիս ու, իր փոքրիկ ափերով, աչքերս փակեց:

— Ո՞վ եմ... թե իմանաս, — ականջիս հասավ նրա ձայնը:

— Հերիքնազը... Գուրնազը...

— Ձե, չե... — աչքերս ամուր սեղմած քրքջում եր նա, իսկ յես տեղս հանդիստ նստած, ուզում եյի, վոր նա յերկար պահի իր ձեռքերը յերեսիս...

— Չգտանք... չգտանք... — գոչեց նա:

— Ասլիզանգե... Շահզանգե... — ինձ հաղիվ գսպելով առացի յես:

— Ձե, չե...

Նա նորից քրքջաց:

— Գտա... գտա... իմ փոքրիկ քույր՝ Մարենն ես...

— Վայ... Արփիկն եմ... չես ճանաչում, — բացակահանչեց նա ու ձեռքերը քաշեց յերեսիցս:

— Ձե, դու Արփիկը չես, դու իմ քույրն ես...

— Հա... դու ել իմ մեծ յեղբայրն ես... Ձե՞ վոր յես յեղբայր չունենի:

Այդ ասելով նա այնպես սիրալիր նայեց ինձ, վոր յես

այլ ես չկարողացա ինձ գսպել. ամուր սեղմեցի նրա ձեռքերը, քաշեցի դեպի ինձ ու համբուրեցի...

Ամոթխածության մի անմեղ քող պատեց մեր մանկական դեմքերին... Յերկուսս ել կարմրեցինք... Յերկուսս ել լուռ եյինք, տարված վսեմ զգացմունքներով, վոր այնքան հարազատ ե մանուկ սրտերի համար...

— Մաղի, մենակ վոր մնացիր, շատ տխրեցիր:

— Հա, Արփիկ. առանց խնջոյի ենքան տխուր, ենքան տխուր եյի... Դու վոր չլինեյիր, յես ինչ կանեյի...

Լեզուս բացվել եր, ուզում եյի յերկար խոսել նրա հետ, հաղորդակից անել իմ բոլոր ապրումներին...

Դուրս բաղխեցին:

Վեր թռանք:

— Մայրիկս ե, — ասաց Արփիկը:

— Խնջո՞ւ ե, — մտածեցի յես ու վազեցի դեպի դռները:

Մայրն եր. բերել եր մեզ համար մի ափսե լեքը չոր միրգ:

Մի վայրկյան սիրաս թռավ. հիշեցի մորս... բայց սա նման չէր իմ նանին: Նախ շատ ջահել եր, բարձրահասակ, սև աչք ու ունքով և կնպես սիրուն չէր, ինչպես իմ նանը:

Ափսե՛ն դրեց պահարանում ու զննող հայացքով նայեց ինձ:

Յես շփոթվիլ, մնացել եյի կանգնած:

— Մայրիկ, մենք քույր-յեղբայր ենք դառել, դիտես, — բացակահանչեց աղջիկն ու իր պայծառ աչքերը հառեց մորը:

— Լավ եք արել, — ասաց մայրը. շոյեց աղջկա մազերն ու սիրալիր նայելով ինձ՝ հարցրեց:

— Անունդ ի՞նչ ե, վորդի:

— Մաղի յե, — իմ փոխարեն պատասխանեց աղջիկը:

— Մայրիկ...

Ինչ-վոր տարրորինակ թվաց նրան իմ այդ անունը:

— Քանի տարեկան ես, Մատի, — դ տառը փոխելով ետի, հարցրեց նա:

— Տասերեք տարեկան եմ, — պատասխանեցի յես, առաջվա ճնշվածությունից մի փոքր ազատված:

— Մայր ունե՞ս:

— Ենպիսի լավ նանի ունի վոր, — նորից միջամտեց աղջիկը: Յեկավ կողքիս կանգնեց ու թեանցուկ արավ ինձ: Հասակով յես մի փոքր բարձր եյի նորանից. նա հազիվ աասը տարեկան լիներ:

— Բա ես դարիբուծյան մեջ, առանց նանի վորնց ես դիմանում, — դիմեց նա ինձ:

— Մեր գյուղում ուսումնարան չկա, յեկա ետեղ սոս վորելու, — մեծի գիրք ընդունելով պատասխանեցի յես:

— Սուտ ե ասում, մայրիկ, գյուղից փախել, յեկել ե ու հիմա ենպես ե կարոտել իր նանին, վոր քիչ ե մնում լաց լինի ու նորից փախչի, գնա գյուղ, — չարածճի հայացք զցելով վրաս, ասաց նա:

Յես լուկ եյի, չեյի կարողանում ազատ խոսել. այդ կնոջ ներկայությունը ճնշում եր ինձ: Վորքան աղջիկը հարագատ եր ինձ, այնքան մայրն ոտար... Յես սրտանց ուզում եյի, վոր նա շուտով գնա...

Կարծես մայրը հասկացավ իմ միտքը. խղճահարության պես մի հայացք զցեց վրաս, ապա դիմելով աղջկանը՝ ասաց.

— Արփիկ, խելոք կաց, չարություն չանես. ինձ նույնպես խրատեց ու հեռացավ:

Մոր գնալուց հետո, Արփիկն ուրախ ու կայտառ, թրուով թախտին, նորից իջավ, հրեց ինձ, քիչ եր մնում վայր զցեր. նորից ցատկեց ու իր գուլալ քրքելով լցրեց իմ մրուայ սենյակը...

Նրա ուրախությունն ինձ ել վարակեց. սկսեցի յես ել թռչկոտար, պտտվել սեղանի շուրջը. ուզում եյի բռնել նրան, բայց նա ճարպիկությամբ խույս եր տալիս. մեկ սեղանի տակն եր մտնում, մեկ վրան եր բարձրանում, մութ թաքաններն եր շղրտում ինձ վրա, թախտին եր ընկնում... Սենյակը տակն ու վրա յեր յեղեր: Յես մոռացել եյի ե՞ ինձ, ե՞ խեչոյին, — ուզումնարանը, իմ սրբիմը, միակ մար-

դըն այդ անմեղ արարածն եր, վոր իր կենդանությամբ, իր վառվուռն աչքերով գերել, կաշկանդել եր ինձ:

— Բավական ե, Արփիկ, հերիք չարություն անես, մայրիկը կբարկանա, — ասում եյի յես, բայց նա ավելի ու ավելի յեր վողկորվում: Մյտերը կարմրել եյին, աչքերը՝ կըրակ, վառվուռն հայացքով նայում եր ինձ ու նորից թռչկոտում լուրջս...

— Կբռնեմ, Արփիկ, կբռնեմ, — ասում եյի յես:

— Չես կարող, Մադի, չես կարող, — շարժվում եյին նրա շրթունքները, փայլում եյին սպիտակ՝ մարգարտանման ատամներն ու նա փոքրիկ այծյամի նման թռվում, փախչում եր ձեռքիցս...

Թախտն ու սեղաններն եյին մեր բառիկադները. յես բարձրանում՝ նա իջնում եր, յես իջնում՝ նա թռչում եր վեր, պտտվում եյինք սեղանների շուրջը:

— Արփիկ, կանգնիր, — մեկնում եյի ձեռքս:

— Մադի, բռնիր:

Նա մի վայրկյան կանգ եր առնում ու նորից թռչկոտում: Այդ վայրկյաններին նա ավելի յեր զվարթանում, ավելի եյին այրվում նրա աչքերը:

Մի ճիգ, մի վոստյուն, և Արփիկն ընկավ իմ գիրկը:

— Բռնեցի՛... բռնեցի՛, — գոչեցի յես:

Նա յերկու ձեռքով փարվել եր վզովս, ամուր սեղմել եր ինձ իր կրծքին, նայում եր աչքերիս ու ժպտում... Կարծես դա նրա խաղի շարունակությունը լիներ: Մեր մանուկ հոգիները ձուլվել եյին իրար, վսեմ հայացքով նայում եյինք միմյանց... Ճիշտ ե, վայրկյաններ եյին դրանք, մանուկ սըրտերի մերձեցման—հուզիչ վայրկյաններ (վոր քիչ ե պատահել հետս իմ կյանքում), բայց դա այնքան խորն եր տպավորվել, վոր մինչև հիմա մնացել ե անջնջելի իմ հիշողության մեջ... Ու միշտ, յերբ հիշում եմ Արփիկին, մի ներքին ջերմություն եմ զգում ու ցավում եմ, վոր կյանքիս մեջ մի անգամ միայն ապրեցի այդքան անմեղ, անարատ զգացմունքներով:

Արփիկն, ազատվելով իմ գրկից, հանդարտ քայլերով

մտաեցալ պահարանին, հանեց մոր բերած մրգերը, դրեց սեղանին. մի աթու ինձ առաջարկեց, ինքն ել նստեց իմ դիմացը, ու սկսեց մի ափից:

— Ես՝ դեղձի չիր ե, գիտես, շատ համեղ ե. սա տանձ ե, այ, սերգեխին/ել շատ լափե ե, կեր, — հրամայեց նա:

Դիմացս նստածը, ել են, քիչ առաջիկա կայտատա աղջիկը չեր, վոր վողկուրված թռչկոտում, թռվում եր իմ առաջ... Դեմքը լուրջ, հայացքը՝ հեզ, հանդարտ, ասում, խոսում եր ինձ հետ:

— Արփիկ, — լավեց դրսից մոր ձայնը:

— Դալիս եմ, մայրիկ, — ասաց նա ու առանց շտապելու, քեզիցը վեր կացալ, նայեց ինձ, մի փոքր կանգ առալ. ինչ-վոր մտածում եր:

— Յես ելի կգամ, Մադի, — ասաց ու ավելի քան տխուր, սկսեց թերթել սեղանի վրա ընկած գիրքը:

Յերեի իմ դեմքին ել եր պատել տխրություն, և դա յեր պատճառը, վոր նա եզպես հանկարծ փոխվեց:

Նրան ճանապարհ դցեցի ու մնացի դռներում կանգնած... Դեռ յերկար ժամանակ ականջներումս եր նրա թեթև քայլերի ձայնը...

XI

ԲՆՈՒԹՅԱՆ ԾՈՑՈՒՄ

Սենյակումս այլևս չկարողացա մնալ. գլխարկս առա ու շտապ դուրս յեկա փողոց: Դրսի լայն հորիզոնը, հեռու սարերն ու լեռները, յերկնքում կուտակված քուլա-քուլա ամպերը, դրա հետ ել Արփիկի պատկերը միախառնվել էյին իրար ու յես յերկար ժամանակ ապրում էյի այդ մանկական հուշերով: Փողոցների անց ու դարձը, սլացող կառքերը, զարգարուն խանութներն ինձ չեյին հետաքրքրում: Յես ինձ ավելի բարձր էյի զգում, քան եզ մանրունքները...

Փողոցները կարելով՝ դուրս էյի յեկել քաղաքից, բարձրացել մոտակա բլրի գագաթը: Արեը մայր եր մտնում,

յերկնակամարում կուտակված ամպերը յուրաքանչյում վայրկյան փոխում էյին իրենց գույները. մի տեղ խոսնում, մի այլ տեղ ցրվում, նոսրանում...

Արեն ել իր վտակն շողերով զարդարում եր յերկնակամարը, նորանոր գույներ եր տալիս ամպերին ու սահունանցնում լեռներին յետև... Արևմուտքն ավելի ու ավելի յեր շտապուհնվում, այրվում կրակի բոցերի մեջ...

Յես կանգնած բլրի գագաթին, մի թափանցող հայացք՝ արևին, մի վերջին հրաճեշա լեռներ-սարերին, ու քայլերս ուղղեցի յետ...

Թարմացած, ինչպես անձրևից հետո ծաղիկները, պայծառ հոգով, մանկական վառ հուշերով տարված, յեկա տուն: Պառկելս ու քնելս մեկ յեղալ:

Լուսաքացին միայն արթնացա:

Դուղուկի հուժկու զողանջն առավտովա թարմության մեջ վողկուրում եր ինձ: Թվում եր այդ կանչի մեջ մի անըմբռնելի խորհրդավորություն կար...

— Դ՛ն... յԼ... յԼ... — տարածվում եր այդ ձայնը քաղաքի վրա, մտնում բանվորաչեն տները...

Յես միշտ խեչոյի հետ էյի արթնանում, նրա հետ էյի դուրս գալիս տնից, մի քանի փողոց անցնում էյինք միասին ու բաժանվում. բայց այսոր ել էյի մենակ: «Ա՛խ, յերբ պետք ե խեչոն գա», — մտածեցի յես ու քայլերս արագացրի. շտապում էյի, վոր առաջինը լինեմ ուսումնարանում:

Յերբ մենակ էյի լինում, ամփոփվում էյի ինքս իմ մեջ. ապրում էյի մանկական վառ պատրանքներով... Ինչպես թռչունները՝ ծառի, ծաղիկների բուրմունքով հագեցած՝ ծվլում, թռվում, յերգում են անհագ. այնպես ել յես, իմ մտապատկերներով, վառ յերազանքներով տարված, գրգռվում, փայփայում էյի ազնիվը, վեհն ու սքանչելին...

Ջանդը տվին: Արհեստանոցի դռները բացվեցին: Ամեն

մեկս անցանք մեր տեղը: Տիրեց թեթև աղմուկ ու դրան հետեց մեր սովորական աշխատանքը:

Եղ որը Ստեփանն ու յես «դրելով» ծակոտում եյինք տափակ յերկաթը: Դա նորութուն էր մեզ համար. պողպատն սրածայր լեզվակն արագ պտտվում, խորանում յերկաթի մեջ, ծակում, անցնում էր մյուս կողմը: Եղ աշխատանքըն այնքան հետաքրքիր էր, վոր յերկուսս ել կլանվիր եյինք դրանով. վոչ Ստեփանն էր խոսում, վոչ յես...

Յերբ համապատասխան բացվածքը պատրաստ էր, միայն այն ժամանակ մեր լեզուն բացվեց...

— Յես պրծա. դո՛ւ, Ստեփան:

— Յես ել պրծա, Մարի:

Նայեցինք իրար ու ժպտալ դեմքներիս սկսեցինք խարտոցել:

Եղ միջոցին յեկավ տեսուչը. նա, ըստ սովորության, դեռ հեռվից դիտում էր մեր աշխատանքը: Նույնը կատարեց և այտոր: Նա մի փոքր պտույտ արավ, ապա մտանալով մեզ, ասաց.

— Տեսեք, քառակուսին իր բոլոր կողմերով պեռք է կանոնավոր կերպով տեղավորվի բացվածքում. յեթե մազաչափ անգամ ավելի վերցնեք, պրիտմը կփչացնեք. զգուշ խարտոցեք. փոքր առ փոքր, առանց շտապելու, — նա մի քանի ցուցմունքներ ել արավ ու հեռացավ:

Տեսչի խոսքերի իմաստը յես իսկույն ըմբռնեցի: Ինչպես մի թվաբանական խնդիր, մտքումս լուծեցի ու ամեն ինչ պարզվեց ինձ համար: Խնամքով, առանց շտապելու, սկսեցի խարտոցել ու շուտ-շուտ ստուգել Ստեփանն աչքի տակով նայում էր ինձ ու նույնությամբ աշխատում: Յես զգում էյի, վոր իմ հեղինակութունը բարձրանում է նրա աչքում, և դա շոյում էր իմ «յեսը»:

Եղ որն ամբողջապես արհեստանոցումս եյինք: Յերեկոյան դեմ պրիտմը վերջացնելու վրա էյի, մի քանի թեթև ուղղումներ՝ և քառակուսին պահվեց տափակ յերկաթի բացվածքի մեջ և իր բոլոր չորս կողմերով միացավ նրան:

— Ստեփան, պրծա, — ուրախ բացականչեցի յես:

— Ո՞վ դիտե, վարպետը կընդունի, թե՞ վոչ...

Յես զգալով իմ անտեղի ուրախանալը, պրիտմն առա ու ավելի քան տխուր, զնացի վարպետի մաս: Նա աշխատանքս քննեց. քառակուսին մի քանի անգամ հազցրեց բացվածքում, նորից հանեց, շուտ ու մոտ տվեց...

Կողքին կանդնած, նայում էյի, բայց առաջվա նման չէյի դողդողում, սիրտս չէր բարախում այնպես արագ: Հանդիստ էյի, հավատացած, վոր վոչ մի պակասութուն չպիտի գտնի:

Այդպես ել յեղավ:

— Վոչինչ, լավ ես ավարտել տար, թող տեսուչն երատ իր հավանությունն ու բեր համարակալիմ:

Յես ուրախ, թո՛ւ արհեստանոցի մյուս ծայրը, տեսչի մոտ:

— Վարպետն ուղարկեց ձեզ մոտ, — պրիտմը մեկնելով ասացի յես, վստահ, վոր սա յեյ, իր հերթին, կզովի ինձ: Բայց հակառակը դուքս յեկավ:

— Ա՛յ, տեսնում ես, ճիշտ է, մի կողմը լավ է հղված, բայց մյուս կողմերը խորթ ու բորթ են. տար, եղ թեթև ուղղումն ել արա ու բեր:

Հուսահատ վերադարձա մանգանիս մոտ. նայում ու կարծես այդ անշունչ գործիքից էյի ոգնություն խնդրում:

— Հը, ի՞նչ ես քիթդ կախել:

— Ստեփան, ո՞վ է ավելի մեծը, տեսուչը, թե՞ վարպետը:

— Իհարկե տեսուչը, եղքան ել չզիտես, — հեղինակավոր յեղանակով ասաց. նա:

— Վարպետն ընդունեց, ասաց՝ «լավ է». տեսուչը չըհավանեց, ասաց՝ «տար ուղղումներ արա»... Այժմ չզիտես ի՞նչ անեմ, խարտոցեմ, վայ թե փչանա...

— Ձեռք մի տալ, ձեռք մի տալ, սղասիր, հենց վոր յերկուսն ել մի տեղ լինեն, տար ասա. «Ձեր ասած ուղղումներն ել կատարեցի»... Համարձակ յեղիր, իսկի մի վախենար...

— Բայց, վճից խաբեմ, սուտ ասեմ...

— Դե, խարտոցիբ, փշացրու...

Ստեփանի ասածները գործնական թվաց: Յես սուտ-սուտ փափազում եյի, իբր ուղղումներ եմ անում:

Տեսուչը մի քանի անգամ կողքովս անցավ: Յես հեռ-վից դիտում եյի, հենց վոր նա գնաց վարպետի մոտ, պրի-ոմն առա ու տխուր-տխուր մեկնեցի վարպետին: Նա դար-մացած նայեց ինձ... Յերևի հասկացալ յեղելությունը... Մի անգամ ել բազմակողմանի քննեց ու մեկնեց տեսչին. նա յեղ քննեց ու դառնալով ինձ՝ ասաց.

— Իմ աված ցուցմունքները կատարեցի՞ր. ուղղումնե-րըն արի՞ր...

Յես մնացել եյի շվար կանգնած... Ի՞նչ ասեմ...

Վարպետը խիստ-խիստ նայեց յերեսիս...

— Այո... — դողողացին շրթունքներս ու մինչև ա-կանջներս կարմրեցի...

— Այ, այժմ լավ ե, բոլոր կողմերը հղկված են:

Են, ինչ քիչ առաջ «լավ չեք», այժմ «լավ եք» դառել. վոչ միայն այդ, այլ նա ինձ սկսեց դովել... Յուցակը բաց արավ ու իմ ազգանվան գիմաց գրեց հինգ ու խաչ (5+):

Յես չեյի կարողանում հաշտվել եզ մաքի հետ... Միթե կյանքում անհրաժեշտ ե խաբելը, ստելը... ու...

Հապա ինչհե իմ նանն ասում եր. «Յեղիբ միշտ ազ-նիվ, խելոք ու շիտակ»...

Խեղճ նանի... յիթե իմանաս քու ազնիվ սղայի խա-քեյությունը...

— Ընդունեցի՞ն, Մադի:

— Հա, — ասացի յես ավելի քան տխուր:

— Տեսնո՞ւ, — ասաց Ստեփանն ու ել ինձ չնայեց, սկսեց արագ-արագ խարտոցել:

— Սպասիբ, — գոռացի յես, — եղպես չի կարելի, Կփշացնես. թող, թող, առը յես ուղղեմ. յես գիտեմ ձեք... «Թող սա յեղ լինի իմ յերկրորդ խաբեյությունը», — մտա-ձեցի յես ու Ստեփանի պրիոմն առա իմ մանգանի բերանը, զգուշությամբ սկսեցի խարտոցել և մինչև զանգը կարողա-ցա կարգի գցել:

Ստեփանը վախվիտով տարավ վարպետի ու տեսչի մոտ: Քիչ հետո ուրախ ժպտը դեմքին յեկավ:

— Ի՞նչպես անցավ, — հարցրի յես:

— Վարպետը, գիտե՞ս, յերկար քննում ու խիստ-խիստ նայում եր ինձ. «Ի՞նչ յես ավարտել», — կասկածով հարց-րեց նա:

— Այո, — ասացի յես վստահ ու համարձակ:

Տեսուչն ել նայեց. նա յեղ հավանեց: Մատչանում գը-րեց հինգ ու խաչ (5+), — պատմեց Ստեփանը, առանց չնչին խղճի խայթ զգալու:

XII

Խ Ե Չ Ո Ն

Վերադառնում եյինք տուն: Ստեփանն ուրախ եր բայց յես տխուր: Ինքս ել չգիտեյի իմ տխրության պատճա-ռը... Սիրտս վորոնում եր մի նեցուկ, վորին հենվելի, վո-րին հաղորդակից անեյի իմ բոլոր ապրումները...

Յերանի գնամ տեսնեմ Խեչոն յեկել ե... Այդ եր ամ-բողջ ճանապարհին իմ մտածմունքը...

Յեղ իրավ, դուռը բաղխելուն պես դուրս յեկավ գիմա-ցըս ինքը՝ Խեչոն: Յես անգիտակցաբար ընկա նրա գերկը՝ նա առավ ինձ իր բազուկների միջ, կարոտով նայում եր:

— Վճեց ես, Մադի:

— Առանց քեղ ենքան տխուր եր, ենքան տխուր, — ասացի յես ու աչքերս լցվեցին:

Ինչպես յերևում եր, Խեչոն ել եր հուզվել: Նա մի փո-քըր լուրթյունից հետո հարցրեց.

— Ի՞նչպես անցկացրիք որերդ:

— Վոչինչ, — արցունքներս պահելով ասացի յես ու սկսեցի պատմել բոլորը, նույնիսկ Արփիկին, նրա մորը Ստեփանին, Տեր-Պողոսյանին ել չմոռացա:

Խեչոն համբերությամբ լսում եր ու լուռ. յերբեմն ժպտա եր խաղում շուրթերին, յերբեմն զարմանք...

Գոներում յերևաց Արփիկը՝ մի աման ձեռքին:

— Քո բաժինն է, Մաղի, մայրիկս է ուղարկել, — ասաց ու ամսեն պահեց պահարանում:

— Ծնորհակալ եմ, ինչ նեղութուն, — հագելով դուրս թռավ բերանիցս:

Նա արդեն փախել էր սենյակիցս:

«Յերևի Նեչոյի ներկայութունից նա ամաչեց», — մտածեցի յես ու շարունակեցի իմ ընդհատված պատմութունը: Մի առ մի նկարագրեցի տեսչի և վարպետի հետ ունեցած միջադեպը...

Նեչոն բոլորովին չզարմացավ. նա ընտելացել էր այդպիսի արարքների, դա նրա համար նորութուն չէր:

Սկսվեց նորից մեր նորմալ կյանքը:

Մի որ ուսումնարանից յեկա, տեսա Նեչոն տանն ե...

Գուցնը թռել էր, աչքերը պղտորվել. արագ-արագ շարժումներ էր անում, ինչ-վոր պատրաստութուններ էր տեսնում:

— Ի՞նչ է պատահել, հո հիվանդ չե՞ս, — հարցրի յես:

— Վոչինչ, մի յերկաթ վոտիս ընկավ. շուտ դուրս յեկա արհեստանոցից. դատարկ բան է, կանցնի:

Քիչ հետո յեկան Նեչոյի ընկերները, վորոնց առաջին անգամն էյի տեսնում:

Նրանք վոչ մի ուշադրութուն չդարձրին Նեչոյի վոտի ցավի վրա: Նեթ-խեթ նայեցին ինձ ու կամաց փոփոսցին իրար հետ... Ուզում էյին, վոր յես դուրս գնամ սենյակից, ինչ-վոր գաղանիք ունեյին: Յես այդ զգացի նրանց հենց առաջին քայլերից...

— Ձե, յերեսան թող մնա, նա մեզ ոգտակար կլինի, — ասաց Նեչոն մի այնպիսի տոնով, վոր հակաճառելն ավելորդ կլիներ:

Յեկողներից մեկը մաքուր հագնված, ակնոցավոր, ջահել յերիտասարդ էր. մյուս յերեքը՝ Նեչոյի հասակին, պարզ հագնված, բանվորներ էյին:

Նրանք, առանց ժամանակ կորցնելու, բոլորեցին սեղանի շուրջը: Նեչոն ինչ-վոր թղթեր հանեց ծոցի գրպանից, սկսեցին կարդալ, տաք-տաք խոսել ու վիճել:

Ինձ համար միանգամայն անհասկանալի խնդիրներ էյին գրանք. ականջիս հասնում էր՝ «ութ ժամյա բանվորական որ», «անձի անձեռնմխելիութուն», «պարտադիր ուսում», «հեղափոխութուն»... Եդ խոսքերից բան չէյի հասկանում, թեև մանկական հետաքրքրությամբ ականջ էյի դնում, ու նրանց արտասանած յուրաքանչյուր բառը, ամեն մի խոսքն ուզում էյի ըմբռնել, հասկանալ... բայց չէյի կարողանում այդ բոլորն ինձ պատկերացնել... Յերեակայութունս պղտորվում էր... «Ութ ժամը»... «պարտադիրը»... Իբրև մի-մի գերաններ՝ աչքիս առջ պտտվում էյին ու չէյի կարողանում ըմբռնել, հասկանալ գրանց իմաստը...

Ամենից շատ խոսում էր Նեչոն. նա պատմում էր Բագվի բանվորների մասին, իսկ մաքուր հագնվածը գրում, ձեռքով շարժումներ էր անում. ճակատին թափված մազերը յես էր գցում ու խիստ-խիստ նայում Նեչոյին:

«Յերևի ուսուցիչ է», — մտածում էյի յես, բայց չէյի հասկանում վոչ նրա ասածները, վոչ նրա մեր տուն գոյու նպատակը...

Չենց վոր մութն իջավ, նրանք մեկ-մեկ դուրս գնացին: Վերջը մնաց մաքուր հագնված մարդը: Նա քննական հայացք պցեց ինձ վրա, կարծես նոր էր տեսնում:

— Անունդ ի՞նչ է, այ տղա, — տվեց իր սովորական հարցը:

Նեչոն մի քանի խոսքով պատմեց իմ մասին ու ավելացրեց.

— Շատ ուղուխով ա, լավ վարպետ կդառնա, ժամանակին մեզ պետք կգա:

Եդ խոսքերը ներքուստ շոյում էյին իմ «յեսը», բայց յես իբր վոչինչ սովորականի պես դուրս ու ներս էյի տնում, պարաստում մեր ընթրիքի սեղանը. դայմադ էլ հանեցի, Արփիկի բերած կարկանդակներն էլ զարսեցի սեղանին:

Ուշ յերեկո յեր, վոր իմ անձանոթն էլ գնաց:

Նեչոն շատ էր հոգնած, պառկեց թախտին, յես էլ նըս-

տեղի կողքին ու հարցեր եր, վոր կարկուտի պես թափում էյի նրա գլխին:

— Ի՞նչ է «Տեղափոխությունը», «ու՛թ ժամը» վերն ա, «պարտադիր ուսումը», «անձի անձեռնմխելիությունը»... ու շատ ու շատ խոսքեր, վոր մտքումս դայիմ պահել էյի...

Սեչոն մի առ մի բացատրում եր ինձ, այնքան պարզ ու հասկանալի, վոր ամեն ինչ դրոշմվում եր իմ սրտում: Հիացմունքով լսում, կլանում էյի նրա յուրաքանչյուր խոսքը, յուրաքանչյուր միտքն ու մտածում, վոր կյանքում բուրբ ստախոս, խաբեբաներ չեն, վոր կան և լավ ու շիտակ, Սեչոյի նման մարդիկ...

Նա կարծես միտքս հասկացավ. մի փոքր լուռթյունից հետո ասաց.

— Այո, կյանքումը կան, քու նանի ասածի նման, ազնիվ ու բարի մարդիկ, վոր «իրար միս չեն ուտում»...

«Սեղձ, իմ նանի. «իրար միս չուտելը» — բարություն, ազնվություն եր համարում»... — մտածեցի յես, բայց Սեչոյին բան չասացի:

— Դու չգիտես, դրանք ներքուստ, ժանիքները պահած, գայլեր են, իսկ արտաքուստ՝ հեզ ու խոնարհ գառներ... Յերբ տեղը գա, նրանք պատրաստ են՝ վտանառակ տալ իրենց իսկ հնարած ամեն մի «սրբություն», «առաքինություն» ու դրա նման շինծու վարդապետություններ: Բզկթեղ, հոշոտել իրենցից թուլերին... Կմեծանաս, դեռ շատ բան կիմանաս... գուցե և կաշվիդ վրա տանես, բայց մեր սկսած գործը դուք պետք է շարունակեք...

Յես ընկա մտածմունքների մեջ. եդ ասածներից շատ քիչ բան էյի ըմբռնում...

— Ի՞նչ ես մտածում, Մադի, — հարցրեց նա:

— Բա մեր են մեծ թագավորն ի՞նչ է անում, ինչի՞ յե թողնում նրանց, վոր իրանց քեփի ուզածն անեն, — մանկական անմեղությամբ, վախվախելով հարցրի յես...

— Թագավորը՝ նրանց ամենամեծ ընկերն է, բալա ջան, հենց ինքը՝ թագավորն է, վոր նրանց «իզ» է տալի եդ բոլորը կատարելու... Ամենամեծ հրեշը նա յե, վոր կա...

— Բա ինչո՞ւ իմ նանն ասում եր, վոր թագավորն է մեր տեր ու տիրականը. վոր նա չլինի՞՝ ալամ-աշխարհը իրար միս կուտեն, արցուն կխմեն:

Սեչոն ժպտում եր իմ յերեխայության ու իմ նանի պարզամտության վրա:

— Դեռ փոքր ես, բալա ջան, աշխարհի չարն ու բարին վնչ դու պիտես, վնչ քու են լավ նանը:

Յերկուսս ել լուռ էյինք, յերկուսս ել մտազբաղ: Ինչ եր մտածում Սեչոն, չգիտեմ... Բայց յես եդ որվանից զգում էյի, վոր իմ մեջ առաջացել է բողոքի մի տարր, թեև թույլ ու յերերուն, բայց ակեղծեղ է իմ զգայուն սիրտը. կլանել իմ մտադ ու քնքույշ հոգին:

Ամեն կիրակի, Սեչոյի ընկերները գալիս, հավաքվում էյին մեր տանը. ծրագիրներ էյին կազմում, վիճում, տաքացած խոսում, նույն իսկ կարծես կռվում էյին իրար հետ...

Յես ել են առաջվան քաշված, ամաչկոտ յերեխան չեյի. այժմ ընտելացել, մտերմացել էյի նրանց հետ: Հարցեր էյի տալիս, ասում էյի իմ գիտեցածը, բայց մի բան ինձ ցածվեցնում եր, վոր նրանք ինձ յերեխայի տեղ էյին դնում: Այն ինչ, յես իմ մեջ զգում էյի վորոշ հասունություն: Մի բան պարզ եր ինձ համար: Դիտեյի, վոր նրանք պատրաստվում էյին մի մեծ ցույցի և դա պետք է լիներ մայիսի մեկին: Գազանի ծրագիրներ էյին կազմում:

Գլխավոր դեկավարը նրանց են մաքուր հագնվածն եր (թեև այժմ նա՝ ել եր բանվոր դասել), աշխատում եր նույն գործարանում: Յես այդ բոլորը հասկանում էյի և դրա հետ գիտակցում էյի իմ պարտականությունները:

Ուսումնարանիս ընկերները՝ Նալբանդյանը, Տեր-Պողոսյանը և ուրիշներն այլևս առաջվա հմայքը չունեյին իմ աչքում: Այժմ, ավելի շուտ, նրանք էյին յենթարկվում ինձ: Ազատ խոսում, քարոզում էյի նրանց իմ անդիր արած բառերը. — «բուրժուազիա», «աքտորավայրեր», «բանտեր», «մայիսի մեկը»...: Մի առ մի բացատրում, պրոպագանդ էյի մղում նրանց մեջ: Իմ եդ աշխատանքների մասին յերեկոները պատմում էյի Սեչոյին:

XIII

ԱԼԵՔՍԱՆԴՐ II ՔԱԳԱՎՈՐԻ ՍՊԱՆՈՒՅՅՈՒՆԸ

Ժամանակը սահում էր: Յես արդեն մինչև հինգերորդ պրիոնն ավարտել էյի: Անցել էյի ավելի բարդ աշխատանքները: Այժմ ինձ պատվիրած էր վոչ թե ձևական պրիոն, այլ գործածութեան համար պիտանի գործիքներ — մուրճ, կտրիչ, կարլին, փականքներ և այլ գործիքներ:

Ինչպես ասուերը ճանաչելուց հետո դժվար չեր ինձ համար այլևս բռներ կապելը, իրար հյուսելը, այդպես էլ այդ հինգ պրիոնն ավարտելուց հետո, ենքան էյի վարժվել, ընտելացել արհեստիս մեջ, վոր ինձ համար դժվարութեան չեր ամենաբարդ գործիքներ պատրաստելը:

Իմ վերջին աշխատանքը՝ անդլիական սիստեմի փականքն էր. դա նուրբ ու բարդ գործ էր. բացի թուշից դ յերկաթից՝ բրոնզի հետ գործ ունեյի: Հրճվում էյի այդ նուրբ մետաղի զանազան նախշերով ու զարդարում փականքի յուրաքանչյուր մասնիկը: Ինձ համար ուսումը յերկրորդական տեղ էր բռնում: Դասերս իսկույն սովորում էյի և ամբողջապես տարվում արհեստով, ուշքս ու միտքս արհեստն էր: Ամբողջապես դրավիել էյի դրանով: Ռեփրի վրա նորանոր հովանուներ էյի անում այդ ասպարեզում:

Արհեստն ավելի յե գարգացնում յերեխային, կյանքը նրան շոշափելի յե դարձնում, լայնացնում և նրա աշխարհայացքը, մտուցնում և նրան իրական կյանքին: Յերեխ դա էր պատճառը, վոր յես այդքան տարվել էյի արհեստով:

Ուսումնարանում յես վորոշ դիքք ունեյի: Իմ ընդունակութեանս արժանի էյի թե ուսման և թե մանուկանդ արհեստիս մեջ:

Վարպետը և տեսուչը բարյացակամ էյին դեպի ինձ, բայց մի դեպք գցեց ինձ նրանց աչքիցը:

Մի առավոտ, յերբ սովորականի պես հավաքվել էյինք դասարանում, սպասում էյինք հայոց լեզվի ուսուցչին: Տեր-

Պողոսյանը ներս ընկավ գույնը թուած, ալալալած ու հուզված:

— Լսել էք, գիտե՞ք, — խորհրդավոր շնչաց նա, — սոսկալի, սարսափելի բան և պատահել... Մեր թագավորին, Ալեքսանդր յերկրորդին... Պետերբուրգում...

Նա ենքան էր ալալալած, վոր էլ չկարողացավ շարունակել:

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել, — բողբոջ վրա դառանք:

— Յերբ նա կառքով գնալիս և յեղել ժամը՝ աղոթելու, տեսորիստները բոմբ են գցել նրա վրա... \*): Հեշտ բան չէ... Թագավորին... են էլ Ալեքսանդր յերկրորդին... նրա նման վողորմած արքային սպանել... Ասում են հեղափոխական բանվորներն են արել, — ասաց նա ու ավելի խորհրդավոր տոն տալով իր ձայնին՝ ափեղացրեց. — սրիկաներ, զզվելի արարածներ են եղ բանվորները:

Տղաներն անակնկալի յեկած՝ յերկյուզով նայում էյին իրար:

— Շատ վատ բան և կատարվել — խոսեց Ստեփանը, — ճնշված հայացքը գցելով ինձ. յերեկ ուզում էր իմ կարծիքն իմանար:

— Դու չդիտես, Ստեփան, նա հրեշներից ամենամեծն էր, — կամաց շնչացի յես ու դառնալով դասարանին՝ ինքնավստահ ու համարձակ սկսեցի ձուռել...

— Մեծ բան չի պատահել, թող թագավոր էլ չլինի, մեր ինչին և պետքը... Առանց նրան ավելի լավ կապրենք...

— Հիմար, — բացականչեց Տեր-Պողոսյանը, — թագավորը վոր չլինի, քարը-քարի վրա չի մնալ, իմացար. նրա ահն ա, վոր մեզ պահում ա... Եղ վոր չլինի՝ մարդիկ իրար միս կուտեն, արյուն կլամեն:

— Եղքան էլ չես հասկանում, վոր մեր տեր ու արքայանք, մեզ պահող-խնամողը թագավորն է, — հեզմանքով ու արհամարհանքով խոսեց մի ուրիշը:

— Լավ կանես ձեռք կարես ու տեղը վեր ընկնես. վոր իմանան քո եղ խոսքերը՝ դիտես ինչ կրեբեն գլխիդ:

\*) 1881 թվին Ալեքսանդր Ա-դի սպանութեան դեպքն է:

— Հիմար ես, հիմար, — նորից մեջ ընկալ Տեր-Պողոսյանը ու խեթ հայացքով նայեց ինձ:

— Հիմարը դու ես, վոր եղքան պարզ բանը չես հասկանում... Թագավորին հնարել են իշխաններն ու բուրժուա-ները, վոր խեղճ ժողովրդին սանջեն, չարչարեն, բռնութեան մեջ պահեն: Հենց եղ ե պատճառը, վոր բոմբ են գցել նրա վրա, ու...

Տեր-Պողոսյանը ել ուշք չզարձրեց ինձ վրա, գայրույթը գոպած, նստեց իր տեղը:

Դասն սկսվեց: Հայոց լեզվի ուսուցիչը՝ քահանան եր: Նա անչափ հուզված ու ախուր եր, դեմքը մոռյո յերեսից թախիժ եր թափվում:

Վայնաչարի պարապեց ու խկույն հետացավ:

Դասամիջոցին, այս ու այն անկյուններում, խորհրդավոր փախտում եյին... Լուրն արագութեամբ տարածվել եր ամբողջ ուսումնարանում:

Չանգը ավին. յեկալ թվարանութեան ուսուցիչը. սա ել թեև ըստ սովորութեան աշխատում եր հանգիստ պարապել, բայց կարծես փշերի վրա լիներ: Աչքի տակով մերթ ընդ մերթ նայում եր ինձ, խիստ քննական հայացքով, կարծես նոր եր ճանաչում:

Հենց վոր դասը վերջացալ, նա յերեք որով դասարանը արձակեց, իսկ ինձ կանչեց ուսուցչանոց:

Տեսուչը և հայոց լեզվի ուսուցիչն ել եյին կանոց: Յերեքն ել մոռյո հայացքով նայում եյին ինձ: Քիչ հետո, ուսուցչանոցի գոներից զլուխը ներս հանեց Տեր-Պողոսյանն ու անհայտացալ: Այժմ ինձ համար ամեն ինչ պարզ եր...

— Ամբողջ դասարանի առաջ դու այդ ինչեր ես ասել — խոսեց տեսուչն ու այնպիսի խիստ հայացք գցեց վրաս, վոր կարծես աչքերով ուզում եր կլանել ինձ:

Յես գլխիկոր կանգնած, զգում եյի մի ներքին հուզմունք, ականջներս խշշում եյին, սիրտս բաբախում, ծնկներս զոզում եյին:

— Խոսիր, ի՞նչ ես լուի:

— Այն... ասել եմ, — մրմնջացի յես հազիվ լսելի ձայնով:

Նրանք ինչ-վոր տատանման մեջ եյին. յերեքը միասին քննական հայացքով նայում եյին ինձ:

Նրանց առաջը կանգնած եր մի անդոր յերեխա, իսկ իրենք, աշխարհի իմաստութեաններով ոճոված՝ մեծամեծներ...

Սկսեցին խորհրդավոր ու ծանրակշիռ վորոշումներ տալ. — «Արաքսիլ ուսումնարանից, ժանդարմերիայի ձեռքը անը թե՛ գցել մութ ու սև կարգերը...»:

Յես անկյունում կուչ յեկած, ա՛ն ու գողով լսում եյի: Քահանան եր իմ ամենախիստ դատավորը, ամենամեղմը՝ տեսուչը... Թվարանութեան ուսուցիչի համար այդ «խնդիրը» պարզ չեր: Նա իրեն պահում եր չեզոք:

Չգիտեմ ինչու, այդ ճգնաժամին, ինձ պատկերացալ նեչոն: Թվաց ինձ, վոր մենակ չեմ... և դա կարծես փրկեց ինձ:

— Թո՛մա, տար սրան են մութը կարգերը գցիր, դուր ամուր փակիր: Թող առանց հաց ու ջրի ենքան մեա, վոր խելքի դա...

Հրամայեց տեսուչը պահապանին: Սա ել իբր մեծ գործի վրա, թեկերը մինչև արմունկը քշակեց, կուրծքը գուրս գցեց, բոթեց՝ գցեց ինձ իր առաջ...

Յես հլու, հնազանդ, ա՛ն ու գողով, գլխիկոր քայլում եյի այդ աժգահա մարդու առաջ:

Հեռվից Ստեփանը կարեկցարար նայում եր ինձ, բայց չեր համարձակվում մոտ գալ: Իսկ Տեր-Պողոսյանն ու մի քանիսները հրձվում եյին ուրախութեանից:

Դանապանը տարալ ինձ ներքնահարկ. անցանք մի մութ, խոնավ նրբանցք... Նա կանգ առավ. լուցկին վառեց ու դարձյալ մի քանի քայլ, հասանք կարցերին: Բաց արավ տախտակի գուռը, թիկունքիցս հրեց-բոթեց, գցեց ներս:

— Թագավոր չուզողիս նայիր, — գոռաց նա վրաս, զըզվելի խոսքերով հայհոյեց, գուռն ամուր գոցեց ու գնաց:

Չգացի, վոր մի նեղլիկ վանդակի մեջ եմ. հատակին փռված եր փայտի ածուխի փշրանք: Մութ ու խավարը խեղդում եր ինձ: Պատեպատ ընկա, ինչպես վանդակում

բռնված մի դազան: Նվացի, նվացի ու ընկա հատակին:

Միբոս ճմլվում եր, արցունքներս խեղզում եյին ինձ...:

— Ստեփան, Ստեփան,— միակ մարդն եր, վորին կանչում եյի: Ձայնս կորչում, մնում եր չորս պատերի մեջ... Ձայրույթից քիչ եր մնում կուրծքս պատուկեր, սիրտս ճաքեր:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, — մոնչում եյի յես կատաղի, խմում եյի վոտքերով պատերին, ամբողջ հասակով հրում եյի դրոները, ուզում եյի ջարդ ու փշուր անել վանդակիս պատերը, քայց ի դուր, շատ ամուր եր նա զոցված:

Մի վերջին հարված, մի ուժգին թափ... բողբոջի մի հուսահատ ճիչ... ու յես ընկա հատակին, անուժ ու անզոր...:

Ինչ եր պատահել ինձ հետ, վորքան եյի մնացել այդպես, չգիտեմ...:

Ականջիս հասավ մի խո՛ւլ ձայն: Կարծես անդունդների խորքում լինեյի, մշուշների մեջ:

Յերբ ուշքի յեկա, աչքերս բացի արի, Ստեփանն եր, ցուրտ ջուր եր ածում յերեսիս, գլխիս:

Յես ամուր բռնեցի նրա փեշերը... Մի նեցուկ եյի դրտել, սարսափում եյի, վոր նորից կբաժանվեմ:

Իսկ նա շուտ-շուտ վառում եր լուցիին, սափորով ջուր եր լցնում գլխիս ու սարսափով նայում եր շուրջը:

— Ձգույշ, ձայն մի հանել, Մաղի ջան, վեր կաց, վեր կաց գնանք, փախչենք... Թագուն եմ յեկել: Դուռը չկարողացա բաց անել, յերկաթե լմով եմ կտարատել տախտակները: Վեր կաց, Մաղի ջան, փախչենք գնանք, — ասում եր ու աչքերից արցունք թափում:

Նա թեկցա բարձրացրեց, յես հենվեցի նրա ուսին. ծնկներս դողում եյին, հազիվ եյի քայլում:

Մենք ան ու դողով դուրս յեկանք նրբանցքը. անցանք միջին հարկը. դողդողալով դուրս յեկանք գավթի, հասնում եյինք դարպասի դռներին... Մի քանի քայլ եր մնացել, վոր փողոց ընկնեյինք:

— Եդ ո՞ւր, եդ ո՞ւր, — լավից դռնապանի անարկու գոռոցը:

Նա կատաղած, զայրույթը աչքերին, կարեց մեր առա-

ջը, բռնեց Ստեփանի ուսից, բոթեց նրան այնքան ուժով, վոր նա վայր ընկավ դեպին:

— Դուռը կտարեցիր հա... Սրիկա... Փախչում եյիք հա...:

Նա սկսեց լկտի հայհոյել թե ինձ, թե Ստեփանին և բոթ-բոթելով առջ արավ մեզ:

Ուսումնարանում պարապմունք չկար: Բոլորը գնացել եյին իրանց տները: Միայն տեսուչն եր այգտեղ. (նա ընտանիքով ապրում եր ուսումնարանի շենքում):

Հասանք նրա բնակարանին ու նրբանցքում մնացինք կանգնած:

Ստեփանի գույնը թոեւ եր, աչքերի տակը սևացել, ամբողջ մարմնով դողում եր: Իսկ յես թրջված և սառած, հազիվ եյի կանգնում վոտքերիս վրա:

Դռների բաղխոցին դուրս յեկավ տեսչի աղախինը: Նա սարսափով նայեց ինձ, մի ճիչ արձակեց և յերկու ձեռքով ծածկեց յերեսը:

Եդ ձայնի վրա դուրս վաղեց տեսուչը:

— Ինչո՞ւ յես բերել, — գոռաց դռնապանի վրա:

— Փախչում եյին, ձերդ արժանապատվություն: Հենց դարպասի դռներում բռնեցի, — իրան քաջարի ձեացներով, մինչև գետինը խոնարհեց գլուխը:

— Սուս ե ասում. յես խեղճյանին տանում եյի մեր տունը, — գողգողացին Ստեփանի շրթունքները: — Յեթե յես չլինեյի, անշնչացած ընկած կլինեիր ես սև ու մու՛թ՝ ածուխով լիքը կարցերում: Լավ ե շուտ ողնության հասա ընկերոջս, բղավեցի, բղավեցի, ձայն չկար, լմով դռները կտարեցի, դողդողալով լուցիին վառեցի, խեղճյանը ուշաթափ ածուխի մեջ ընկած եր: Վոր տեսա՝ սիրտս կտրատվեց: Միայն սառը ջրով կարողացա ուշքի բերել, — ասաց ու հուզմունքը զսպելով, լաց յեղավ:

Աղախինը հեռվից նայում եր մեզ, նրա աչքերն ել եյին լցվել: Թաշիխակով աչքերը սրբում ու տեսչի հետ խոսում եր:

Չգիտեմ ինչ վորոշեցին. տեսուչը գնաց իր կարիները՝

աղախինը մտակցով ինձ, կոնիցս ընկեց, տարավ լվացարանը:

Անցնելիս, յերբ դիմացի պատի հայելում տեսա իմ դեմքը, սարսափեցի: Ամբողջ յերեսս ածուխի մեջ կորած, սևացած եր: Մենակ աչքերս եյին պսպղում ու ատամներս փայլում: Զարնուբելի յեր իմ պատկերը: Արցունքներս զորջ զըծերով ակոսել եյին այտերձ ու ծնոտս, զլուխս մրի մեջ կորած: Մազերս կպել եյին ճակատիս: Մի այլանդակ կերպարանք եյի ստացել, վոր յերբ նայեցի՝ ամբողջ մարմնով ցընցվեցի: Ակամայեց աչքերս փակվեցին ու յես հենվեցի Ստեփանի թևին: Նա կուռս ընկավ, զրկած, մտուցրեց լվացարանին:

Աղախինը սապոնով լվանում եր գլուխս, Ստեփանը ջուրը տաք ու հով եր անում ու լցնում:

Յես հլու հնազանդ, գլուխս կախել եյի: Աղախինը խնամքով արորում եր մազերս, լվանում եր յերեսս, ճակատս, աչքերս, վիզս, ականջներս: Ստեփանը սափորով լցնում եր գոլ ջուրը ու նորից տաք ու հով եր անում: Իմ լվացվելը կարծես վերջ չուներ: Մի անգամ ել յերեսս, վիզս սապոնափրբփուրում կորավ, Ստեփանն առատ ջուր լցրեց ու ամեն ինչ վերջացավ:

Այժմ սպիտակ սավանով սկսեց գլուխս, մազերս, վիզս ցամաքեցնել. այդ գործողությունն ել ավարտելով նա ազատ շունչ քաշեց:

Աղախինը գոհ սրտով նայեց յերեսիս ու ժպտաց: Զըգիտեմ ինչ՞ու յես ել ժպտացի: Ստեփանն ել վարակվեց մեզանից:

Տեսուչը դժգոհ դեմքով, դանդաղ քայլերով, կարծես ակամայեց, յեկավ ու կանգնեց մեր դիմաց:

— Մի տես ի՞նչ սիրուն տղա դառավ: Մի նայիր նրա աչքերին: Մի՞թե այսպիսի գեղեցիկ աչքեր ունեցողը վատ բան կմտածի... Կարելի՞ յեր սրան պատժել:

— Դա զեռ քիչ եր, ավելի խիստն եր հարկավոր, — նկատեց նա աղախինն ու դառնալով ինձ, ասաց.

— Շատ բան մտածիր, բայց քիչ գործադրիր: Թող սա քեզ խրատ լինի, մյուս անգամ զգուշ կլինես:

Յես կնքան եյի ակնածում, կնքան եյի սիրում եղ մարդուն, վոր նրա բոլոր ասածները սրբություն եյին ինձ համար...

Ստեփանը թևիցս քաշեց:

— Գնանք, Մադի:

— Վոչ, վոչ, մի փոքր սպասեցեք, — ասաց աղախինը, տարավ ինձ պառչիամբ, խողանակով մաքրեց շորերս: Յերբ վերադարձանք խոհանոց, Ստեփանը նորից դիմեց, վոր զընանք...

Իայց յես կարծես չեյի ուզում բաժանվել այդ ջերմ, մայրական գորովագութ խնամքից: Յես ամեն ինչ մոռացած, նայում եյի այդ քնքույշ, նուրբ արարածին, վորը շատ նըման եր իմ նանին:

— Մադի, (նա արդեն սովորել եր իմ անունը) դու քաղցած կլինես, առավոտանից մինչև հիմա, զիտեմ, բան չես կերել, հա՛, — դառավ նա ինձ:

— Կերել ե, չատ ե կերել, կարցերում կնքան սև, ածուխի փշրանքներ ե կուլ տվել — իմ փոխարեն պատասխանեց Ստեփանը:

Նրա պատասխանն ինձ դուր չեկավ. «Մի՞թե կարելի յե եղպես անմեղ արարածին այդ ձևով պատասխանել»:

— Վոչինչ, քաղցած չեմ, — մեղմացնելով Ստեփանի պատասխանը, ասացի յես. բայց տեղիցս չեյի ուզում շարժվել: Կարծես միտված լինեյի հատակին:

Նա մի բոպե գուրս գնաց: Յես և Ստեփանը մնացինք մենակ: Են սև ու մութ կարցերից հեռո, ես պայծառ լուսավոր հարկը գերել եր ինձ: Ծովս կահավորություն, ամեն ինչ նոր ու գեղեցիկ:

Նայեցի պատի մեծ հայելում, մազերս զանգրացել թափվել եյին ճակատիս. այտերս կարմրել, աչքերս փայլում, զեմքս զվարթացել եր: Ինչ համեմատություն քիչ առաջ և հիմա: Մի՞թե միևնույն տղան չեյի յես, — անցավ մտքովս ու նորից մի անսովոր թախիժ յեկավ, պաշարեց ինձ:

— Յեկեք իմ յեակից, — լսեցի աղախինի յերաժշտական ձայնը:

Մենք չեյինք համարձակվում տեղներին շարժվելը նա յերևի զգաց մեր ամոթխածությունը, իրան հատուկ պարզությամբ յեկավ, կոնիցս բռնեց ու տարավ խոհանոց:

Սենյակի կենտրոնում գրված էր ճաշի սեղանը. վրան յերկու ափսե, դանակ, պատառաքաղ և այլ պարագաներ:

— Նստեցեք, — հրամայեց նա:

— Յես շնորհակալ եմ, ճաշի եմ, — ասաց Ստեփանն ու շտապ դուրս գնաց:

Յես ել շնորհակալ յեղա, ուզեցի դուրս գնալ նրա յեռանից, բայց դա անհնարին էր. ստիպված նստեցի ինձ առաջարկած աթոռին:

Աղախինը բերեց հաց, պանիր, կանաչեղեն, ապուր...

— Կեր ու մի լավ հանգստացիր — ասաց նա, դուռը վրաս փակեց ու գնաց:

#### XIV

### ԴԱՌԸ ՀԱՅԸ

Մնացի մենակ... Ակամայից նայեցի սենյակի չորս պատերին, առաստաղին, կան-կարասիներին, նկարներին՝ Այդ քոլորը մի վայրկյան կուտակվեցին գլխումս, բայց իսկույն անցան: Միտքս թռավ Ստեփանին—ինչո՞ւ նա գնաց: Ինչո՞ւ ինձ մենակ թողեց: Յես տարվել էյի եզ խոհեքով, բայց ձեռքերս հասել էյին հացին: Ծնոտներս սկսել էյին շարժվել:

Սիրտս լցվեց, աչքերս թրջվեցին: Արցունքներս կաթկաթ ընկնում էյին ափսեյիս մեջ:

Չգիտեմ իմ հասակակից վորեք յերեսա ունեցել և արդ՞՞՞ք այդպիսի հոգեկան տանջալից պարուսներ: Հացի հետ — ամեն մի պատառի՝ արցունքն և կուլ տվել, հուզվել... Հեկեկանքը խեղդե՞լ և նրա կոկորդը:

Միտքս ուժեղ գործում էր... Իմ անասնական ինստիկտը իր Ֆիդիքական գոյությունն էր ուզում պաշտպանել Ատամներս, ձեռքերս, նույնիսկ վոտքերս, բոլորը քողարկված՝ աշխատում էյին հացի համար:

Ճիշտ և, յես չեյ բառաչում, չեյի մոնչում... արտաքուստ նույն իսկ համեստ էյի ձեանում, բայց սիրտս մնացել էր մի անկյուն քաշված, ինքն իրան մեջ ամփոփ: Նա թափում էր իր հուզմունքի թույնը, դառը, ցավատանջ ու վշտահար արցունքներով:

Նա չեր հաշտվում, ուզում էր դուրս թռչել, ազատվել այդ կաշկանդիչ կապանքներից, լինել անկախ, իր վեհությամբ անբիծ, անարատ... Բայց կյանքը քաշում էր նրան դեպի իրան, տանում էր դեպի սև իրականությունը: Չե՞ վոր նրան հաց էր հարկավոր: Այդ դառը հացը, այդ թունալից, լեղի հատիկները խլում էյին հոգուս վեհությունը:

Արցունքներս կուլ էյի տալիս հացիս հետ ու, ամբողջ հոգով դառնացած, զգում էյի իմ վոչնչությունը:

Մենակ, չորս պատերի մեջ փակված, սիրտս ալեկոծվում էր:

Որվա դառն արհամիջները մեկ-մեկ գալիս, շարանշարան կանգնում էյին առաջս: Ահա ըրբտ ու կոպիտ դրոնապանը, ահա են սև ու մութ ածուխով լի կարցերը... Մեծամորուք՝ ածգահա տերտերը: Մասնիչ Տեր-Պողոսյանը: Ահա և իմ ճաշի սեղանի մնացորդները՝ հացի փշրանքները, դատարկած ափսեները: Ահա և Ստեփանի դալուկ դեմքը:

— Ո՞վ մեռցրեց իմ մանուկ հոգու վեհությունը... Ինչո՞ւ, ինչո՞ւ, — մրմնջում էյի յես:

Դուռը կամացուկ բաց յեղավ, աղախինն էր. նա վոտքերի ծայրերով մոտեցավ: Յերևի չեր ուզում խանդարած լինել ինձ:

Նայեց ու մնաց սարսափած...

— Ի՞նչ և պատահել, Մաղի, ինչո՞ւ յես լաց յեղել — մայրական քնքշությամբ արտասանեց նա ու մաղերս սկսեց շոյել. — խեղճերի որը սև և, Մաղի:

«Մաղի»... Ենքան արտառուչ էր այդ բառը, ենքան, նուրբ հնչվեց նրա շրթունքներից, թվաց ինձ, վոր իմ նանն և այդ սատղը:

Յես ինձ այլ ևս չկարողացա զսպել, ընկա նրա բա-

զուկներին... Չգուժ եյի փայտիս յանք, գորովագութ մայրա-  
կան շերմութունս

— Այդ ի՞նչ ե նշանակում, — հանկարծ լսեցինք տես-  
չի բարկացած ձայնը:

Մենք, հանցանք գործածի պես, մնացինք տեղներս  
կանգնած:

Տեսուչը մտտեցավ, մերթ ինձ եր նայում, մերթ եղ  
կնոջը: Յերկուսիս աչքերն ել թաց եյին: Յերկուսս ել հուզ-  
ված՝ գլուխներս խոնարհել եյինք ցած՝ իբրև մի-մի անմեղ  
յերեխաներ:

— Ե՛յ, գու նորից ուզում ես կարցեր ընկնես: Աչքիս  
այլևս չերևատ: Մինչև մանկավարժական խորհուրդը չքննե-  
ք հարցը՝ պահել քեզ դպրոցում, թե վոչ... քու վոտն եստեղ  
չլինի, — ասաց նա ու խիստ-խիստ նայեց աղախնին:

Աղախինն ուզում եր միջամտել, բայց չհամարձակվեց:  
Տեսուչը մի այնպիսի հայացք գցեց նրա վրա, վոր խեղճի  
զույնը թառվ, դեմքը կապույտ լեղակ դառավ:

— Մնաս բարով, — հաղիվ լսելի մրմնջացի յես ու  
զուրս յեկա:

Նա հեռեկցս յերկմբ նայում եր, իբրև մի վորք, ան-  
տեր, անպաշտպան յերեխայի...

Այժմ, յերբ հիշում եմ, թե վորպիսի տանջանքներ ե  
կրել իմ գգայուն հոգին իմ անցած-գնացած գառն սրերին,  
ամբողջ մարմնովս սարսուռ ե անցնում...

XV

ՅԱՎՈՏ ՎԵՐՔԸ

Դոներում Ստեփանն ինձ սպասում եր: Նրա գեղեցիկ  
պատկերը, մեղմ ժպիտը, սիրալիբ հայացքը ինձ փարատեց:

Յես սեղմեցի նրա ձեռքը ու հանդարտ քայլերով միա-  
սին անցնում եյինք մեր սովորական ճանապարհով:

Յերկուսս ել լուռ եյինք, յերկուսս ել մտազբաւ:

Յերբ հասանք ընկերոջս բնակարանին, մի փոքր կանգ  
ստանք:

Ստեփանը ներքուստ հրճվում եր, վոր մեծ գործ ե կա-  
տարել: Իսկ յես մտածում եյի — ինչո՞վ պիտի կարողանամ  
ընկերոջս պարտքի տակից դուրս գար:

— Ծնորհակալ եմ, Ստեփան, — աչքանը միայն կա-  
րողացա ասել, պահելով իմ սրտում խորը հարգանք ու ան-  
ջնջելի մտերմութուն գեպի այդ ազան:

Մուժն ընկել եր, վոր յես տուն հասա:

Խեչոն դռներում կանգնած, սպասում եր ինձ:

— Ազա, Մաղի, եղ ի՞նչ ե րանգդ: Ի՞նչ ե պատահել,  
հո հիվանդ չե՞ս, — անհանգիստ ու զարմացած հարցրեց նա:

— Վոչ մի բան չի պատահել, հիվանդ ել չեմ, — հան-  
գիստ ձեռնալով, ասացի յես:

Բայց նա չհավատաց:

— Սուտ ես ասում, յերևի պրիտմդ փչացրել ես, կամ  
ընկերներդ հեռ կովել: Տեսուչը նկատողութուն ե արել:  
Չգիտեմ, մի բան կա, յես քու աչքերից նկատում եմ:

Իմ աչքերը միշտ ինձ մատնում եյին: Յես այդ զգում  
եյի, բայց նորից կարուկ պատասխանեցի:

— Վոչ մի այդպիսի բան չի պատահել:

Խեչոն տեսնելով, վոր յես համառել եմ, խոսքի տոնը  
փոխեց ե ավելի մեղմ սկսեց:

— Իմացել ե՞ս, վոր թագավորին, են — իրա մայրաքա-  
ղաքում սպանել են...

Հարվածը հասավ իմ ամենացալոտ վերքին: Հիշեցի  
կարցերը ու մի ցնցող սարսուռ անցավ ամբողջ մարմնովս...  
Յերեսս սկսեց այրվել սիրտս ուժգին բաբախել:

— Սպանել են որը ցերեկով, յերբ նա դնալիս ե յե-  
ղել ժամ, աղոթելու իր ամենակարող ասածուն, վոր թա-  
գավորի կյանքին մի մաղ անգամ չկալչի, բայց ասոված նը-  
բան բոմբ ե հրամցրել:

Նա դառը ծիծաղեց ու գայրացած հայացքով նայեց  
ինձ:

— Հը, ի՞նչ ես պապանձվել, այ տղա, իմացել ես թե  
վոչ...

— Վոչ միայն իմացել եմ, այլ դրա պատճառով սև ու

մութ կարցերն եմ ընկել... ու քիչ եր մնում վոր— գողգողացին շրթունքներս, կոկորդս սկսեց սեղմվել, բայց յես ինձ պահեցի:

Նա կայծակնահարի պես տեղից վեր թռավ, աչքերը կրակ՝ անընդհատ նայում եր ինձ:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ յես կարցեր ընկեր:

Յես մի առ մի պատմում եյի նրան. իսկ նա բռունցքներն ամուր սեղմած, շնչարգել լսում, կլանում եր իմ ամեն մի խոսքը, ամեն մի հնչյունը:

Յերբեմն նրա դեմքին ակրում եր վրեժի ցասում, յերբեմն հուզմունք, յերբեմն դառը հեղնանք...

— Են սիրաբ վոր դու ունես, լալա ջան, դեռ շատ մութ կարցերներ, բանտեր ու աքսորներ կընկնես, — ասաց նա ու ավուրմուռայլ հայացքով նայեց ուղիղ աչքերիս:— Բայց մի վախենալ... Յեթե սող մնացինք, վերջիվերջո հաղթանակը մերն է:

Ենպես սրտառուչ եյին նրա եղ խոսքերը, ենպես զգացված ասեց նա, վոր սիրտս լցվեց:

Դուրս յեկա պատշգամբ, միայնակուլթյան մեջ ապաստություն ավի իմ զգացմունքներին:

XVI

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԱՐՎԱԾ

Եզ որբերում գուղոկի ձայն չեր լսվում: Սուգ եր ամենուրեք, սե, խորհրդավոր սուգ: Բոլոր հիմնարկությունները փակ եյին: Միայն յեկեղեցիների զաներն եյին բաց, տերտերներն եյին խաչ-խաչվառներով աղոթում յերկնային արարչին, — սպանվածի հողին լուսավորելու... Զանգերն եյին դողանջում, մուսյ, մեղմազձ: Փանդարմերիան և վոստիկանությունը հսկում եյին ամենուրեք:

Փողոցներում խոսում եյին շուկներով... Կարծես, անուելի փոթորկից հետո սպասում եյին մեծ աղետի...

Խեչոն ել եր՝ անհանդիստ, ինչ-վոր ծանր վառնգ եր

սպասվում: Ինչ եր դա, յես չեյի հասկանում. ինձ համար մի քան պարզ եր, վոր նա իր ընկերների հետ վառնգի մեջ եր...

Դրա հետ ինձ տանջում եր այն միտքը, վոր յես հեռացված եմ ուսումնարանից, վոր պիտի գրկվեմ իմ մանգանից, իմ արկղի գործիքներից, իմ սիրած պրիոմներից, ընկերներից, մանավանդ՝ Ստեփանից:

Գլուխս աստիկ ցավում եր. ամբողջ մարմնով դողում եյի, ծնկներս ծալվում եյին, բայց Խեչոյին բան չեյի ասում: Գիտեյի, վոր նա շուտով պիտի գնա ու ամբողջ գիշերը չպիտի դա:

Մի կերպ թեյի պատրաստեցի. նա մի յերկու բաժակ խմեց ու շտապ գնաց, պատվերեւով, վոր յես տանից դուրս չգամ:

Յես հենց դրան եյի սպասում. շորերս հանեցի ու տեղս մտա: Դողը ջանս եր ընկեր, մրտում եյի, կուչ եյի դալիս, կծկվում եյի վերմակիս տակ, բայց չեյի տաքանում, չեյի հանգստանում: Միտքս ել եր պղտորվել, մտածել չեյի կարողանում: Կարծես մի ծանր քար ճնշում եր սիրտս...

Զգիտեմ վորքան եյի մնացել այդ գրուլթյան մեջ, Արփիկը գլխիս վերեք կանգնած, կանչում եր ինձ: Կարծես խոր անդունդից եյի լսում նրա ձայնը: Աչքերս բաց արի ու մընացի դարմացած. քրտինքի մեջ կորած եյի: Աղջկա ոգնությամբ շաղիկս փոխեցի ու ինձ ավելի լավ զգացի:

— Հիվանդ ես, Մադի, — վախվխելով հարցրեց նա:

— Դողերոցք և, Արփիկ. ես անտեր տենդը մեր դյուրումը կա. կնտեղ ել մեկ-մեկ դողացնում եյի. բան չկա. այ, են արկղում խինայի պարաշոկ կա, տուր խմեմ, կանցնի:

Մխախտտի թղթում խինան փաթաթեցի ու մի կում ջրով կուլ ավի Գիչ հետո տեղիցս վեր կացա, բայց ջանս կոտրավում եր:

— Յես առավոտը վաղ արթնացա. ասի, դնամ Մադնի հետ խաղ սնեմ: Յեկա տեսա, դեռ քնած ես: Ուզում ես նորից պոռկի, յես սենյակը կհավաքեմ, կմաքրեմ:

Արփիկի ներկայությունը բավական եր, վոր ինձ կողդուրված զգայի:

— Վոչ, յես շատ լավ եմ, — ասացի ու մոռացած թե թագաւորին, թե ե՞ն սե ու մութ կարցերը, աշխույժով թեյի պատրաստութիւնն եյի տեսնում: Սեղանն եյի բերել տան բոլոր ունեցածս. Արփիկն ել բերեց կերասի քաղցրավենի:

Նա դառել էր տանտիկին: Բաժակները սրբում էր, գդախները մաքրում, արխները լվանում, խնամքով թեյ էր լցնում ու առաջարկում ինձ. իսկ յես ել իմ հերթին, տան տիրոջ պես, ծանր ու բարակ անելով, շտրհակալութիւնն եյի հայտնում ու յերկուսս էլ քրքշալով, ծիծաղում էյինք մեր կապկութիւնների վրա: Հենց վոր նորից լրջանում էր, յես նրան զայմազ էյի թաւազա անում, նա ինձ՝ քաղցրավենին:

Ուզում էյինք իբր մեծերի դերի մեջ մտնել, բայց դա մեզ չէր հաջողվում: Մանուկ էյինք, հոգով սրտով մանուկ:

Եղ աշխույժի մեջ էյինք, խեղճն յեկավ: Նրա դեմքը դալկացած, հոգնած ու տանջված էր:

Գողութիւնն մեջ բռնվածներէ պես, տեղներէցս վեր թռանք:

— Մաղի, յես ելի մի յերկու որ չեմ գար: Առանց ինձ չախրես: Եսպիսի լավ ընկերուհի ունես, — ասաց նա ու ինչ վոր պատրաստութիւններ էր տեսնում:

— Մի բաժակ թեյ, յեթե կարելի յե, — իր դերի մեջ մտնելով, առաջարկեց Արփիկը:

— Խնդրեմ, ձեր ձեռքով լցրած թեյը շատ համեղ կլինի, որիորդ, — կես հանաքի տալով, կես լուրջ, ասաց Խեչոն, մի աթոս առավ ու նստեց իմ կողքին:

Արփիկը կարմրեց, բայց իրան չկորցրեց, բաժակը նորից լվաց, թեյը խնամքով լցրեց:

— Համեցեք, — հաղիվ լսելի մըմնջաց, բաժակը մեկնեց ու աչքի տակով նայեց ինձ: Յերեի ուզում էր խմանալ իմ կարծիքը:

— Մի բաժակ էլ ինձ, յեթե կարելի յե, — մտնելով դերիս մեջ, ասացի, ավելի շուտ նրա հետ խոսելու, իմ գոհունակութիւնը հայտնելու համար:

— Խեչոն մեզ մոռացել էր... նա ինչ-վոր շտապում էր:

թեյը վրա-վրա յեր տալիս. Արփիկն էլ առատ հյուրասիրում էր նրան:

Քիչ հետո Խեչոն տեղիցը վեր կացավ. գնալու յեր պատրաստվում: Նրա հեռանալն ինձ մտատանջութիւնն մեջ էր գցե: Ո՛ւր է գնում, ինչո՞ւ յե գնում, — եղ հարցերն էյին ինձ տանջում: Գիտեյի, վոր նա հանգիստ մնացողը չե, նրա կյանքը վտանգի մեջ է... բայց ինձ վորոշակի վոչինչ պարզ չէր: Մշուշապատ մտքեր գալիս, անցնում էյին գլխովս, ալեկոծում իմ մանուկ հոգին:

Իրա՞ խեչոյի պատմածներից վորոշ գաղափար կազմել էյի: Նա յերբ խոսում էր, աչքերը վառվում էյին, տեղովը կրակ էր կտրում, բայց այսոր նա հանգիստ էր, և եղ սիրտ սովեց ինձ նրա հետ խոսելու:

— Յես գիտեմ, դու գնում ես բանվորութիւնն մեջ պրոպագանդ անելու... (եղ դարձվածքը յես լավ էյի յուրացրել). բայց զգուշ յեղիբ. վախենում եմ, քեզ հետ բան պատահի. շուտ արի, առանց քեզ ենքան տխուր ե... ենքան տխուր...

— Մաղին ճիշտ է ասում, քեռի. առանց քեզ նա ենքան տխուր ե... ենքան տխուր... վճր, — միջամտեց Արփիկը: Խեչոն կարծես մեզ չէր լսում. նրա ուշքն ու միտքը ուրիշ տեղ էր: Նա մի ըոպե նայում էր մեզ ու նորից խորասուզվում իր մտքի ծովը:

— Դե, յերեխաներ, յես ուշանում եմ, — ասաց նա. թղթերը պահեց ծոցի դրպանում, մի շեշտակի հայացք ձգեց մեզ վրա ու առանց «մնաք բարեկի» դուրս գնաց:

— Տխրեցի՛ր, Մաղի:

— Հա, Արփիկ:

Յերկուսս էլ լուռ էյինք: Արփիկը հավաքում էր սեղանը, յես սենյակն էյի կարգի գցում. ուզում էյի աշխատանքիս հետ մոռացութիւնն տալ ինձ պաշարող մտքերը: Բայց դա ինձ չէր հաջողվում, ուշքս ու միտքս Խեչոյի հետ էր:

Արփիկն ավելը ձեռքիցս խլեց, մի քանի անգամ բոթբոթեց, ուզում էր չարութիւնն անել, խաղալ, բայց դա նրան չէր հաջողվում:

— Ե՛հ, ի՛նչ վատն ես, — ասաց նա ու իրան վերավորված զգալով, խոտվածի պես դուրս գնաց:

Յես ել հենց եղ էյի ուզում: Նրա գնալուց հետո, գըլ-խարկս առա ու ինձ նետեցի փողոց:

Յերբ սիրտս վրդովված եր լինում— ձգտում էյի մենակ լինել, խորասուզվել մտքերիս մեջ...

Տարված եղ խոհերով, ո՛ւր էյի գնում, ինքս ել չգիտեյի: Քիչ հետո ուսումնարանի բակումն էյի:

Վոչ վոք չկար, մենակ դռնապանն եր, վորը մեծ ցախավելով սրբում եր գավիթը:

— Հը՞, ի՛նչի յես յեկել: հո գիտես, վոր քեզ դուրս են արել, — ասաց ու շարունակեց իր ընդհատած աշխատանքը:

Յես առանց ուշք դարձնելու նրան, նստեցի իմ ծառի տակ: Ուսումնարանի շենքը, արհեստանոցը, դասարանը, գավիթի ծառերը, բոլորը հարազատ էյին ինձ: Մի՞թե պիտի զրկվեմ այս ամենից... Ինչո՞ւ յեն ինձ պատժում... Յես ի՛նչ եմ արել, ի՛նչ ե իմ մեղքը, — մտածում էյի յես:

Մեկ ել տեսա, տեսուչը, կաշվե պինջակը հագած, վորս սորդական հրացանը ուսին, փամփուռահալը մեջքին, իր «Թագի» շան հետ դուրս յեկավ գավիթ:

«Յերեի վորսի յե գնում», — մտածեցի յես, տեղիցս վեր թռա ու մնացի կանգնած:

Տեսուչը զբաղված եր իր շնով, հրացան, վառող ու փամփուռաներով:

— Թո՛մա, — դառավ նա դռնապանին, — տանը, սեղանի վրա մոտացա իմ պաշարի փաթեթը. գնա աղախնին առսա, թող բերի:

Ինչո՞ւ ինձ չի նկատում: Վոտքերիս ծայրերով մի քանի քայլ արի առաջ:

Շունը դուաց, նա ավելի շուտ նկատեց, քան իր տերը: Եզ դռուցի վրա տեսուչը գլուխը բարձրացրեց ու մնաց զարմացած:

— Դու ետեղ ի՛նչ ես շինում, — բարկացած հարցրեց նա:

Շունն ել իրա հերթին ավելի կատաղի դուացրեց ու մի յերկու բերան ել հաջեց:

Յես մնացել էյի տեղս սառած, քար կտրած... Եզ միջոցին սղնության հասավ ինձ տեսչի աղախինը:

— Խեչումյանը ինձ մոտ ե յեկել, յես էյի կանչել նըրան:

— Դու արձակված ես ուսումնարանից, — դառավ ինձ տեսուչը. մանկավարժական խորհուրդը քննության առավ քո արարքը և վորոշեց դուրս անել քեզ ուսումնարանից: Յերբ ուսու՛ր սկսվի, կգաս, գործիքներդ կհանձնես, վկայականներդ կստանաս, ու ազատ կլինես քեզ համար, հասկացա՛ր:

Յես ենքան էյի շփոթվել վոր վոչ մի բան չկարողացա արտասանել:

Նա շուտով մոռացավ ինձ, ու զգուշությամբ հանում եր շան վոտի փուշը: Նրան ավելի շուտ հետաքրքրում եր շունը, քան իր ուսումնարանի դարիբ սանը:

Աղախինը փաթեթը տեղավորեց պայուսակում ու կողքովս անցնելիս, հազիվ լսելի, ասաց.

— Արի անպատճառ ինձ մոտ...

Այդ յերկու բառը ինձ սիրտ տվեց: Առանց տատանվելու, տեսչի հեռանալուց հետո բարձրացա պատշգամբ, դուռը բաղխեցի:

Իսկույն ինքը յեկավ ու ինձ ներս հրավիրեց: Նա անընդհատ նստում եր յերեսիս: Յես աչքերս խոնարհել էյի ցած, մնացել էյի անորոշ դրության մեջ կանգնած...

— Ինչո՞ւ յե գույնդ եղպես թռել. հո չես հիվանդացել:

— Չերմում էյի, խինա խմեցի, հիմա լավ եմ:

— Ինչպես տեսուչը հայտնեց, վորոշումն արդեն կայացել ե. վարպետը քո կողմն և յեղել. նա ասել ե, վոր դու ուսումնարանի աչքն ես: Տեսուչն ել դեմ չի յեղել... բայց քահանան պնդել պահանջել ե, վոր քեզ հեգացնեն: Գնա, դիմիր նրան, ներողություն խնդրիր, նա մեր հոգևոր հայրն ե, նա շատ բարի ու խղճով ե... անշուշտ կների քեզ:

— Չեմ գնալ. վոր մեռնեմ, չեմ գնալ, — ասացի յես և դայրույթս հազիվ զսպած, գլխարկս առա, ուզում էյի դուրս գնալ:

— Սպասիր, ինչ ես շտապում, — աշխատում եր հանգստացնել ինձ, մայրական քարոզ եր կարգում գլխիս:— Մի դատարկ խոսք ե... «Տեր հայր, ներեցե՛ք...ել չեմ անի» ասա ու պրծի: Պահպանիչ կասի, թողութուն կտա ու ամեն ինչ կուղղվի: Ինչ կն եստեղ, վոր եղքան դժվարանում ես: Յես չեմ կարողանում ըմբռնել, ինչ՞ու մի այդպիսի անմեղ, դատարկ բան չես ուզում կատարել: Նա նորից ու նորից պընդում եր, վոր յես գնամ ներողութուն խնդրեմ:

«Չարմանալի յե մեր մեծերի տեսակեսը. նրանք մանկական հոգին չեն ըմբռնում, չեն հասկանում, չեն զգում, վոր մանուկների համար դրանից ծանր, դրանից դաժան խնդիր դժվար ե յերեակայել... Ինչպես ուզում ես պատժիր, ծեծիր, ապտակիր, բայց մի ասել՝ «գնա, ներողութուն խընդրիր...»:

«Նուրբ ե եղ հասակում մանուկը, անաղարտ են նրա զգացմունքները, հպարտ ե նրա հոգին, քնքույշ ե նրա սիրտը, ամբիժ ու հուզումնալից են նրա ապրումները...»

«Այդ չեն ըմբռնում մեր մեծերը, մեր դաստիարակները: Այդ չեն գնահատում նրանք մանուկների մեջ: Ընդհակառակը, նրանք ճնշում են գործ դնում, ուզում են դեռ աչք չբացարած որից թունավորել, խեղաթիւրել նրանց մատաղ կյանքը...»:

— Չեմ գնալ... չեմ գնալ, վոր մեռնեմ... — կարուկ պատասխանում եյի յես իմ կարեկից «մորը»...

— Քո փոխարեն ուզում ես յես ներողութուն խընդրեմ, — ասաց նա հուսահատ:

Յես նորից պատրաստվեցի դուրս գնալու:

— Սպասիր, այ տղա. ինչ ե պատահել քեզ, — բարկացած խոսեց նա:

— Տենդա բռնել ե, պետք ե գնամ պահելեմ, քրտնեմ, վոր անցնի, — ատամ-ատամի տալով ասացի յես ու պատրաստվեցի դուրս գնալու:

— Ի՞նչ ե, թշնամու տանն ես, — ասաց նա, մոտեցավ, յերակս բռնեց, ձեռքը դրեց ճակատիս, կարեկցաբար նայեց:

Ինչ եր նա մտածում, չգիտեյի. իսկ յես շատ վատ եյի... գլուխս չեյի կարողանում ուսերիս վրա պահել: Պահել եյի ուզում — նույն իսկ հատակին — միայն թե թողնեյին ընկնելի ցած...:

Կարծես նա այդ զգաց. ձեռքիցս բռնեց, տարավ ինձ իր սենյակը:

— Պահելի, հանգստացիր այստեղ:

Առանց դիմադրելու, հենց շորերով ընկա չոր թախտին, գլուխս դրի մութաքին ու գնգ-գնգալի սկսեցի գողացնել:

Նա մի վերմակ գցեց վրաս. յես կուշ յեկա, կծկվեցի ու մտքումս անիծում եյի ինձ, վոր յեկել եյի. քիչ հետո դողս անցավ. այժմ տաքության մեջ այրվում եյի:

— Թող եղ տերտերի յերեսը չտեսնեմ, չեմ ուզում, — գոռում եյի յես, ամոթխածութունս կորցրել. իմ ուր լինելս մոռացել...—Չուր ավեք ինձ, —հրամայում եյի շուտ-շուտ: Վերմակը գցում եյի մի կողմը, ուզում եյի վեր թռչել՝ դուրս փախչել. ծնկներս ծալվում եյին, գլուխս պտտվում:

Սեղձ կինը շուրջս դառնում եր. գլխիս սառը քաթան եր դնում, յես դա դեն եյի շարտում. դարձել եյի հանդուգն ու ստահակ:

— Ինչ՞ու չթողեցիք, վոր գնամ, ինչ՞ու պահեցիք: Չեզ համար ծի վորսի «թաղին» ավելի բարձր ե, քան մի խեղճ յերեխա...:

Յես ելի շատ բաներ եյի ասում. չգիտեմ, ավելի շուտ յես չեյի խոսողը, այլ իմ բողոքող, իմ սանձարձակ հոգին եր ըմբոստացել:

Վոչ մի համեստութուն, վոչ մի քաղաքավարութուն գոյութուն չուներ ինձ համար, յերբ տաքության մեջ եյի լինում:

«Իեկը» տալով, եղ դրության մեջ քնել եյի: Յերբ աչքերս բաց արի, յես ինձ թեթևացած զգացի. տեղիցս վեր թռա, վտաքերիս ծայրերով մոտեցա դռներին: Ուզում եյի աննկատելի դուրս ընկնել ու փախչել:

Իռուն ամուր փակած եր. սենյակը պատուհան ել չու-

ներ, վոր դուրս թուչեցի: Մտիպված դուռը բաղխեցի: Լսվեց  
վտաքերի ձայն: Աղախինն եր:

— Վոնց ես, Մարի. դու ինձ ենթես վախեցրիր. են-  
պիսի խոսքեր էլիք ասում տաքությանդ մեջ...

— Ներողություն եմ խնդրում իմ ասած ավել-պակաս  
խոսքերիս համար, — դուխս խոնարհած ասացի յես ու ու-  
զում էլի դուրս գնալ:

— Խեղճման, յեկ այտեղ, — լսեցի հարեան սենյա-  
կից քահանայի բամբ ձայնը...

Ներքին հուզմունքս պահած, անցա դահլիճը, ուր բազ-  
կաթողին փառավոր նստած եր քահանան. իր անբաժան  
վոսկե խաչը կրծքին, տերողորմյան ձեռքին, աչքի տակով  
զննում եր ինձ:

Աղախինը պատկառանքով նայեց տեր-հորը, ապա դուռ-  
նալով ինձ, ասաց.

— Խեղճման, տեր-հայրը այնքան բարի յես, վոր պատ-  
րաստ ե քեզ ներել... Ինչ չոքիր նրա առաջ, ներողություն  
խնդրիր, սուբբ աջը համբուրիր և ամեն ինչ կվերջանա:

Նա մաղերս շոյեց, ձեռքիցս բռնեց, ուզում եր չոքեց-  
նել տեր-հոր առաջ:

Նա ել «սուբբ աջը» պատրաստ՝ պահել ել, վոր պահ-  
պանիչ ասի, ու թողություն աս իմ չեղած մեղքերի համար:

Յես մի ուժեղ ցնցումով ձեռքս ազատեցի, ուզում էլի  
հեռանալ:

Քահանան զգալով իմ միաքը, հանդարտ ու հանդիսա-  
վոր սկսեց մի մեծ քարոզ կարգալ դիխի:

Ել բարություն, ազնվություն, վեհություն ասես, վոր  
չչոայեց: Հարգանք, պատիվ դեպի մեծերը, ուսուցիչը, դաս-  
տիարակները, հոգևոր հայրերը... խոնարհ՝ դեպի ծնողները...  
հեզ՝ ինչպես ասածու գառը... ու եղպես ճարտար լեզվով խո-  
սում, խրատում եր, վորից յես շատ բան չէլի հասկանում:

— Դու, վորդի, հայնոյել ես թագավորին, դա շատ մեծ  
մեղք է: Յերկնքում ամենահզորն աստվածն է, յերկրիս վրա՝  
մեր տեր ու տիրակալը—վողորմած, զթառատ թագավորն է.  
եսպես հանդիստ, խաղաղ վոր ապրում ենք, ձև ենք պար-

տական: Յեզ դու ասերախտարար, դասարանի առաջ, ա-  
սել ես՝ «պետք չե մեզ թագավորը»... Գիտես, դա ինչ հան-  
ցանք է:

Նրա եղ ձառի ազդեցության տակ, դուխս, յերեսս տա-  
քացավ... կարծես տաքությունս նորից բռնեց... հիշեցի Խե-  
չոյի ասածները, հիշեցի մեր գյուղում յեղածս որերը... Լե-  
զնս բացվեց:

— Թագավորը կտո ու բեգարի, խարջ ու մասրափի,  
նաչալնիկ-պրիստավի, քոխվա-քեղխուղայի համար ե... Ահա  
են քու վողորմած թագավորը, տեր-հայր... Մենք, առանց  
նրան ել կապրենք,—ասացի ու դուրս գնացի:

Եզ յերկու որը տանից դուրս չեկա: Ամբողջպես տար-  
ված էլի իմ վիճակով: Այժմ արդեն դատում էլի սառը... Իս-  
կապես անմխիթար եր դրությունս: Միակ մարդը Խեչոն եր,  
վորին կարող էլի բանալ սիրաս. նա ել թարսի պես չեր  
գալիս... Արփիկն եր իմ ընկերակիցը, բայց նա շատ եր յե-  
րեխա, ավելի շուտ խաղալ եր ուզում, անմեղ, անհոգ, ա-  
ռանց ըմբռնելու իմ տանջանքները...

Ուզում էլի մենակ մնալ... Ամբողջ ժամանակ մտածում  
էլի ուսումնարանի մասին. իմ կիսատ թողած պրիմը աչ-  
քիս առաջից չեղ հեռանում:

Ստեփանը, դասարանային ընկերներս, շարան-շարան  
գալիս, կանդնում էլին անաջա... Նրանք բոլորը միաբերան նա-  
խատում էլին ինձ... գտնում էլին ինձ հանցավոր: Բայց իմ  
փոքրիկ ուղեղը չեր հաշտվում եղ մաքի հետ. արեկոծում,  
տանջում եր ինձ... Ինչո՞ւ, ինչո՞ւ յես իմ մանկական թոխք-  
ներով ազատ չպետք է լինելի...

XVII

ՄԱՆԿԱԿԱՆ ՅՈՒԶԲ

Վերջապես չորբորդ որը, լուսաբացին, լավեց գուզովի  
կանչը: Նա իր ներդաշնակ դողանջով կենդանություն եր  
տալիս քաղաքին:

Տեղիցս վեր թռա, աչքերս կթեցի Խեչոյի մահճակալին,  
բայց նա բացակայում եր. մենակ էլի:

Ուրիշ անգամ եղ դողանջը վազկտրում եր ինձ, բայց այս առավոտ, ավելի շուտ տխրություն պատճառեց...

Մոլոր քայլերով գնում եյի դեպի ուսումնարան, վոր գործիքներս հանձնեմ, վկայականներս ստանամ ու... ու, ինքս ել չգիտեյի ի՞նչ կանեմ, ուր կգնայմ:

«Յերեկ վերջին անգամ եմ գնում ուսումնարան», — մըտածում եյի յես... ու եղ միտքը ճնշում եր ինձ:

Ուսումնարանի գավիթը լցվել եր աշակերտներով: Նըրանք ուրախ-զվարթ, սովորականի պես, ասում, խոսում, թուչկոտում, քրքրում եյին, կարծես վոչինչ պատահած չըլիներ:

Չանգը տվին, ամեն մեկը բռնեց իր տեղը: Տարածվեց գործիքների շառաչյունը: Բոլորը լարված աշխատում եյին, մենակ յես եյի կանգնած: Գործիքներս հանել շարքով դարսել եյի, կողքին ել կիսատ պրիումը ու մնացել սպասողական դրության մեջ, վոր վարպետը գա, գործիքներն ընդունի և ինձ ճանապարհ գցի...

Դասարանի ընկերներիցս մենակ Ստեփանն եր տխուր-մյուսներն անտարբեր եյին, Տեր-Պողոսյանն աչքի տակով մեկ-մեկ նայում ու չեր կարողանում զսպել իր հրճվանքը...

Յես վոչ վոքի հետ չեյի խոսում, նույն իսկ Ստեփանի հարցերին չեյի պատասխանում: Անտանելի վիճակ եր ստեղծվել ինձ համար: Սպասում եյի վարպետին, բայց նա, կարծես դիտմամբ, ներս ու դուրս եր անում ու չեր մոտենում ինձ...

Նախաճաշի գանգը տվին: Բոլորը դուրս վազեցին... նորից յեկան, իսկ յես մնացել եյի տեղս մեխված...

Մի վայրկյան մտքովս անցավ «գնամ կանչեմ վարպետին»... բայց կանգ առա, չեյի համարձակվում... քաշվում-ուստիպառում եյի այդ մարդուց: Համբերությամբ լցված, բավականանում եյի միայն հեռվից նայել ու հետևել նրա բոլոր շարժվածքներին: Նա մի անգամ ինձ խիստ-խիստ նայեց, դուրս գնաց ու յերկար ժամանակ չեր յերևում:

Ճաշվա ժամը մոտենում եր. յես հուսահատ, չգիտեյի ի՞նչ անեյի, ում դիմեյի:

վերջապես վարպետը յեկավ արհեստանոց ու ուղղակի մոտեցավ ինձ:

Սիրտս թռավ, յես անաբեկված նայեցի նրա յերեսին: Ելի են սովորական վարպետն եր, մի մազ անգամ չեր փոքվել նրա դեմքից:

— Ի՞նչ ես գործիքներդ շարել ու մնացել կանգնած, ինչո՞ւ չես աշխատում:

Մի վայրկյան շվարել եյի. չգիտեյի ինչ պատասխանեմ...

— Յես... յես... դուրս եմ արված դպրոցից, — հուզմունքս հազիվ պահելով, ասացի:

— Աշխատիր, աշխատիր. վոչ վոք դուրս չի արել քեզ, — ասաց ու իր ձեռքով պրիումն ամրացրեց մանգանին, մի քանի ցուցմունքներ արավ, խարտոցը մեկնեց, հրամայեց գործի անցնեմ:

Դողդողալով խարտոցն առա, բայց չեյի վստահանում, չեյի համարձակվում պրիումին մոտեցնել:

— Դուք չգիտեք, ինձ տեսուչը արձակել ե, նա ասաց, վոր ետը գամ, գործիքներս հանձնեմ ձեզ, — մրմնջացի յես, արցունքներս կուլ տալով:

— Վոչինչ, վոչինչ... Յես տեսչի հետ խոսել եմ, նա ել ե համաձայն, վոր դու աշխատես:

Յես ենքան եյի հուզված, վոր չկարողացա իմ խորին շնորհակալությունը հայտնել... Միայն յերախտազետ հայացքով նայեցի նրա բարի աչքերին ու գլուխս խոնարհեցի ցած:

Նա իր կոշտ ձեռքերով մազերս շոյեց ու գնաց:

Գործիքներս նորից տեղավորեցի արկղումս ու իմ աշխատանքի շառաչյունը խառնվեց ընդհանուրին հետ:

— Մաղի, շնորհավորում եմ, — ասաց գոհ սրտով Ստեփանը:

Մեր հայացքներն առան իրար և այդ հայացքների մեջ կար ջերմ, ընկերական հարազատություն:

Չանգը տվին, աշխատանքը դադարեց: Եւ որը մենք դասարանային պարապմունքներ չունեյինք:

Յես շատ գոհ եյի, ենքան խորն էյին եզ որվա իմ հոգեկան ապրումները, վոր ուզում եյի ամբողջապես ամփոփված լինել ինքս իմ մեջ: Վարպետը աչքիս առաջից չեք հեռանում. նրա այն պայծառ դեմքը գերել-կաշկանդել եք ինձ: Իմ հարգանքը դեպի նա ավելի յեր խորացել: Իմ ուղեցույց փարոսը նրա մեջն էյի յես տեսնում:

Տանն անհամբեր սպասում եյի Խեչոյին, վոր դա առեմ, խոսեմ, սիրաս բանամ, բոլորը պատմեմ ու հանգստանամ: Բայց յերը Խեչոն յեկավ, այդ բոլորը չքացան, կորան: Մի քանի խոսքով հայտնեցի, վոր վարպետը նորից ընդունեց ինձ:

Իմ ասածները վոչ մի ազդեցություն չունեցավ նրա վրա... Նա կարծես այդ բոլորը ինձանից առաջ գիտեր:

Հետո, շատ հետո միայն իմացա, վոր վարպետը յեղել է Խեչոյի մոտ ընկերներից, վորոնք գաղտնի դործելիս են յեղել միասին:

## XVIII

### ԴԱՍԱՐԱՆԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

Հեռեկալ առաջնորտ յես տխուր ու մտազբաղ մտայնացա գասարանին: Հեռվից լսվում եք աշակերտական, ինձ սովոր աղմուկը:

Հենց վոր դուռը բաց արի, աղմուկն իսկույն դադարեց: Բոլորը նայում էյին ինձ իբրև մի մեծ հանցանք գործածի: Վրոմանց հայացքի մեջ նշմարում էյի հեգնանք, վրոմանց՝ տհաճութուն, մյուսների դեմքերին՝ խղճահարության նշան մի բան:

Ներքուստ թեև հուզված, բայց սովորականի պես հանդարտ անցա իմ տեղը, դասագիրքն առա, սկսեցի թերթել:

Դուռը բացվեց. իր հաղթ հասակով, սև, յերկար փարաջայի մեջ պարուրված, խրոխտ հայացքով, յերկաց քահանան:

Մենք ըստ սովորականի իսկույն վրոտի կանգնեցինք:

— Խեչումյան, աղթք ասա, — դառավ ինձ, ու այն-

պես խիստ-խիստ նայեց ինձ, վոր յես ակամայից աչքերս խոնարհեցի ցած, ու առանց շտապելու սկսեցի «հայր մերը»:

Յերբ աղթքը վերջացրի, աղաները բոլորը նստեցին. յես մնացել էյի կանգնած:

— Դուքս յեկ գրատախտակի մոտ:

Իսկույն կատարեցի նրա հրամանը:

Տղաները մերթ ինձ էյին նայում, մերթ քահանային. տիրում եք խորին լուռթյուն:

«Ինչո՞ւ ինձ կանչեց, ի՞նչ է ուզում նա ինձանից», — եզ մտքերով տարված, մնացել էյի սպասողական դուռթյան մեջ:

Քահանան միրուքը շփեց. մազերն ուղղեց. աչքերը լայն բացած, դառավ դասարանին.

— Դե, գյուղացի, խեղճ տղա յե... անտեր, անտիրական... Հենց դա յեր պատճառը, վոր մենք ներեցինք նրան:

Ապա նայելով ինձ, սկսեց ծանր ու բարակ հանդիմանական խոսքերով նկատողություն անել:

— Սրանից հետո խելքդ գլուխդ հավաքել, փոքր չես, 13—14 տարեկան տղա յես. ամեն ինչ պետք է հատկանաս, գիտակցեա: Քո եզ ըմբոստությունը կկործանի քեզ. հարկավոր է լինել խոնարհ ու հեղ, գնա նստիր տեղդ:

Եզ խոսքերի վրա սիրտս սկսեց բաբախել, յերեսս այրվում եք, ախանջներս խշշում: Տեղս կանգնած, ամբողջ մարմնով զոզում էյի. հազիվ էյի ինձ գտալում:

Նա նորից կրկնեց, վոր գնամ նստեմ տեղս:

Յես տեղիցս չէյի շարժվում, համառել, մնացել էյի կանգնած: Ինձ թվում եք, վոր նա դուքս կանի դասարանից ու դա կլինեք իմ սրտովը:

Բայց դուքս յեկավ հակառակը. նա ավելի մեղմացած, դարձավ ինձ.

— Խեչումյան, ետրվա դասդ գիտեա:

— Այո:

— Դե գիրքդ առ, կարդա ու պատմի:

Եզ որվա մեր դասը «Հին տունն» եք, վոր սկսվում եք հեռեկալ սողերով.

«Կանգ առ, վարպետ, մի քանդիր. իմ սլապերն ու տատերն են ապրել այդտեղ... Հին տունը թող մնա կանգուն, իմ նախնիքների սրբությունն է դա...»:

Ընթերցումը մի կերպ ավարտեցի. սկսեցի բովանդակութունը պատմել, բայց դա ինձ չեք հաջողվում, տեղ-տեղ կանգ եյի առնում, միաքս ցրվում եք հեռուները. մեր գյուղը, մեր տները: Իսկ նա կարծես դիտմամբ, ուզում եք մի ժամում ջախջախել իմ ըմբոստ հոգին... Յեղ ցավը սա յեք, վոր ամբողջ դասարանն ել նրա կողմն եք, նրա բոլոր ասածներին միաձայն հավանութունն եյին տալիս: Յես մնացել եյի մենակ:

— Կողքը հաստ դադախեցի ա, տեր-հայր, — ասաց Տեր-Պողոսյանը:

Տղաները քրքջացին. քահանան ժպտաց. բայց նա իրան պահել գիտեր:

— Լոեցեք, — նկատեց տղաներին քահանան ու նորից գիմեց ինձ.

— Համառելը վատ բան է, Խեչումյան. կյանքի մեջ պետք է գիշող լինել. յեթե վոչ շատ կհալածվիս:

Այդ դասը թեև շատ ծանր եք ինձ համար, բայց գոհ եյի, իմ հոգին պարզվեց ուսուցչիս առաջ... նա ճանաչեց իմ եյությունը... եղ որվանից նա ինձ հետ ավելի մտերմացավ և զարմանալին սա յեք, վոր տեսուչն եք, վարպետն ել եյին փոխել իրենց կարծիքը. բարի աչքով եյին նայում ինձ...

— Լավ պրծար, Մադի, յես կարծում եյի տեր-հայրը տեսչին կկանչե, դուրս կանե քեզ դասարանից, — ասաց Ստեփանը:

— Իսկ ինձ թվում եք, վոր նա հետս չեք խոսի... յեք եսիս անգամ չեք նայի, բայց տեսար, ամբողջ դասը ինձ հետ եք...

Նորից դանգ, նորից դասարան:

Թվաբանության ուսուցիչն ել կանչեց ինձ գրատախտակի մոտ:

— Խեչումյան, լուծեցեք խնդիրը (նա սովորութունն ունեք աշակերտների հետ «գուք»-ով խոսելու). թեև եզ խըն-

դերը շատ դժվար եք, բայց յես սրտապնդած, մի շնչում լուծեցի ու բացատրեցի աշակերտներին: Ուսուցչիչս գլխով դըբական նշաններ եք անում, իսկ դասարանը լուռ լսում, դըբում իր տետրերում:

— Նստեցեք, — լավեց նրա լակոնական հրամանը:

Անցա իմ տեղն ու զարմանում եյի, վոր վոչ մի նշույլ վոչ մի ախնարկ՝ իմ դուրս արված լինելուս համար: Նա շատ հանգիստ նոր դասեր տվեց, բացատրեց խնդիրներն ու դասը վերջացավ:

Եղ գեպքից հետո վորոշ գիրք եք ստեղծվել ինձ համար... Աշակերտությունը հարգանքով եք վերաբերվում դեպի ինձ... Տեր-Պողոսյանը նոյն իսկ աշխատում եք մտերմանալ ինձ հետ:

Յես ինձ պահում եյի հասարակ ու պարզ... իմ սրտում վոչ մի վոխ, վոչ մի քեն չկար...

Կարցերը լավ դաս եք ինձ համար: Կարցերային բովեց դուրս գալուց հետո, զարձել եյի ավելի կտրուկ, տուկուն կամքի տեր ու համարձակ:

Միտքս սրվել եք, հայացքս պարզվել, իրերին նայում եյի ավելի լուրջ ու քննադատորեն...

«Ախ, ինչ կլինեք Խեչոն ինձ մի փոքր մեծի տեղ դներ, ամեն բան պատմեք, ասեք իր պրտի գաղտնիքները...», — մըտածեցի յես, բայց միևնույն ժամանակ վախեցա իմ այդ մտքերից...

Չգիտեմ ինչո՞ւ, իմ հասակակից յերեխաների նման չեյի ձգտում մեծերի դերում լինել... վոչ միայն այդ, այլ չեյի ուզում զրկվել թեև տանջալի, բայց իմ յերագուն մանկությունից, յեթերային հույզերից և ընկնել պատանեկության գիրկը:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Այժմ, յերբ հիշում եմ այն յերագուն որերը, վարով  
մնվել շնչել ե իմ մանուկ հոգին, յերբ հիշում եմ վուսկեշող  
արցունքներով ցողած առավոտները, սիրտս լցվում, ծանր  
թախիժը գալիս, պատում ե ինձ...

Ա՛հ, ինչպես եմ նախանձում կայտառ մանուկներին,  
վոր մեր վերելքի այս հոյակապ ճամբին առաջին շարքերի  
մարտնչողների բախտը նրանց ե վիճակված...

... Կուզեյի նորից ապրել, նորից հուզվել, գոնե մի  
վայրկյան թռչեյի նրանց հետ բարձրաբերձ լեռների հաղթա-  
կան գագաթները. կուզեյի մեր այս պայքարի ովկիանում,  
խավարը ձեղքեյի ու խորհրդային լուսարացի շողերով դար-  
դարեյի մեր արթնացած չքնաղ յերկիրը...

Որեր հաջորդեցին իրար, տարիներ անցան, տանելով  
իրանց հետ ե իմ սիրտը, ե իմ զգացմունքներն ու իմ ամ-  
բողջ ապրումները...

Բայց յես այդ անցած խավար որերի մշուշի մեջ պա-  
հեցի ինձ հարազատ մի լուսատու գլիժ, մի փայլուն եջ, վոր  
գարնան շնչի պես գուրգուրում, սփռվում ե ինձ:

Դա իմ մանկութունն ե, վոր նվիրում եմ ձեզ, սիրելի  
ընթերցողներ:

Յեթե այս զրվածքը կարողանա ձեր աչքերից յեր-  
ջանկության մի ցոլք քամել յես ինձ բավարարված կհա-  
մարեմ...

Յ Ա Ն Կ

	Յերես
I Իմ սիրտը . . . . .	3
II Մեր սարերը . . . . .	7
III Զրադացը . . . . .	10
IV Իմ փախուստը . . . . .	21
V Քաղաքում . . . . .	35
VI Արհեստավորաց ուսումնարանում . . . . .	43
VII Յերկրորդ պրիումը . . . . .	49
VIII Իմ ուսուցիչները . . . . .	56
IX Մրցում . . . . .	59
X Արփիկը . . . . .	65
XI Բնության ծոցում . . . . .	72
XII Խեչոն . . . . .	77
XIII Ալեքսանդր II թագավորի սպանությունը . . . . .	82
XIV Դառը հացը . . . . .	90
XV Յավոտ վերքը . . . . .	92
XVI Ուսումնարանից դուրս արված . . . . .	94
XVII Մանկական թռիչք . . . . .	103
XVIII Դասարանի պարապմունքները . . . . .	106
Վերջաբան . . . . .	110

## Յ Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Հայ պրոլետարական գրականութեան նախահարապետներից մեկի՝ Մաղաթ Պետրոսյանի գերը հայ գրականութեան մեջ հարկավոր չափով դեռ չի ընդգծված: Մեր քննադատութեանը չափազանց ժլատ վերաբերմունք է ցույց տվել Մ. Պետրոսյանի ստեղծագործութեաններին: Մինչդեռ Մ. Պ. հայանի դեմք է հայ գրականութեան մեջ, վորպես պրոլետարական բանվոր գրող, ունի համապատասխան գրական վաստակ և հայանի յի ընթերցող հասարակութեանը:

Անցկացնելով իր գեղեցիկ մանկութեանը Ղազարի բարձրաբերձ լեռների ու անտառների մեջ, պատանեկութեանը Թիֆլիսում, սկսելով իր գրական գործունեությունը 1903 թ. բանվորական շրջանում, նա վորպես պրոլետարական գրող կանգ չի առել կես ճանապարհին ու ժամանակի ընթացքում տվել է իրեն հատուկ պարզութեամբ ու զգայունութեամբ մի շարք գեղարվեստական պատմվածքներ 1905 թ. հեղափոխականների կյանքից («Բանտում», «Կասպույտ շապիկը»): Այնուհետև Մ. Պետրոսյանը իր պատմվածքներին յերեք հատորներում զբաղատել է բանվոր դասակարգի կյանքը պայքարը, աշխատանքը տաժանակիր պայմաններում, աշխատավոր գյուղացիության անտանելի ու չքավոր վիճակը ցարիզմի լծի տակ, մի շարք մանկական պատմվածքներ և այժմս էլ լույս է ընծայում իր հիշողութեանները՝

«Մանկություն», ապա լույս կտեսնի «Պատանեկություն» և «Յերիտասարդություն»:

Մ. Պետրոսյանի ամբողջ ստեղծագործությունը իր կյանքի, աշխատանքի, պայքարի և քաղցր հիշողություններով հարուստ մանկության-պատանեկության արգասիքն է: Նա չի տարվում մեծահատոր վեպերով, չի զարդարում արհեստականորեն համեմատություններն ու պատկերները, վռճն ու լեզուն: Մ. Պետրոսյանը գրում է պատմվածքներ իրեն հատուկ պարզությամբ, բայց այդ պարզությունը տպավորիչ է և հուզիչ, ազդեցիկ է և դաստիարակող, գեղարվեստական է ու բնական, և այս բոլորի միջով՝ գրվատվում է աշխատանքի հաղթանակը, բանվոր դասակարգի ու աշխատավորական խավերի ձգտումներն, ընդվզողուններն ու բողոքը կապիտալիստական դաժան կարգերի դեմ: Այն պրիմիտիվությունը գեղարվեստական ձևերի ու գաղափարախոսության մեջ, վոր նկատվում են Մ. Պետրոսյանի նախկին ստեղծագործություններում, պատմականորեն միանգամայն անհրաժեշտ յերևույթներ են բարձրացող դասակարգի կազմակերպվող գրականության համար:

«Մանկություն» վերնագիրը կրող ներկա հիշողությունների մեջ Մ. Պետրոսյանը նկարագրում է կապիտալիզմի նեխված իրականությունը, թշվառությունը, անծայրածիր տգիտությունը և ստեղծված անելանելի վիճակն աշխատավոր մարդկանց համար: Գյուղի համատարած թշվառության ու տգիտության մեջ տառապող մանկան սրտում, հրավառ բոցի նման մի միտք է ծագում — գնալ քաղաք ուսանելու: Յեվ չնայած թշվառ ու խավարի մեջ խարխափող ծնողների թախանձանքներին, հանդիմանություններին ու

մանկության որերի հետ կապված հիշողություններին, ուսման տեսչը հաղթահարում է ու թողնելով ծնողների քաղցր գուրգուրանքներով լի գիրկը, հարազատ ու սիրասուն լեռները, աղբյուրներն ու անտառները, Մ. Պետրոսյանը փախչում է Թիֆլիս: Կապիտալիստական գյուղի թշվառ միջավայրից պոկվելով Մ. Պետրոսյանն ընկնում է կապիտալիստական քաղաքի դաժան ու անտանելի միջավայրը: Կարծվելով հարազատներից Մ. Պետրոսյանն ընկնում է ավելի վատթար վիճակի մեջ, վորը նրան հասցնում է կատարյալ հուսահատության: Սակայն, զրկանքների, արցունքի ու տառապանքների մեջ նա շարունակում է իր գործը համառորեն, նրան դասախարակում և քաջալերում է իր բարեկամ բանվոր խեչոն և նա հաղթահարում է բոլոր այդ դժվարությունները:

Անկեղծությամբ ու պարզությամբ համակված «Մանկությունը» կարգացվում է չափազանց մեծ լարվածությամբ և հետաքրքրությամբ: Քաղցր է ծերունի գրողի հավար իր մանկությունը, քաղցր է, վորովհետև անվերադարձ է: Մանկության քաղցր հիշողությունները յերբ գարկվում են գրողի սրտի լարերին, նա չափազանց քնքույշ լիրիզմով տալիս է իր հոգեկան ապրումները, հարազատներին և զազրելի կապիտալիստական շրջապատը:

Խորհրդային յերկրի պայծառ արևի տակ ապրող մանուկները պետք է ծանոթանան այս գրքի հետ: Պետք է ծանոթանան, վորպեսզի համեմատեն կապիտալիստական գյուղի և քաղաքի դաժան, անմխիթար, տգետ ու անհույս, տխուր ու զազրելի իրականությունը, այժմյան պայծառ,

Կենսալից մարդկութեան լավագույն հեռանկարներով, գաղափարներով լի իրականութեան հետ:

Հուսով ենք, վոր մեր քննադատութիւնն այս գրքի լռյս տեսնելուց հետո կտա բանվոր դասակարգի ծոցից ծնված առաջին հայ արձակագրի՝ Մ. Պետրոսյանի ստեղծագործութիւնների ծավալուն քննադատութիւնը, տալով նրբան իր արժանի տեղը խորհրդային հայ գրականութեան մեջ:

Վ. ԱՏՐՅԱՆ

1935 թ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս



ԳԻՆԸ 3 Ռ.



М. ПЕТРОСЯН

**Детство**

(На армянск. яз.)

Издание Груз. ГИЗА

Тифлис

1935 г.

« Ազգային գրադարան »



NL0365146

50782

